



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45 46 47 48 49 50 51 52 53 54 55 56 57 58 59 60 61 62 63 64 65 66 67 68 69 70 71 72 73 74 75 76 77 78 79 80 81 82 83 84 85 86 87 88 89 90 91 92 93 94 95 96 97 98 99 100

- 1.— Գ. ԷՄԻՆ Սիամանթայի մեմախօսութիւնը
- 5.— Բ. ԵՂԻԱՅ ԵԱՆ Խորենացիին՝ Սիամանթայի
- 11.— * * * Կորուստներ ու կսկիծ...
- 13.— * * * Արամ Հայկազ
- 14.— Ա. ՀԱՅԿԱԶ Հանդիպում մը
- 23.— * * * Մկրտիչ Հահեան
- 24.— Մ. ՀԱՃԵԱՆ Բանաստեղծութիւններ
- 29.— * * * Սիւնն Սիւննեան
- 30.— Ս. ՍԻՄՈՆԵԱՆ Ան ուրիշ էր...
- 36.— ՎԱՐԱՆԴ Հանքակառք
- 36.— » Լապտերն ու կոյրը (Արեւելեան)
- 37.— Ս. ՓԱՆՈՍԵԱՆ Պաղտոյեցի հարսը
- 53.— Ն. ԲԻՆՔԱՆԴԱՅԻ Առաջին ժամանակ
- 63.— Փ. ՎԱԼԷՐԻ Ամփիոն — *Քնարահաղ*
(Քարգմ. Շ. Պէրպէրեան)
- 70.— Յ. ՊԵՐՔԵՐԵԱՆ Սիրոյ գիրքէն մինչեւ բռնադ
- 74.— Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Անշարժութեան անել շրջանակը
- 77.— * * * Մշակութային լուրեր

Ո՞վ միտք յղացաւ,
Դեռ մեր պատմութեան վա՛ղ արշալոյսին,
Այս արարչագո՛րծ,
Հի՛ն ժողովրդի
Գլուխը դնել մի հարկումն
(Բիրտ Պարսկաստանի՛)
Արնոտ սրի տակ.
Միտքի աջով —
(Բիւզանդիոյ խաչով),
Պահանջելով,
Որ նա... ծախի՛ հոգին,
Եթէ ուզում է... մարմինը փրկել՝:

Տէ՛ր,
Զե՛ս լսում դու
«Կարմիր լուրեր» ջարդի ու արեան...

2.

Ջնջում է,
Կորչում է,
Իմ ազնիւ սե՛րմը,
Տեսակն ու սե՛ռը.

Եւ եթէ դարերն
Անգո՛ր են եղել նրան ազատել,
Եւ եթէ
Գալիֆ դարերն անգո՛ր են ազատել նրան,
Եւ հրա՛շքն է լույ
Հնա՛րն անհնար, —
Տէ՛ր,
Տո՛ւր ինձ Մովսէս մարգարէի պէս
Հաճե՛լ ու տանե՛լ ցեղն իմ հալածուած
Այս Հայաստանի՛ց, —
Ո՛չ — Մահատանի՛ց,
Ո՛չ — Քաբաստանի՛ց,
Գէպի ապահով, ուրի՛շ մի եզերք
(Կա՛յ այդպիսի տեղ...) —
Ցե՛ղն իմ մշտաւել —
Նրա սե՛րմը նոր,
Արմատներ՛ը հին,
Վէպ, կոթող ու երգ...

Եւ ինչպէ՛ս մնար,
Ինչպէ՛ս դիմանար.

Երբ մեճ, թուով՝ քիչ,
Սակայն եզակի՛ որա՛կ եմ եղել,
Քանակի՛ աշխարհ...

Նետ ու ազեղի փոխարէն՝ տուի՛զ
Եւ զի՛ր եմ պաշտել սրի փոխարէն
Եւ գէճի տեղ՝ երգ,
Զօրքի տեղ՝ ցնո՛րք —
Զէճի՛, զօրքի՛ ու բանակի՛ աշխարհ...

Մեճ՛ մարդկութեան ու պատմութեան
դռնո՛ր,

Ամէն մի դարի
Արդար պայքարին

Տո՛ւր պերճաբանին
Թլուստութի՛ւնը նրա մագական
Եւ սո՛ւրը նրա՛
Ազրի՛ւր հանելու հանգիստած ժայռից,
Եւ գաւազանը՝
Ճեղքելու Կարմիր ծա՛ղը մեր բախտի,
Լացի ու արեան,
Թէկուզ եւ Մովսէս մարգարէի պէս
Իմ մա՛հը գտնեմ,
Օտար հա՛ղ մտնեմ,
Այդ երանելի՛ ափին չհասած,
Բազմալի տե՛րն նրա փակ դրա՛ն...

Արիւն եմ տուել,
Արի՛ւնը մեր քիչ,
Արի՛ւնը մեր թանկ.
Դրա փոխարէն
Մեզ գովէ շուրջադ
Թանգի՛ աշխարհ...

Ինչքան էլ դժուա՛ր,
Յանախ՝ անհնա՛ր,
Բայց, ի՛նչ էլ լինէր,
Միշտ մա՛րդ եմ եղել
Ու մա՛րդ մնացել —
Տմարդի՛ աշխարհ.

Միշտ արթութիւն
Ու հաւատ ունեցել
Եւ հաւատացել —
Կաւտսի՛ աշխարհ.

Ծղել ճի՛րք, տաղա՛մդ,
Երբ վսեմ տաղանդն
Ազա՛մդ է կոչուել,
Ազանդի՛ աշխարհ.

Նուիրուել բարո՛ւն ու գաղափարի՛ն —
Նե՛ղ կաղապարի
Ու... չարի՛ աշխարհ.

Երկրպագել ու խնկարկել միայն
Ներշնչումի՛ ու արարման պահի՛ն —
Փռ՛ղի, օգուտի՛
Ու շահի՛ աշխարհ...

Ջնջում է,
Կարչում իմ ազնիւ սերմը,
Տեսակն ու սեռը,
Իմ անկրկնելի ցե՛ղը հայկական.

Բռնաճնջող դար,
Եւ դռ՛ւ, մարդկութի՛ւն,
Որ,
Իբրեւ բարի՛
Եւ հոգատար ու խղճով ես այնքան,
Որ պանծանում ես
Ու փրկում մահից
Նոյնիսկ գորշ գայլի՛
Կամ շնագայլի տոհմ ու ցեղերի՛ն,
Ամէն տեսակի
Գիշատիչներին ցեղի մարդկային,
(Օճից մինչեւ... կայէ՛ն...)

Մտքում ցեղն իմ
«Կարմիր գրէի» մէ՛ջ...

Բայց ո՛չ, սպասի՛ր. —
Հենց այդ գրէում էր —
Յեղասպանութեան արիւնոտ գրէում, —

Որ մա հառաւ իր վերջի՛ն օրհասին
(Դէր-Ջօրից՝ Պոլիս
Եւ վանից՝ Բասէն...)

«Ճերմակ գի՛րք» կազմիք,
Հայերին տանջող
Ու բնաջնջող
Սեւ ռմբերի մասին բիւրատ՛ր.
Եւ փրկի՛ր, փրկի՛ր
Իմ ցեղի
Վերջի՛ն այս սե՛րմը մի բռւտ —
Սե՛րմը դարատը
Սե՛րմը փառաւոր...

Փրկի՛ր, զօրաւո՛ր,
Եթէ չե՛ս ուզում,
Որ մի դար յետոյ
Իմ ցեղի լեզուն
Եւ հայ դպրութեան գանձե՛րն ամնման,
Անհնա՛ր լինի վերծանել, աւա՛ղ,
Շուտերներին՝
Ու ացտեկների եի՛ն գանձերի նման...

3.

«Ով մարդկային արդարութիւն,
Թող ես ք՛նքե՛մ բոլ մակատիչ»:

Բռնել եմ բռնո՛ր
Զարին ծառայող
Եւ բարուն դաւադ
Գրէրի՛ վրայ,
Բոլոր երգերի՛, մերկերի՛ վրայ
Եւ արուեստների՛,
Եւ արհեստների՛,
Խաբաղ յայտերի՛,
Նենգող յայտերի՛
Եւ սի՛ն մտաւոր բերող
Տենչերի՛ ու երազների՛. —

Իսկ ամէնի՛ց շատ,
Ամէնի՛ց աւել —

Մեծ-մեծ խօսքերի,
 Մեծ-մեծ զօրքերի,
 Մեծ-մեծ աչքերի,
 (Որոնք չե՞ն տեսնում
 Տեսածը իրենց...)
 Եւ արդարութեան,
 Եւ արդարութեան...

Թե՛ն՛ եմ, այո՛,
 Եթէ մի փոքրի՛կ,
 Համեարի՛չ մի ազգ,
 Որը դարեւոր
 Կերտե՛լ է միայն,
 Ու պաշտել միայն
 Ազնի՛ւն ու բարի՛ն —
 Այս էլ քանի՛ դար,
 Մոռքում է, մոռքում...
 Եւ — ամէնի՛ց շատ —
 Ամէնի՛ց դաժան,
 Այս... իբրեւ յայսի՛
 Եւ... լայսի՛ դարում...

Մոռքում է լկտի՛,
 Մոռքում անպատի՛ծ,
 Մե՛ծ-մե՛ծ զօրքերի,
 Մե՛ծ-մե՛ծ խօսքերի
 Եւ մահւ...

Մե՛ծ-մե՛ծ աչքերի առջեւ, —
 Եւ ո՛չ-ոք, ո՛չ-ոք
 Զի՛ փրկում նրան,
 Զի՛ ոգնում նրան
 Կամ... ձեռք երկարում...
 Եւ, քէն ղուք ինձ,
 Հայ բանաստեղծիս
 Դափնի՛ էք առլիս,
 Միրում, մեծարում,
 Բայց ես չեմ կարող
 Ապրել ու երգել
 Այս հոգազնդում՝
 Այսպիսի՛ դարում
 Եւ այս... աշխարհում...

Եւ, Եղեռնի՛ց ու ջարդի՛ց առաւել,
 Ա՛յդ է ինձ տանջում՝
 Եօթն անգամ տե՛լ
 Ու եօթնապատի՛կ.

Օ՛, դու մարդկային
 Կամ... անմարդկային
 Կե՛ղծ արդարութիւն,
 Ե՛ս — Սիամանթո՛ն —
 Աւելի՛ մեռա՛ծ,
 Քան ասորա՛ծ, սիրա՛ծ —
 Բանաստեղծս հայ,

Թե՛ն՛ եմ ես քո կեցողութեան հակառակ...

ԳԷՈՐԳ ԷՄԻՆ

Բ. Ե Ղ Ի Ա Յ Ե Ա Ն

ԽՈՐԵՆԱՑԻՆ՝ ՍԻԱՄԱՆԹՈՅԻ

Գանգատներդ տուր լսեցի, Պոե'տ,
Յուշագրա'ծ՝ դպիր Գեորգ Էմինի,
Ու ցամաքած սիրտէն արի'ւն ժայթքեց մար.
Մեր-ծեր այս հալովս՝ սար-ձոր մազլցեր,
Եկեր հմ հետըզ բուխ-սիրտ գրոյցի,
Որ երկնի տեղ ե'ս տամ քեզ պատասխան:

Բողոքներ ես դու՛մ — քո'ց Սիամանթօ —
Երկիմնի Գանին,
Թէ արդեօք չար մէկ դեւի յղա'ցքն էր,
Որ մեր Հայկ պապու բաժին տանտնեց՝
Մ'առնալստընդի մ'ասիսի շուքին՝
Քարքարու ժառանգ,
Վայրագ ցեղերու տոնակոյն նամբայ,
Ուր դարե'ր — դարե'ր
Արամեան հանճարն ի'նչ ալ կառուցեր,
Շէն ծաղկեցուցեր ու հունձէ հաւաքե'ր՝
Կե'ր է կուլ գացեր, կործան՝ փնացեր...

Թէ՛ չար չէօյերէն
Թափառ ու քշուառ նումաներ խուժեր,
Թիւով մեզմէ քիչ,
Սրկաք քուր ձեռնի՛ն՝
Դէմը մեր բանին, բրիչին, մանին,
Փշրե'ր, կտորե'ր, մեր տունին նստեր,
Տիրեր են մալին, մուլին, մեր երկրին.
Ու շուտ-շուտ աներ՝

Թիւով մեզմէ շատ,
 Իսկ մեր միլիոններն հաւեր են, մաշեր,
 Ինտիք ցեղասերմն
 Անկուր կոբուստի սահմանին հասեր,
 ...Ու «Մեծ-մեծ խօսող», «Մեծ-աշխարհատէր»
 «Մեծ-իշխան»ներէն ոչ միմ մեզ օգնէր...
 Թէ գէնէի, դաւի այս բիրտ աշխարհում,
 Ազնուազարմ մեր ցեղն իր սփռվածքն
 Է գտած գիրի մէջ,
 ժայռեր է տաշեր,
 Արարչայս քանդակ կոթողներ կանգներ
 Խաչ ու խորաններ, տաճարներ, վանքեր,
 Խառնուան խօսքի մագաղաթ գիրքեր
 Յօթներ, ծաղկեր:
 Միմչ մեր շուրջն ամբողջ՝
 Մըլմարայնի պէս քաղմախտուն պատած՝
 Գայլ, գազան, իժէր, գիշատիչ ճիրան...

Եւ անցեալդ խաւար, ապագադ մշուշ,
 Լրբը ե՛լք միակ՝ աղազակեր ես
 Արարիչ Լոյսին, երկինքի խիղճին,
 Որ ճամբա՛յ ցոյց տայ,
 Հին Մովսէսի պէս՝ հըրաշքի գօրեղ
 Գաւազան ձեռիդ՝ իբրը նոր հովիւ,
 Յեղն առաջնորդես նոր կարմիր ծովէն
 Հեռու անծանօթ մէկ ուրի՛շ երկիր,
 Անկոխ հայրենիք, ովկիանէ անդին,
 Գուցէ իսկ ըլլայ դուրս երկրագունտէն,
 Տիեզերաբառիչ մէկ կոյս մոլորակ...

●
 Բայց ա՛յդ է արդէն դաւին չար դե՛ւը՝
 Իտերով գարկած ցրուած մեր ցեղը.
 — Լե՛ւլ հայրենի հողը եւ գաղթե՛լ —
 Ազատութիւնը՝
 Կորսնցուցած հոս բրնձիկ բոյնին մէջ՝
 Փնտռել գայն այլո՛ւր, մռայլ ասողի տակ...
 Վա՛յ քէ դող գազան տամ սեմին կոխէ,
 Թողո՛ւլ գայն, փախչի՛լ...

Հայ ազգը գաղթո՛ղ թռչում է դարձած,
 Կռո՛ւնկն ալ ընտրած՝ իր խորհրդանիշ...

Հաշուէ՛, թռռնորդի,
Դարերով քանի՛-քանի՛ հայ թափօր,
Մօռցած երգումը՝
— «Սահման քաջաց՝ գէ՛մքն իւրեանց» ուխտը հին —
Հայրենաժառանգ սուրբ հողին փոխան՝
Թարմ-թարմ հայ արիւն հոսեր են՝ պատուաւս
Խորք երակներում հագար այլացել:
Քանի՛ գաղթ ցրուած՝ Հոռոմոց աշխարհ,
Քանի՛ գաղթ դէպի Թրակիա, Դանուբ,
Մինչեւ հեռաւոր հիւսիսն լեհերու,
Մինչեւ Կղզիներ, Կիպրոս, Կրետէ,
Գաղթեր՝ մինչեւ իսկ հնդկաց Չինաստան,
Հայկեան ժառանգը լքած ամայի...

Սին-սին պարծանքով՝
Թէ Բիզանդիոնի կայսրի՛ր եմք տուած,
Կամ թագուհիներ՝ պերճանք գահերում,
Արշալի բանակ ու գորավարներ...
Քանդուած մեր տունի ճարները տարեր՝
Օտարին բերդեր, պալատներ շիներ,
Խրճի՛ք միակ ըլլայ՝ մեզի չեմք պահեր...

Ջո՛ւր եմ ողբացեր — ես հորենացիս —
Թէ՛ հայոց աշխարհ համուրց վեհագոյն,
Քաջերէն գրկուած, հովուէ՛, հովուակցէ՛,
Ուր արմատացած՝ անկարգութիւն խոր,
Ջօրականք փախչողք ժառանգութենէ,
Իշխանք ապստամբ եւ աշխարհաւեր...

Ջո՛ւր երանելին Աստուծոյ Պատմիչ
Լալով ափսոսեր՝ թէ մեր իշխաններն
Անտէր թռչլո՛ւք ժողովուրդ, երկիր,
Պացին գերեզմանն իրենց գտնելու
Օտար վայրերու, մոռալլ աստղին տակ...

Մեզի չէ՛րն գործած հայրերդ գաղթելով,
Ու դուն դեռ կ'ուզես նոյն մե՛զի կրկնել...

Մէ՛կ հերթին միայն Հայոց պատմութեան,
Սմբատ գորավարը Բիզանդիոնի,
Երբ կայսրէն հրաման հասաւ վարելու

Արմենիկոն Զօրքն Թրակեան ճակատ,
Պոնտոսի եզրին կանգ առաւ, գոչեց.
— Զինակիցնե՛ր քաջ, —
Չերթա՛նք մեմք այլեւս
Մեռնելու օտար երկիրներու մէջ,
Այլ կեանք՝ կռուի՛նք,
Մեռնինք իսկ՝ մընա՛նք հայրենի երկրում, —
Եւ այդ քաջ ուխտէն ծընաւ Մեծ ԱՆԻՆ՝
Թագաւորութի՛ւնը Բագրատունեանց...

Նայն կոչն հնչեցին Տաւրոս լեռներէն՝
Փիլարատս Իշխան, Գոզ Վասիլ, Ռուբէն,
Ու զըրին հիմը Գահին կիլիկեան:
Ապա դարերու պայքարի ճամբով՝
Խամսայ Մէլիքներն, Դաւիթ Բէկ յաղթողն,
Միթիթարը քաջ,
...Դպրիդ ճախահայր Մեծ Յովսէփ Էմին,
Ու Ֆետայիներ՝
Կարմիր Մուլթանի գահին դէմ ահեղ...

Ժառանգն Հայկ պապուն Դրա՛խտն էր արդարեւ,
Հզօր ազգերու ճախանձի կեդրոն,
Պարսպաւած շուրջ լեռներով տիտան
Զաքարթագ Մասիս, Նեմրուք ու Սիփան,
Ծաղկուն Արագած՝ մշտալոյս կանթեղ,
Ու Տաւրոսեան շարքը լայնախարիսխ,
Որոնց կողիւրէն գետք առատաբուխ...
Արեւիլքն՝ Արաֆս ու Կուռ կատաղի,
Արեւմուտքն՝ Սիկուն, Ճիկուն խորակար,
Հարաւին՝ Եփրատ, Տիգրիս լայնամաւ,
Հիւսիսին՝ Ալիս, Ճարքիս, Ախուրեան,
Ու լիւեր՝ Բիւկէօլ, Գեղամ, Վան, Սեւան...

Ես՝ հօրենացիս,
Իմ աչքերուս մէջ պահած եմ պատկերն
Արայեան ծաղկուն հովտաց դաշտերու,
Կարկաչառահանք ջինջ աղբիւրներու,
Դէմն՝ արեգնափառ լեռը Սպիտակ,
Կարծես քռոններուն թարօրքին իսկող
Ներ մէկ մահապետ...

Այնքան հմայիչ էր երկիրն հայաց,
Որ պերն թագուհին Ասորեստանի՝
Հպարտ Շամբամ,

Իր ամառանային մէկ զբօսանքին՝
Հիացա՛ւ վանայ ծովուն կապուտակ
Ու շուրջը գուարք բլրադաշտերուն,
Շնչեց օդը զով,
Ըմպեց աղբիւրէն բիւրեղաքաժակ եւ գոչեց նախանձ .
— Պա՛րտ է մեզ այսօր այսպիսի երկրում
Բարեխառն օդի, մա՛հուր ջուրերու՝
Արժանի՛ք շինել՝ մեզ բնակութեան,
Բարեշէն քաղաք՝ մեր վայելչութեան...

●
Դատդ արդար — Բի՛րտ եմ
Բարեկամներն իսկ, եւ օրէնքն՝ վայրագ,
Թու՛ք ու մուր քառած՝
Արդարութեան խուլ արձանին
Ծանր է մեղքն անոնց .
Բայց արդեօք մե՛նք ալ ծուռ գործ չե՞նք վարած...

Խօսքն Ուռեայեցի Մատթէոսի՛նն է .
— Մեր հայրենի այգիներում
Ցանկապատներն քանդուցան
Ձեռքովը մեր իշխաններուն,
Թալան մընաց անցորդներուն...

Ու նոր մէկ խօսնակս,
Տեսած՝ Կիլիկիան Լեւոն արքայի
Ոսկեա՛յ սուրմ օտար քանգարանի զարդ,
Գոչեց — Երանի՛ր այս մէկ սուրի տեղ
Նուրք գեղանաշակ՝
Դարբինները մեր շինած ըլլային
Հազար կա՛շտ սուրեր անգարդ պողպատեայ :
Լա՛ւ էր ունեմալ սերունդ առ սերունդ
Հանճարներ գիրի՛ր քաղաւորութեան,
Բայց առտուե՛լ լաւ էր քանակ-քանակ
Պարզ գինուորնե՛ր տալ
Թուր-կեծակ սուրի՛ր քաղաւորութեան...

Ինչպէ՛ս պատահեց,
Մեր հողին խուժող
«Չորս հարիւրն» անէր քարտու՛ն միլիոնի,
Մինչ հայ «Բիւր-բիւրացն» մուսգէր-իջնէր,
Ըլլար մնացորդաց, ցրուած՝ աշխարհի

հորք-ցամաքներում ու կղզիներում,
Բեկո՛ր մը միայն՝ ամուր կառչած հի՛մ
Մեր փոփոք ԱՄՈՒԻՆ...
Յաղթապանձ Աստղի՛ն Սարդարապատի...



Դարձի՛ր, արդ, ե՛ւր դարձ
Վախի, փախուստի անել խորհուրդէն.
Հին վերքը սիրտիդ սեղմած՝ քաջ, վե՛ր կաց,
Դու՛ն մտ՛ր երգ երգէ մեզ՝ Սիամանթօ,
Հայրենաժառանգ ՄՍՍՅՐ՝ Հովի մասին,
Ամրութեան մասին ՀԱՅ ՄԻԱԶԳՈՒԹԵԱՆ,
Եւ ԱՐԴԱՐ ԴԱՏԻՆ...

Ես՝ հոբեմացիս, ըսե՛մ համարձակ.
— Ով իր մայր հողէն հեռանայ դուրպա՞ս՝
Փշրա՛նք կը դառնայ աշխարհի մամբուն,
Փշրանք ու փռի՛ր...
Թող իմ ժողովուրդս — Քո՛ւ ժողովուրդը —
Թող խրհի՛թ միայն գտնէ իրեն քայն,
Թող տրե՛խ միայն հազմի ռոմանան,
Ոսպապա՛ւր ռոտ իր օրումն ռոտիկ,
Թող աջիկ-ձախիկ, ի՛նչ ուզէ ըլլայ՝
Միայն թէ մընա՛յ քաջերու արեամբ
Սրբացած նախնեաց հաբազատ հողում,
Իր քի՛ւր շատցնէ՝
Ու ի՛նքն ալ մեծնայ
Իր լեզուով, բարձով, տառիկ դրոշմով,
Հզօրի կողքին՝ ինքն ալ հզօրնայ,
Աշխարհը վարս՝ գաղտնիքներն առնէ,
Ու մեծ-մեծ գէնքի ու մեծ-մեծ խօսքի՝
Հայն ալ տէր դառնայ,
Դարերու շարժէն փրկուած փոփոք ԱՄՈՒԻՆ
Բե՛րքն առատացնէ,
Ու գործէ «բազում գործք արութեան» մար:

ԲԻԻԶԱՆԻ ԵՂԻԱՅԵԱՆ

ԿՈՐՈՒՄՏՆԵՐ ՈՒ ԿՍԿԻԾ...

Ընդամենը քանի մը ամիսներու ընթացքին, Սփիւռ-
հասյ գրականութիւնը կորսնցուց երեք դէմք, — յա-
ջորդաբար՝ Մկրտիչ Հանեան, Արամ Հայկազ եւ Սիմոն
Սիմոնեան: Երեքն ալ «Բազմոց»ի աշխատակից: Սիմոն
Սիմոնեան մէկ-երկու գրութիւններով միայն, Մկրտիչ
Հանեան տասնէ աւելի անգամ, իսկ Արամ Հայկազ մեր
ամսագրին հիմնադրութեան առաջին օրէն մինչեւ իր
խոր ծերութիւնը, ամբողջ փամբամետակի մը երկայն-
քին, խոսակտէ աւելի պատմածքներով:

Հիմզ ամիս եւ երեք կորուստ:

Ձոր տրամաբանութեամբ անդրադառնալով հազիւ
քարծած անոնց իրականութեան, տխրութեան շատ
պատճառ չի մնար, որովհետեւ երեքն ալ անցած էին
հօթանաւումի սահմաններէն ու չափով մը հասունցած՝
անխուսափելիին համար, բայց տրամաբանութիւնը կը
կորսնցնէ իր ուժը եւ կորուստներուն առաջացուցած
կսկիծը կը խորանայ աւելի, երբ Յման պարագաներու
կ'անդրադառնանք մեր մտաւորական աշխարհին պար-
զած կայութեան:

Անհետացող գէմքերէն երեքն ալ ճանչցած էին հայ
ժողովուրդի ֆիզիքական ու հոգեկան դարաւոր դահի-
ւը. Թուրքը, ռզդակի թէ անուղղակիօրէն՝ Շապիմ Գա-
րահիսարի, Այնթապի թէ «Պալտը սրբվայնին մէջ»,
արիւնոռչտ Թուրքը թէ մերքին հարստահարութիւն-
ներու պատճառ անոր մոյմքան ազդտալի ուրաւկանը,
սակայն հակառակ այդ ամիսցնող փորձառութիւննե-
րուն. Սփիւռքի գրականութեան մերկայացուցիչներուն
ջախջախիչ տռելսին պէս՝ ամենք կրցան յաղթանալ
աղիտարչ ամէն յուշ, փշտաղող ամէն պատկեր, մը-
ւատութիւններուն թուր տեսկները եւ իւրաքանչիւ-
րը, ի վերուստ տրուած իր քանքարին համեմատ՝ վառ-
տակ մը կստակեց, ընտու ցնդին կէտդարեայ լինելու-
թիւնը երաշխաւորող մպաստի քածին մը, ստեղծագոր-
ծական. երաւարակագրական թէ երատարակչական
մարգերուն մէջ:

Անհետացող այս գէմքերուն տարբերիչ յատկու-
թիւնները արագ մը ուրաւագրելու համար պիտի թ-
տեմք, որ Արամ Հայկազ հայրենի հարուստ իրականու-
թեան մը քարմութիւնը կը բերէր հետը, Սիմոն Սիմոն-

եան՝ խոռովիչ աւանդութեան մը մթերքը, իսկ Մկրտիչ Հանեան՝ քիմիական Պոլսոյ ցամաքութիւնը, այլազանութեան երեք աստիճան, առանց որոնց թերի ու հրապոյրէ գործի եղած է ու է՝ ամէն գրականութիւն:

Սպանդի տարիներուն հազիւ պատմանի, մանուկ, ծծկեր երեխայ՝ անոնց «նսեհէն կծծի» յափշտակեցին ապրելու քախտ մը, որ նոյնպէս քախտ պիտի համարենք մեր տարագիր գանգուածներուն համար: Այլապէս՝ ո՞վ պատմութեան պիտի յանձնէր Քիւրտիստանի լեռներուն մէջ երկարած գուռած հայկական ոգրերգութիւնը, կամ ո՞վ պիտի լուսակերտէր Շապիւմ Գարահիսարի դիւցազուններուն հմայքը, կամ սխրագործութիւնները միւս լեռնականներուն, որոնց *վերջալույսը* երբեք պիտի չխորի ամբողջական խաւարին մէջ:

Սփիւռքի գրականութեան առաջին սերունդին կենսագրականները շատ չեն տարբերի իրարմէ: Կորուստներու շարք է ու կսկիծ անոնց հիմնական գիծերը, որբութիւն ու անապատային թէ լեռնային նուաւտութիւններու անվերջանալի շարք, միմեկուրեան սարսափ ու անորոշութեան դժոխքներէն երկարած ամէնօրեայ յանախաճ, քայց այդ ելեւէջներուն ճովն ի վեր տեսանք ինչ որ իմանալի առաքինութիւններու լուսեղէն ցայտերը:

Այդ արժանիքներուն ուղղակի ընծան պէտք է համարել անոնց ձգած ժառանգութիւնը, որ, իր կարգին, մաս կը կազմէ «Աստուծոյ եւ պատմութեան զարմանք պատճառով» հայ ժողովուրդի յայտնաբերած կենսապարզ եւ զորութիւններուն:

Որքան ալ մատի փաթեց զարած ըլլան ու շարունակեն դառնալ հայրենական ենթահողը, ազգային միջավայրը, համայնութիւնը ապրելու քախտէն բխող մղիչ ուժերը, կամ անոնց զգացողութիւնը, անոնք, երեւի, զաքսեալ ի գորտու կը մնան եւ շրջիչ գեր մը կը կատարեն անհատի մը լաւագոյնը ցայտեցնելու հրամայականին մէջ:

Անդարձ մեկնողներուն շնչող էջերը այս թելադրանքը կ'ընեն, կը յուզեն շնչող էջերու կարօտը, ուրուագծելով միաժամանակ գրականութեան ճշմարիտ մասը...

Թարմացնելու համար անոնց յիշատակը, «Բազին»ի խմբագրութիւնը սրտի պարտք համարեց իւրաքանչիւրէն ներկայացնել Քարմաշունչ Բանի մը էջ, իսկ յաջորդով ընթերցողին պիտի տանք անտիպ կտոր մը մեր միւս աշխատակիցէն, տարաքախտ Սարգիս Սարգիսեանէն, որ շուրջ տարի մը առաջ անակնկալօրէն քաժնուցաւ մեզմէ...



ԱՐԱՄ ՀԱՅԿԱՆ

(1900 — 1986)



Արամ Հայկան, պատմագիր և յօդուածագիր Արամ Հայկազ (տաղանթի տնտեսագիտական) ծնած է 1900ի Մարտին, Շաղին Գարահիսար: Նախնական կրթութիւնը կը ստանայ ծննդավայրի նախակրթարանին մէջ, զոր կը լքէ չորրորդ դասարանին: 1916ին, Շաղին Գարահիսարի ինքնապաշտօնաւորութեան օրերուն, տասնինգամեայ այս պատանին ևս բերք կը բարձրանայ և իր մասնակցութիւնը կը բերէ հերոսական գուպարներուն: Ապա կը ծառայէ արկածներով և վտանգներով հարուստ ահաբեկական կեանքը, երբ չորս տարի կը թափառի Գիւրտիստանի և Թուրքիոյ յեանքում մէջ: 1919ի Մայիսին կը յայտնի փախուստ առ և կը հասնի Պոլիս, ուր ամիս մը կ'օրկալարութեամբ գրողիկեմ հաճ, վերապրած իր մէկ հորաքոյրը զինք կը զրկէ կեդրոնական վարժարան: Մէկուկէս տարի կեդրոնականի մէջ աւսանած իր շրջանին, վերջին վեցամեակին ուսուցիչ կ'ունենայ Յակոբ Օշակունց, որուն «Գրականութիւնը չ'ունենա՛ս, մենք ազա՛ն» պատուէրին ի պատասխան տրուած «Այս՛ միտիւ» խոստումը յարգեց մինչև վերջին շունչը:

1920ական թուականներու առաջին երկամեակին Մ. Նախագահը հաստատուելէ հետք, կը սկսի աշխատակցիլ «Հայրենիք» օրաթերթին և ամսագիրին, ուր և կը սկսիլ լոյս տեսնել իր պատմաւածագները, զորս 1949ին կ'ամփոփէ «Յիշատակ» խորագրեալ հատարին մէջ: 1954ին կը երաւարակէ «Յիշատակ» ամսական պատմաւածագներու Բ. հատորը, որուն կը յաջորդեն «Չորս աշխարհ» (1962), «Պատմական» (1967), և «Երկնականութիւն» (1978) պատմաւածագներու ժողովածուները:

1973ին, «Գեորգ Միլիտինեցի» գրական մրցանակի դատակազմի քաջամտով լոյս կը տեսնէ Արամ Հայկանի «Չորս տարի Գիւրտիստանի լեռներուն մէջ» ծառայում գործը, որ Շաղին Գարահիսարի ինքնապաշտօնաւորութեան նուիրում «Շաղին Գարահիսար և իր հերոսամարտը» պատմագրական հաստատար հատորին (1987) հետ յաւելեալ վարկ մը և երաճեց մը կ'ապագաւի Արամ Հայկանի անբաժանելի և գուարթախի գրականութեան:

Արամ Հայկանի գրական գործունէութեան 50ամեակին առիթով, Նիւ Եորքի, Նիւ Ճըրքի, Պոսթընի, Տիքոնի, Մոնթրէալի և Թորոնթոյի «Համագայիմ»ի մասնաճիւղերուն և Հայ Մշակութային Միութեան նախնականութեամբ ամերիկեանայութիւնը և ամերիկեան մամուլը կը մեծաքի յարկեալ գրագետը, իսկ յաջորդ տարի՝ յիշատակաշարութիւնը, որ մեծաքի համադրութեամբ զուգահեռ նախ կը հրատարակէ Ա. Հայկանի գործերէն բաղաւած «Այսէն երկէն» հատարնորը:

10 Մարտ 1986ին Արամ Հայկազ կը մահանայ խոր ծերութեան մէջ, 86 տարեկան հասակին, Նիւ Եորքի մէջ:

Ա. Հ Ա Յ Կ Ա Ջ

Հ Ա Ն Դ Ի Պ Ո Ւ Մ Մ Ը



Հեղեղէ տարուած կամուրջը նորով մը փոխարինելու աշխատանքները վերջացան: Թուրք թէ հայ, բոլոր աշխատաւորները մեկնեցան, բացի մալաթիացի Յակոբէն, որ մնացած է շինութեան հսկելու համար:

Հիմա, մթերք փոխադրող կարաւանները, յոգնած շարժումներով կ'անցնին կամուրջին վրայէն ու անոնց յարուցած աղմուկը կը սարսափեցնէ վարը, ջուրերուն մէջ լողացող ձուկերու վտանները:

Յակոբը, Նիսիցին ու հս, միացեալ ջանքերով յաջողեցանք կամուրջին տակ քիչ մը փորելով, քիչ մը ջուրին տուել թուժք բարձրացնելով, բաւական խորունկ աւազան մը կազմել, ուր կը լողանք օդին նպաստաւոր եղած օրերը, ու շուքին մէջ պառկած կը հանգչինք՝ կամ մեր բռնած ձուկերը խորովելով կ'ուտենք:

Գետի ընթացքին արտասովոր դանդաղութեան պատճառաւ, շատ ձուկ կայ հոն: Ծրբեմն, հոն, կամուրջին տակ, կը հանդիպիմ Յակոբին ու միասին կ'որսանք: Գիշ մը շատ փուշոտ, բայց համեղ ձուկեր են մեր բռնածները, այնքան համեղ, որ զանոնք եփելէ ետք, առանց աղի խկ կրնանք ուտել:

Ուռկան կամ կարթ ալ չունինք: Հրացան գործածելն այլ շատ ձեռնտու չէ՝ ամէն անգամ՝ կ'որսանք ձեւով մը, որ Յակոբի գիւտն է: Ան իրեն հետ կը բերէ ափ մը ալիւր ու հարթ քարի մը վրայ դրան կը թրջէ՝ կարգ մը բոյսերու ջրախառն կաթով: Յետոյ խմորը մանր, դեղահատերու նման փոքր դնդիկներու վերածելով՝ հոս ու հոն, կը նետէ ջուրին մէջ՝ գետի հոսանքն ի վեր քայլելով:

Այդ խմորը կուլ տուող ամէն ձուկ խիթէ կը բռնուի եւ, կամ կը նետուի ջուրէն դուրս եւ կամ, կիսամեռ, փորը վեր, կը ծփայ ջուրին վրայ: Այն ատեն աճապարանքով կը ժողվենք զանոնք, կրակ կը վառենք դետափի ուտողին վրայ ու փշոտ, բայց համեղ այդ ձուկերը խորովելով՝ կ'ուտենք մատներով:

Երբեմն, միւտիւրին փոքր աղջիկը կ'ընկերանայ ինծի... Յակոբ, մեծ եռանդով, կը հիւրասիրէ զայն:

— Պղտիկ հանրմոս, — կ'ըսէ ան, — կը ցուիմ, որ այս հասարակ բաներէն զատ ուրիշ ոչինչ ունինք քեզի հրամցնելու:

Ու ձուկներուն ամէնէն դիրուկներն ու լաւ հփուածները կը դնէ անոր առջեւ:

Ֆահրիէ քաղցրօրէն կը ժպտի ու կ'ըսէ.

— Եսգո'ւալ, դուն բարի մարդ ես:

Յակոբ կը յուզուի, աչքերը կը լնցուին ու իր աղաժախճութեամբ մազազի պէս կ'ելլէ-կ'իջնէ:

Անոր այդ վիճակը տարօրինակ կը թուի ինծի ու մտածել կու տայ: Օր մը, երբ մինակ էինք, խօսք բացի ու հարցուցի, թէ ինչո՞ւ այդքան կը յուզուի այդ աղջկան ներկայութենէն:

— Անոր տարիքով աղջիկ մըն ալ ես ունիմ, — բաւ ու լռեց:

Այլ չխառնեցի իր վէրքը: Բերանս դոցեցի եւ գետնէն խոտ մը քաշելով՝ ծայրը դրի ակօսնեհրուս տակ:

Վերջապէս Յակոբն էր, որ նորէն խոց լռութիւնը.

— Ա՛խ, ե՞րբ պիտի վերջանայ սա անիծեալ պատերազմը...

— Ենթադրենք, թէ վերջացաւ, ի՞նչ պիտի ընես, ի՞նչ կրնաս ընել:

— Ի՞նչ պիտի ընեմ, ի՞նչ պիտի ընեմ ըսիր, պիտի երթամ մերինները փնտռելու, — պատասխանեց ողբերկութեամբ:

— Երանի՛ր քեզի, որ դեռ յոյս ունիս. ես չունիմ այդ յոյսը:

Նորէն լռութիւն:

Եւ, իբր թէ քար լռութիւնը խղիւռ անձկութեամբ, հարցուցի.

— Ինչպէ՞ս պատահեցաւ:

Հարցուցի եւ իսկոյն զղջացի:

— Տարի՛ն... Տունը չէի... Զիս զինուոր էին տարեր...

Կարճ ու կոշտ մատովը սրբեց աչքին մէջ լճացած կաթիլ մը արցունքը եւ սկսաւ յուսարեկ աղաւ մը պէս հեկեկալ:

Դո՛ւ առին իր նիւար տանը, ուռեցան ու կապուտցան վզին երակները:

Յանդիմանեցի ինքիս. — «Տխմա՛ր, ինչո՞ւ քար նետեցիր անոր վշտի ծովուն մէջ: Զե՛ս գիտեր, որ ամէն հայու պատմութիւնը նոյնն է... ի՞նչ փոթ, թէ ինչպէ՞ս է սկսած. չէ՞ որ բոլորն ալ յանգած են կարմիր ու եղբերական նոյն վախճանին»...

Զղեցի պահ մը, որ այդ խոշոր դիւղացին լայ, լայ ու հանգստանայ: Յետոյ ի՞նչ կրնայի ըսել մխիթարելու համար զինք: Զէ՞ որ իմ սիրտն ալ նոյնքան կը կոտորար, չէ՞ որ կարօտը նոյնքան ալ զիս կ'ուռէր, հողիս կը մրկէր: Իմ մօրս հետքն ալ կորսուած էր Ակնայ մօտերը ու մնացել էի մինակ, գետնէն բուսած խոտի մը պէս անտէր...



Եւ յիշեցի, թէ ինչպէս, տարի մը առաջ, Աղուանիսէն անցած պաշտօնէն, գեղանի պղտիկ աղջիկ մը, հիւղակի մը ցած դուռնէն նետուեցաւ վըղիս, պոռալով՝ «Արամ ախպար, Արամ ախպար»... «Արտե՛մ», պոռացի եւ ես, ճանչնալով իմ կերպարանափոխուած ազգականուհին, եւ զայն սեղմելով կուրծքիս.

— Արտեմ, ջանս, ուրկէ՞ բռնար, հողի՛ս, ո՞ր բարի Աստուածը քեզ ինծի դէմ բերաւ, հողի՛ս...

Ձայն կուրծքիս սեղմած, բոլոր կորսուած սիրելիներուս կարօտը կ'առնէի: Կու լայի... կու լայի'նք...

Պահ մը, ինքզինքս գտնելով՝ ըսի.

— Կեցի՛ր, կեցի՛ր անգամ մը դէմքդ տեսնեմ: Կեցի՛ր, չորցնեմ արցունքներդ... Դէ՛, ա՛լ մի լար... Հերիք կնկան սկէս լացնես զիս ալ...

— Արամ ախպար... .

Աստուած իմ, Աստուած իմ... Աստուած իմ... .

Արցունքը առուի սկէս կը հոսէր իր պզտիկ կրակէն:

Իմ ալ:

Վերջապէս, յուզումէս, գուրգուրանքէս ու վշտէս դողացող ձեռքով մը, հեղ մըն ալ կուրծքիս սեղմեցի իր պզտիկ գլուխը եւ անգամ մըն ալ վրձնապէս փորձեցի չորցնել իր արցունքները:

— Կը բարկանամ, ա՛լ չլսաս, չլսաս ա՛լ:

— Ինչպէ՛ս չլսեմ, դիւրի՛ն է, ձե՞ռքս է...

Երբ քիչ մը հանդարտեցաւ, քիչ մը պարպուեցաւ յուզումէն, հարցուցի.

— Ե՛, ըսէ հիմա, ի՞նչ կ'ընես հոս, ո՞վ կայ հետդ: Մայրդ ալ հո՞ս է:

Աղէկ կը նայի՞նք քեզի:

— Մի՛նակ եմ, — ըսաւ, հազիւ յաջողելով զսպել ինքզինքը, — տեղս գէշ չէ, բայց չա՛տ խիստ են: Եթէ գիտնան, որ հետդ, հայու մը հետ հայեւրէն խօսեցայ, լեզուս կը կտրեն:

— Ետենի՛րը, չկշտացա՞ն կտրելէն, — ըսի կատաղած:

Բռնեցի թեւերէն, քայլ մը ետ քաշուեցայ ու գիմացէն գիտեցի զինք:

— Որքա՛ն մեծցեր ես, որքա՛ն աղուորցեր ես, — ըսի:

Ժպտեցաւ մեղմօրէն ու աւելցուց.

— Աղուորնալն ի՞նչ ընեմ, որո՞ւ համար...

Աչքերը նորէն լեցուեցան:

— Ուրիշներ ալ կա՞ն մեր քաղաքէն ու շրջանէն, — հարցուցի:

— Կան, — ըսաւ ու տուաւ չորս անուններ... Յետոյ, վարանելով, շարունակեց.

— Ձեզէ՛ ոչ ոք կայ: Մայրիկդ մեղի հետ էր մինչեւ էկի՛ն: Հարսներն ու թոռները շուրջը, փէշին տակ, հասաւ մինչեւ հոն:

Լռեց:

— Վե՞րջը, — հարցուցի սիրտս սեղմուած:

— Ա՛լ լուր չունիմ, խա՛չ որ լուր չունիմ, Արամ ախպար, աչքս քուռնայ... Մի՛ նայիր ինծի այդպէս, լուր չունի՛մ... Ձէ՛, չէ՛ այդպէս մի՛ նայիր ինծի, շիտակ կ'ըսեմ, լուր չունի՛մ...

Հասկցայ: Լուր ունէր: Գիտէ՛ր:

Գիտէր, բայց չէր կրնար, չէր ուզեր արտասանել ահաւոր բառը — Եփրատը:

Եփրատը, — հարիւր հազարներու ջրեղէ՛ն գերեզմանը...

Հիմա, մալաթիացի Յակոբին քով նստած՝ կը յիշեմ այս բոլորը: Դեռ ականջներուս մէջ կը հնչէր Արտեմիսին լացին ձայնը: Ափերուս մէջ կը ըզզայի իր արցունքներուն տաք թացութիւնը:

Ու կը լսէի՛, կը լսէի՛ Եփրատի խուլ մոռնչը, ջուրը թափուող կիներու ազօթքն ու ճիշը եւ անզգամ հրամանները՝ ետ ու առաջ ձիավարող սասիկաներուն...

Ձեռ գիտեր ինչու անդադար կը կրկնէի Արտեմիսին խօսքը — «Եթէ գիտնան, որ հետզ հայերէն խօսեցայ, լեզուս կը կտրեն...»:

Որքա՞ն Արտեմիսներ սպաննուեցան, որովհետեւ հայերէն խօսելու մեղքն էին գործած: Որքա՞ն մշակներ մորթուեցան, որովհետեւ հայերէն էին երգեր հացին ու աշխատանքին երգը: Ու դեռ քանի՞նե՛ր ջարդուեցան, որովհետեւ շարականով ու Նարեկով էին աղօթած...:

Աստուած, որ Աստուած էր, իր Որդւոյն մահուան չկրցաւ դիմանալ Եւրոպեական խորհուրդն ղգացաւ ու իր Միաձինը քոյր տարաւ...:

Հապա մե՛նք, մե՛նք՝ իր ձեռակերտները, ինչպէ՞ս գիմանանք...:

Ինչպէ՞ս գիմանանք... Ինչպէ՞ս գիմացանք:

Մէկ չէր, տասը չէր, հարար չէր մէկ տեսած մահերուն թիւը...:

Ի՞նչ եղաւ Արտեմիսը... Ո՞րչէ՛ն, մեռա՞ծ է, համեմատաբար երջանի՞կ է... Այ՛նձման բառ մեռա՞ց մէկ լեզուին վրայ...:

Մենք ա՛յ երջանիկ ըլլալը մոռցանք: Այլլեւս բնա՛ւ, բնա՛ւ երջանիկ պիտի չըլլանք, որովհետեւ մեր աչքերուն խօրը դրոշմուած անաւոր պատկերներ կան...:

Ձանոնք ջնջելու միակ միջոցը աչքերը փոքել տալն է:

Ո՛ր քաղաքիւնը լուսինք այդ բանին համար ալ:

Արեւը, սարին կոնակը թեքելով, ձորին մեծ մասն ու գիւղը ձգած էր չուքի մէջ: Բլուրէ մը վար կը հօսէր տուն դարձող հօտի նախնուն գիծը: Օդին մէջ կախուած հովիւս մը կար:

Յակոբին հետ ոտքի ելանք եւ, առանց խօսելու, ըստնուեցանք, ան՝ զօրանոց, ես՝ տուն երթալու համար:



Գորշ երկնքի վրայէն դաղթող թռչուններու մկրտող շատոնց սրբուած է ու հեռաւոր բարձր լեռներու կատարին նստած սպիտակ ձիւնը իր տիրապետութեան սահմանը հասցուցած է գիւղ ու դաշտ: Հիմա մորիկը կ'ոռնայ ամէն կողմ ու զետը, քիչ մնացած է, որ սառել յանկարծաւանս ցուրտէն:

Գիւշերուան լուռ պահուն, երբ հովը դադարի պահ մը, մուխ ունկնդրեալով, կարելի է տկանի տալ մայր երկրի ճարճատման աղմուկին: Բոլոր բլուրներն ու դաշտերը ձիւնի սպիտակ ու թանձր ախրապետութեան տակն են: Միայն արտուճի ու մշտադալարներու ճիւղերն են, որ, հովէն թոթորուած, կ'արատաւորեն համայնապատկերին սպիտակութիւնը:

Գիւղին ու դաշտերուն վրայ խոր, անհատնում լուսթիւն մըն է թլած: Մարդ ու անասուն, լուսներն իսկ, ներսն են, տակը կտուրներու եւ տանիքներու, որոնք, ձիւնի ծանրութեան տակ, փլիլ կը սպառնան:

Բոլոր ձիւնեկոյնները կը միանն եւ պատահաբար բացուող զոմի մը դուռնէն, ամպի մը պէս, դուրս կը խուժէ աղբով, չոգիով ու խարի բուրածով յագեցած դաղը օդը: Բոլոր Հորիզոնները ցածցած, կարճցած են. կարծես երկինքը վար իջած է ու կը ճնշէ դաշտերուն վրայ: Երբեմն, երկնքին ու երկրին գիծը կը նոյնանայ դորադոյն ու մեծատարած կտաւի մը վրայ:

Միօրինակ այս համայնապատկերին առջեւ, ես կ'երազեմ ծովափնեայ քաղաքներու մեղմ ձմրան եւ անոնց անհատնում աղատութեան մասին: Շատ շատ, եւր փոթորիկ է, կոհակները կը հասնին մենաւոր աւաղներու եզրին ու գորշ երկինքը, օր մը-երկուք, կը կախուի ալիքներուն վրայ. բայց չու-

սով հովը կը փոխէ իր ուղղութիւնը ու ծովը՝ իր գոյնը։ Ամպերը կը շուեն ու հեռան, հորիզոնին վրայ, կ'երեւի սպիտակ նաւու մը հպարտ կայմը։

Մեր դրացի սարն ու իր փոթորիկները մնայուն են, անփոփոխ, դաժան։ Նաւու տեղ՝ դայլ մը կ'ոռնայ հոն երբեմն, կամ ցրտահար ազուաւ մը կը կռնէ արտակեղեք, անախորժ ձայնով մը։

Ու այսպէս, յամր ու գունատ, օրերն ու շաբաթները իրարու կը յաջորդեն, կը դառնան ամիս ու ամիսներ կը մօտենան զարնան զբան։

Օր մը, առկայն, հակառակ ուրիշ ցուրտին, յոգնած ու քրտնաթոր տղայ մը կը հասնի գիւղ։ Գլխանոցէն սառէ նիզակներ կախուած էին ու քիթը կ'իտով ստաւէ էր։

— Կարաւանը, — ըսաւ յոգնած ու շնչատ, — կարաւանը մնաց ճամբան։ Հասէք, եթէ չէք ուզեր, որ բքթեղդ ու ցրտամաճ բլլան։

Գիւղը արթնցաւ, շնչեց ու բաշերը ցնցեց։ Յուզուելու, շարժելու պատճառ ունէր։ Դուռները բացուեցան ու տանիքներու ձիւնին վրայ մարդոց ու շուներու ձեւեր գծուեցան։

— Հասո, Հէ՛յ, Հասո, Կիւո, Մատո, Իպո, Ահմէտ, Օսման, շո՛ւտ հասէք, հաւաքուեցէք, ճամբայ ելէք, կարաւանը մնաց ճամբան։

Մտախթար Թարահիմն էր։

— Միւսլիմ, վազէ, բոլորին բռէ, որ ճամբայ ելլեն, ժամանակ կորուցնցնելու չէ։ Թող ճամբայ ելլեն բոլոր ժամուարմաները, քնաթիւլը, փռապանը, կամուրջ կապողները, բոլորը, բոլորը։ Պէտք է փրկել կարաւանը։ Միւսլիմն էր։

Ու ճամբայ ելան բոլորը, Իպոն, Մատոն, Հասոն, Նիսպին, Պոզոն, գիւղին աստիկանները, փռապանը, Կիւլոն, շուները եւ կամուրջ կապողները՝ ժալաթիացի Յակոբին առաջնորդութեամբ։

Յուրտ էր։ Պայծառ երկնքէն կը փչէր ուժգին քամի մը։ Կը փչէր ձորէն ալ վար ու լեռներու կողերէն ու կատարներէն տաշած ձիւնը լիաբոսն կը նետէր դաշտ։

Թուժոր, աղմուկով ու իրարու կանչելով, Ղանդալի ուղղութեամբ ճամբայ ելաւ եւ շուտով կորսուեցաւ քամիին յարուցած գորշ-սպիտակ ձիւնափոշիի վարազոյրին ետեւ։ Երբեմն միայն, երբ կարճ պահի մը համար հովը դադար առնէր, դաշտի երկայնքին կը տեսնէինք շարժուն սեւ գիծ մը, որ երթալով կը բարակնար, կը բարակնար ու կը հալէր։ Վերջապէս, կարծես փոթորիկը դայն ալ կուլ տուաւ ու դաշտը գտաւ իր համայնապարփակ խաղաղութիւնն ու սպիտակութիւնը։

Կէս ժամ անցաւ, մէկ ժամ, մէկուկէս եւ դեռ ոչ մէկ լուր կամ հետք անոնցմէ։ Զեռքս ճակտիս հովանի՝ յոգնեցայ ակնարկով ճամբան խուզարկելէ ու քունի մը անգամ տուն մտայ տաքնալու եւ կաղաւթուելու։ Երկու ժամ ետք, վերջապէս, կարծեցի նշմարել հեռու դաշտին վրայ շարժուն սեւ գիծ մը եւ հրացանիս փողը երկինքն ի վեր բռնած՝ կրակեցի երեք անգամ։

Հովի թեւերուն վրայ եկաւ անոնց պատասխանը՝ խուլ ու անդնդային։

— Կու գա՛ն, — պոռացի ես գիւղին դռնալով, — տուին պայմանադրական նշանը, կու գա՛ն...

Գիւղը սիրտ ունի։ Ու այդ սիրտը, ուրախ աւ արագ, կը բարախէ հիմա։ Գեղացիք, կողբիս կեցած, ձեռքերը իրենց աչքին վրայ հովանի ըրած՝ կը փորձէին կարգաւ հեռաւոր ճամբուն սպիտակութիւնը։

Կարծիքի, քաջալերութեան, յոյսի ու աղօթքի բեկորներ։

— Եւրաք, գուն հասնիս։

— Վալիսի գիւրեթն առաջ չեն հասնիր գիւղ։

digitised by A.R.A.R.®

— Բերանդ բարով բաց, ծեփ Բեփինկ :

Վերջապէս, դաշտի կտաւին վրայ կ'երեւի, այս անգամ որոշապէս, շարժուն սեւ բիծերու շարք մը, որ յամբօրէն կը յառաջանայ, ձեւ ու ծաւալ կը փոխէ, դանդաղ, բայց վստահ կերպով կը մօտենայ գիւղին :

Ահա արդէն նորակառոյց կամուրջի կռնակին վրայ են ու տրեխներու ձիւնը կը մաքրեն զոփելով : Կը խօսին պոռայով : Շուններն շողի կ'արձաւնէ : Շուները կը հաջնեն, ետ առաջ կը վազեն եւ ուրախ բացադանչութիւններով կը լեցնեն օդը :

Կարաւանը գիւղ հասած է արդէն : Մինչեւ այդ պահը հանդիսատես կիներ ու ծեփեր կը նետուին առաջ, սառած ճամբուն վրայ քաշկոտտուող մարդոց ու անասուններուն օգնելու :

Միայն մուխթար Իբրահիմն է, որ, յուսա ու անշարժ, իր աշտարակաւոյ հաստկով կայնած է գիւղի սահմանին վրայ : Ու կը դիտէ կատարուածը :

— Թի'ւ, — կը պայթի յանկարծ, — կուճաւի ալընուս (Փետրոյարին) եղով ու շալակով պաշտը պիտի կրենք ու բանակ կերակրենք, թի'ւ...

Կարաւանը հասած է գիւղամէջ : Էշերու, եղներու, երկու նիւնար ձիու եւ քսան շալակաւորներու կարաւան մըն է : Օր մը առաջ, աղուոր օդով մը ճամբայ է ելած Ղանդալէն եւ փոթորիկի բռնուած : Տասնօրեայ ժամ է ճամբան եւ ձիւնին ու բուրբի մէջ : Ինչպէ՞ս դիմացած են՝ մարդ չի հասկնար : Եղներու կնդակները մաշած են ու կ'արիւնին : ձիւները կը շնչեն յոգեկաւքերու պէս, իսկ մարդիկ հրաշքով կը մնան ոտքի :

Կարաւանը կ'առաջնորդէր մեր սպասաւորներէն Պողոս՝ ցորենի պարկ մը շալկած : Անոր կը հետեւէր Նիտղին : օրտուցի հայր նոյնպէս շալակաւորի մը բռն էր առած : Յետոյ կու դային թուրքեր, քիւրտեր, շուներ ու ոտտեկաններ : Վերջապահը մայաթիացի Յակոբն էր, որ կռնակին ձեծ ու ծանր պարկ մը ունէր ու ճակարկ քրտինք :

— Այդ ի՞նչ վիճակ է, Յակոբ, չէ՞ր կրնար աւելի պղտիկ պարկ մը շալկել, — կ'ըսեմ իր վիճակին մեղքնալով, որովհետեւ Յակոբի շուներն ու քրտինքը այնպէս մը կը մխան, որ կ'ըսես, ահա՛ կրնաս ձեռքդ երկարել ու բռնել զանոնք :

— Ախպօրս ըսեմ, — կը խօսի տն, — Տողանին բռն է :

— Ո՞վ է Տողանը :

— Տողանը ահա այս եղն է, այս ասլանը, — ու ցոյց կու տայ իր առջեւի ձեծ, յոգեած դեղնաւոյն եղր : Յետոյ, ձայնը ցածցնելով կ'աւելցնէ, — իմ եղն է :

— Քո՞ւ եղբ :

— Հապա՛, կը կարծես թուրքի՞ եղան համար այս բեռը, երկու ժամանակ ճամբայ ձիւներուն մէջէն հողիս բերանս բերելով՝ կրեցի : Զե՛, այդչափ տխմար չէ՛ ախպարդ : Հոն որ հասանք ու այդ եղը որ տեսայ՝ սիրտս թզբրտաց : Շա՛տ կը նմանէր իմ եղան : Մօտեցայ, բեռը շալկելի, սկսայ օգնել : Քանի կը նայէի, այնքան կը համոզուէի, թէ իմ եղն էր : Բայց այնքան նիւնարեղ, հալեր-մաշեր էր, որ չկրցայ, չէի կրնար վստահ ըլլալ : Գէս հողի եղած տիրոջը մօտեցայ : Միքիսայա, խօշ-պէշ, մեքիլի՛սիլիկ (ո՞ր տեղացի էք) : Գովեց իր եղը : Ասա՛՝ հարցուցի, թէ ուրիշ՞ ոչնած է զայն : Ըսաւ՝ մալաթիացի քիւրտերէն : Ըսի՛՝ զբանի տարու է : Ըսաւ՝ «Ա՛յ ծեփահաւու վրայ է : Գնած ատենս լորս տարու էր, հիմա եօթին կը մօտենայ, բայց քանի մը շորս տարունոց եղէ աւելի ուժեղ է դեռ : Անոր այս վիճակին մի՛ նայիք : Գեռ ես անոր յոգնելը կամ լուծին տակ պատկիւր չեմ տեսած... Կասկած չկար, իմ Տողանն էր : Զիւնին մէջ առջեւ ծուռնիկ եկայ, պաշի քիթն ու բերանը, աչքերը, թարթիչները : Կոտորներուն մէջտեղն ու վիզը քերծ-

ցի, բայց սիրտս չհանգստացաւ: Փլցուցի բեռը: Շալկեցի ես: Մնացածը պիտէք:

Գիւղացիք ու նոգաւայր պաշտօնէութիւնը արդէն բռնեցին ու անասուններուն մէկ մասը տեղաւորեր էին: Դուրսը կը մնային Տողանն ու քանի մը ուրիշ եղներ: Եկան հաւաքելու զանոնք, որ լեցնեն դոմ: Յակոբ ընդլզեցաւ: Ի՞նչ, իր Տողանը դեռ հասարակաց դոմին մէջ, այդ անասունն ու արհամարհելի անասուններուն քով, լսուած բան է, մեռած է ինք... խիղճ չունի՞...

— Ի՞նչ ընենք, — ըսի ես, — պալատ կամ հիւրանոց տանինք:

— Եթէ անոնք չեն հասկնար, — վշտացաւ ան, — թուրք են, քիւր են, չո'ւն են... կը հասկնամ անոնց չհասկնալն ու չըմբռնելը, բայց դո'ւն, դո'ւն, որ հայ ես, դո'ւն, որ արաբացի ես, որ հետս ազ ու հաց ես կերեր, դո'ւն, որ չհասկնաս դիւ, ա'տ կը ծաղէ միկէր... Ձե'ս հասկնար, արաբար ջան, առ մէկ անասունէն զատ ա'լ բան չէ մնացեր նախկին շէն օճախէս... կիւն, ծնողք, տուն, զաւակ, տքո, տղի, հող, ամէ'ն բան, ամէ'ն բան կորսնցուցեր եմ: Կը հասկնա'ս, ամէ'ն բան... ճամբու եզերքին բուսած խոտի մը պէս մինակ ու ոտքի տակ եմ մնացեր: Եւ ահա Աստուած կը խղճայ վրաս ու Տողանը կը զրկէ ինծի: Եւ դուք ելեր էք ու կ'ուզէք, որ սիրտ չունենամ, հալած-հալած, կաշի-սակոր մնացած անասունս ուրիշներու բորոտ կենդանիներուն հետ նետեմ հասարակաց դոմը, որ մինչեւ ատու հանդիստ անկիւն մը չզտնէ ոսկորները հանգչեցնելու... սիրտս պէտք է, հա՛, ինչպէ՞ս կարելի է, ինչպէ՞ս կարելի է... վերջապէս էմբոսար է, չէ՞...

— Մեր ձեռքը չէ, Յակոբ ջան, մեր կամքով չէ, որ եզդ ալ քեզի պէս դիտուրադուեր է, յախտակուեր է իր օրինական տէրերէն ու ինկեր է Բիրտիստանի սա անիծուած շէօկը: Եթէ մեր ձեռքը ըլլար, եթէ իմ ձեռքը ըլլար, ոչ թէ մէկ, հազար Տողան մատաղ կ'ընէի քեզի:

Ա'լ պատահեալ չտուաւ, նստաւ ու յուսարեկ տղու մը պէս սկսաւ լայ: Յոգնած, շա'տ յոգնած ըլլալու էր:

Մուխթարին հետ ցած ձայնով պահ մը խորհրդակցելէ ետք, դարձայ Յակոբին ու ըսի.

— Մի' լար տղու մը պէս, Տողանը պիտի փոխադրենք տեղ մը, ուր դուն կրնաս հոգ տանել անոր եւ հանգիստի ժամերդ միասին անցընել Գո'հ ես:

Մեծ դժուարութեամբ եւ քիչ մըն ալ սպառնալով համոզեցինք Տողանին թուրք տէրը, որ արտօնէ անոր տղու փոխադրումը:

— Եզդ սաղ սէլիմ վաղը ինձմէ ուղէ, — ըսաւ մուխթար Բերաշիմ, որ յատկապէս շատ էր յուզուած իր կենդանիին հանդէպ հայուն ցուցադրած սէրէն:

Միւսիւրին փոքր աղջիկը, Ֆահրիէն, որ բնաւ ինձմէ չէր հեռանար, իր բարակ ձայնը բերաւ մերիկին խառնելու.

— Եթէ ասոնք եզիդ գլխուն բան մը բերեն, ես պապայիս կ'ըսեմ: Ես, գիտե՞ս, միւսիւր բէկին աղջիկն եմ:

Անոր երաշխաւորութիւնը ամէն ընդդիմութիւն հաւեցուց: Ես խօսեցայ բարեկամուհիի մը՝ Ելիֆին հետ, որ սիրով տրամադրեց առուստի ու գարիի ոսկենման յարդով լեցուած մարազն ու տաք, հանգստաւէտ դոմը: Տողանն ու Յակոբը փոխադրուեցան հոն՝ եւ տախտակէ ծանր դուռը դրոշմեցաւ ասոնց վրայ:

Ձմեռնային կարճ օրուան իրիկունը շուտով իջաւ երկնքէն վար ու գիւղը պատեց. բայց գիւղեր մուր չէր. հալածակ աստղ ու լուսին ըլլալուն՝

գիշերը մութ չէր, առատ ու սպիտակ ձիւնէն ցոլացող փայլը գիշերը կը դարձնէր թափանցիկ ու կախարդական:

Դիմացի սարէն սոյնահար դալ մը կ'ոռնար ու գիւղին խրճիթները, իրենց աչքերը դրացն, հանդարտ կը քնանային:

Անկողնին մէջ պառկած՝ երկար խորհեցայ Յակոբի մասին ու օրտոտ լեցուցեալ յուզումով: Իրիկունը, պառկելէ առաջ, Նայիլէ հանքի խոշոր թաս մը լինային անանուխով բուրումնաւէտ թանապուր տուտ, որ տանելով Յակոբին:

— Մարդ մը, որ իր եզը կը սիրէ աղբան, չի կրնար չար լլուլ, — ըսաւ ան՝ շողելի թասը ինծի տուած ատեն:

Երբ դայն Յակոբին տալու համար դո՛ւ մտայ, ան արդէն աւարտեց էր իր Տողանը հանդուսաւէտ ընելու աշխատանքները ու լեցուած մսուրին առջեւ կեցած, հիացիկ կը դիտէր յարդին մէջ դարձող ճապուկ լեզուն ու տամուկ զիթը Տողանին:

Ձիւ տեսնելով, ժպտեցաւ:

— Ես, ստիք (ծղոտ) գիշերը, լուսնի լոյսով արտէն կալ բերելը կը սիրէի, — ըսաւ ան՝ հետեւելով իր մտածման թելին, — կեռասներէ մազուսով (1) խոշոր սայլ մը ունէի: Երբ այդ սայլը մինչեւ պոկունքները բեռցնէի, միայն զոյգ մը գոմէշ կրնար քաշել դայն: Բայց հոգը չէր Տողանին, որ իր արժանաւոր էշն (լծակից) ունէր: Անոր անունն ալ Եղլտըղ էր: Ան ալ ասոր պէս մեծ ու դեղին էր, բայց ճակտին ճիւղ մէջտեղը սպիտակ խոշոր աստղ մը ունէր. քանի մը ճերմակ թել ալ՝ պոչին ծայրը: Երբ արդէն ճամբայ ելլէի, մինչեւ դիմացի գեղին տանիքները քաջ աստղերուն տակ պառկող գեղացիք կը հասնային, թէ Յակոբը գիշերով անկի կը բերէ կալ:

— Ինչէ՞ն, ինչէ՞ն կը գիտնային, — հարցուցի ես:

— Մազուին սրտալէն:

— Ուրիշներու մազուն չէ՞ր պոռար:

— Ուրիշներունը տարբեր, ճաթած ձայն ունէր, միայն իմ մազուս էր կեռասի փայտով շինուած:

Բառին բովանդակ առումով կ'ապրէր անցեալը. մըտտ առաստաղի մէկ անկիւնին սեւեռած աչքերը կը շողային ու իր գիւղացիի խորշակահար դէմքը երանութեամբ լուսաւորուած էր: Մոռցած էր, թէ հիւրընկալ քրտուհիի մը գոմին մէջ էր: Կը խօսէր իր եղան, սայլին, մազունին ու իր կալը լեցնող ցորենի գէղի մասին ու հպարտ էր այդ բոլորով: Կարծես այս բաները չէին պատկաներ անցեալին, բնաւ պատկանած չէին անցեալին. կարծես բնաւ աւերուած չէր իր գիւղը և բոցը չէր լափած իր կալերը: Կարծես այդ բոլորը բնաւ գերուած, աւերուած, կողոպտուած չէին: Իր հոգիի աչքերուն առջեւ իր հայրենի գիւղը, խաղաղ ու օրհնարե՛ր, աշխատանքէն պարտաւած կը ներհէ՛ր անկողնութեամբ ու իր բերանին մէջ «մազուս կեռասի փայտով էր շինուած»ը կը հնչէր զգաւս ազամանդով էր ծնփուած»ի պէս...

Յաջորդ առաւօտ, օդը պայծառ էր ու սառը, բայց երբ արեւը քարձաւ հորիզոնէն վեր, կտուրներու եւ տանիքներու վրայ գիղուած ձիւնը սկսաւ արտառուել:

Գիւղն ու շուները թափեցան դուրս: Պառաւները պատերուն տակ, արեւուն առջեւ շարուեցան եւ փողոցներուն մէջ հալող ձիւնէն նիհար առուներ կազմուեցան:

Գարնան հեռաւոր ոտնաձայնը կու գար: Դիմացի սարէն կաքանձերու կոկոտցը հասաւ մեղի ու անամպ երկնքի վրայ թռչուններ երեւցան:

ժամանակ էր, որ կարաւորանք համբայ ելլէր: Էլիֆի դոմին ծանր գուռը
զանդազօրէն բացուեցաւ ու շողիկ թանձր խաւի մը մէջէն Տողանը զուրս ե-
լաւ հանդարտ ու վեհափառ դանդաղութեամբ:

Մաքրուած ու ոսնորուած էր, փոքր լեցուած եւ ուռած՝ թմուկի մը
պէս: Ուռած ա՛յնքան, որ կընայիր այդ նիւարցած եղան կոնակին հաւկիթ-
ներ շարել: Տամուկ քիթը պատուած էր ոսկէ յարդի մզեղներով: Ականջները,
դո՛ւացած ու հանգչած անոտունի իր ականջները, կախ էին, գերեջանիկ
արտադարձութենով աչքերը՝ կիսախուփ:

Կ'որոճա՛ր...

Բերրի դրին կոնտիկն ու խառնեցին զայն կարաւանին:

Մուխթարը ու Պաշրիկ հանրմը հետս էին, երբ մալաթիացի հայուն
ընկերացայ մինչեւ գիշին սահմանը:

Հոն, ան կանգ առաւ: Մօտեցաւ մեղի հետ Տողանին հետեւող թուրք
տղուն ու անոր ափին մէջ արծաթ մէճիտ մը գնելով՝ ըսաւ.

— Առ այս արծաթը ու յանուն Ալյահին ու Մարգարէին, լաւ հող տար
այս եղին: Գիշերը ես կուպրով ծեփեցի անոր կնգակները որ գիմանան ճամ-
բուն:

Մոեցաւ, առաւ բարի ու հեղ անտունին գլուխը իր թեւերուն մէջ,
զրաւ իր գլուխը անոր գունչին ու աչքերը փակեց: Պահ մը, երկա՛ր պահ մը
մնաց այդպէս, ու յետոյ շտկուելով՝ ըսաւ.

— Գացէ՛ք, ու Աստուած թող բլրայ ձեզի հետ...

Կարաւանը, սեւ ու շարժուն գիծ մը գծելով դաշտի սպիտակ հարթու-
թեան վրայ, դանդաղօրէն անհետացաւ հորիզոնէն:

Այն ատեն մալաթիացի Եադուպը տուն եկաւ ու ա՛յ անկէ ետք ոչ ոք
տեսաւ անոր ժպտիլը: Ապրեցաւ Սուրբ Գիորգի Ղազարոսին պէս: Որովհետեւ,
ինչպէս կ'ըսէ Սրբազան Մասեանը, Ղազարոս, Յիսուսի հրամանով՝ յարու-
թիւն առնելէ ետք, լման քստն տարի ապրեցաւ, բայց բնա՛ւ, բնա՛ւ չժպտե-
ցաւ:

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ



ՄԿՐՏԻՉ ՀԱՃԵԱՆ

(1915 — 1985)



Բանաստեղծ, արձակագիր, հրապարակագիր և ճկարիչ Մկրտիչ Հաճեան ծնած է 1915թ. կելվի (Թուրքիա)։ Միջնակարգ և բարձրագույն կրթությունը կը ստանայ Պոլսոյ Կեդրոնականին և համալսարանէ ֆիզիկոսութեան բաժանմունքին մէջ։ Հազիւ կնոյրոնականէն ընթացաւ արտ, պոլսեանց մամուլին մէջ կը սկսի աւարտագրել գրական և երաժշտական ճշմարտներ, արձակ էջեր և նորավիպային պատկերներ, որոնք հետզհետէ կը ծաւալին դէպի քարգմանական և ինքնագիր գործեր, ինչպէս՝ Էստոն Ռոսքամի *«Սիրանո ար Պերժէ-բաթ»*, ժամ Անույի *«Ռոմէո և Ճիւլի»*, Կոլտանի *«Պանդոկապետուհի»* և *«Վնասեալ»* անուն ինքնագիր թատերախաղը, ուր ի յայտ կու գայ իր գաղափարի խառնումովն ու յեղաշրջական վերլուծումներէ ախորժող մասնագութիւնը։

1933ին սկսեալ Ափիւսի կարեւորագոյն թերթերուն և հանգէլներուն ժապետային և գեղարուեստական հարցերու տեղեկագրող յոգւածներով աշխատեցան Մկրտիչ Հաճեան, տակաւ առ տակաւ, արձակէն կ'անցնի բանաստեղծութեան ոլորտներուն և կը ստորագրէ արդիական ըմբռնութեամբ բուզքին յամմուած իմացազաշտ *«Թերթ»*ները։

1973ին, Հ. Բ. Ը. Մ. ի լիկիւս Մանուկեանց գրական մրցանակին զրկուած Մ. Հաճեանէ *«Բոցեր»* *«Թերթ»* թերթագիրից կ'արժանանայ դատականի յիշատակութեան և կը ազատի նոյնանուն երկնադրանքն ծախելով։

1977ին, հեղինակին *«Հոգէն և Կրկէն»* բանաստեղծութիւններու հաւորը կ'արժանանայ լիկիւս Մանուկեանց գրական մրցանակի առաջին պարգեւին։

Մեքսիկոյի մէջ 26 Նոյեմբեր 1985ին իր աշխրջ ընդմիջտ փական գեղանկարչին գործերը ցուցադրուած են Մեքսիկոյի, Նիւ Զորէի, Պոսթընի և Երեսնի մէջ։

Մ. Հաճեանի պատմութիւններն ու արձակ էջերը ցրուած կը մնան *«Բազմեթ»* և *«Սփիւռ»* ամսուայի հաւաքածոներուն մէջ։

Մ. Հ Ա Ճ Ե Ա Ն

ԱՐԵՎԷՎԱՆԻ

Արեւելք դարձիր
արեւը վառելու
ուռած երակներովդ սարսուռ
շնչէ՛, ծծէ՛ լիաթոք
այս կրակն անգին
այս կրակը սեւ

ագռաները դուրս կը պոռթկան տեղակապիճներէդ
սիրամարգ մը կը շիկնի պարտիդ վրայ
ու քրտնախորտակ բոցին մէջ
եւ քարթիչներուդ վրայ
ուրեմ սպտիկոյդ կ'ըլլան հրավառ վերքիս

քրթո՛ւ՛ կարմրաւառ տեղանքիդ հետ
ու մարմինդ կը ծակէ կ'անցնի
տխար կորուսեալ ժպիտ մըն է տեղանքիդ
աւա՛ղ
որ չի գիտեր ուր երթալ մարիլ

քրթո՛ւ՛ շառափայլ ցանկութեանդ քափով
անբանքիտ աչքանքդ զարնելով ծունկերուդ
ներմակ պզտիկ ծաղիկն է աչքունքդ անմեռ
որ կը սպաննէ անսահման խաւարներն ու ժամերն

Արեւելք դարձիր
արեւը վառելու
շնչէ՛ երակներովդ
ծծէ՛ այլած ջիւղերովդ այս մութը խոնձառոտ
գերեզմանէն առաջատ
հրաբուխէն մինչեւ ֆափիւ
միսերդ կը նկարուին բիրբրուս մէջ
եղունգներդ կը բզկտեն պողպատը հպարտութեամբ

օձ մը կը գալարուի հիմա
ցանկաբոյր լինին մէջ սարսուռիս
որուն ափին
շունչի մը պէս կանգնած
եւ անհունօրէն շնչասպառ
պատկերս կը դողդալ
ու պատկերիս մէջ տխրօրէն
եւ գիւ կը տեսնեմ
բայց չեմ ուզեր
չեմ ուզեր ֆանջալ

digitised by A.R.A.R.@

Ա Ն Ո Ն Ք

Ազիւս մը իսկ չբերին մեր բարձրացուցած շէնքերուն
Պտուտակ մը իսկ չբերին մեր շինած մեքենաներուն
Ուզեցին տալ միայն խոյանք մը
Որ չկար մեր հոգիներուն մէջ
Ու տանիլ մեզ տարբեր հարկուններ երազովս

Մեր նախամօր կը սպաննէ զիրենք ամէն օր
Որովհետեւ
Մեր բանտերուն մէջ իսկ մեր իշխաններուն կը վերածուին

Անոնք
Թշնամի չսպաննեցին որեւէ ճակատի վրայ
Որովհետեւ ո՛չ մէկը թշնամի կը նկատէին իրենց

Անոնք
Զգողցան ո՛չ հայրենիքի անունով
Եւ ոչ ալ կառավարելու համար մեզ

Բանաստեղծ կը կոչուէին
Անոնք

ԼԵՌ, ՄՌՆՁԷ՛ ԻՆՄԻ ՀԱՄԱՐ

Լուսնագէտ ահագնեան
Եւ յորդագեղ թիւերով մեռնող բուերու
մարտահրաւեր ազազակներէն ետք
սառուտանքն անա կը քանդուին գորշ բացերով
ո՛վ լափալլ լեռ կապտերակ
ո՛վ շնչահատ լինելութիւն հեռմանի
ո՛վ սառուցեալ շրջանայեաց լերկ գագաթ
ո՛վ սրբարան ժողովուրդներու ասիկա
ո՛վ լեռնացած պատմութիւն սառուցեալ
լեռ վեհաբարձ
լեռ տրամաշուկ
երբ ծռի առեղծոքը արեգակներու դրութեանց
երբ սպառի հասուն իմաստութիւնն անգութք երկիրներուն
երբ կողերուց վրայ վերջին մարդուն անէծքն ալ սառի
թօթափէ՛ ձիւներդ եւ մանչէ՛ ինծի համար
ես վարն եմ
բայց օր մը պիտի բարձրանամ քեզմէ վեր
սէրերով ցաւերով
արբեցութեամբ ու երազով

digitised by A.R.A.R.@

Խ Ա Չ Ե Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

Սիրելի Աստուածորդի.
 Ներա՞ծ ես արդեօք մեզի.
 Ներա՞ծ ես որ խաչեցինք քեզ:
 Ձեմ գիտեր,
 Բայց կը տեսնեմ որ
 Դարերէ դարերէ ի վեր,
 Եկեղեցիներու խորաններէն,
 Նկարազարդ պատերէն
 Ու խոյակալիս սինեռէն,
 Թանգարաններու նրբանցքներէն
 Եւ ամէն ամպի տակէն
 Կը շարունակես մեզի ճայիլ
 Ահաւոր տխրութեամբ,
 Անսահման քախիծով
 Ու սառեցնելով ամէն ժպիտ
 Ամէն յուսատու ցով՝
 Մեր տժգոյն շրթներուն վրայ
 Առյաւելտ կարկամած:

Բայց պէտք չէ՞ որ ներած ըլլաս արդէն մեզի,
 Քանի որ ներգործիւն կը փարզէիր:
 Պէտք է որ վերստին սիրես մեզ,
 Քանի որ սէր կը փարզէիր:

Թերեւս դուն ալ չէիր գիտեր
 Որ քեզմէ առաջ ինչե՞ր խաչեր էինք մենք:
 Ո՛չ ոք կրնայ պատմած ըլլալ քեզի
 Թէ քեզմէ ետք ինչե՞ր խաչեցինք:
 Ու տակաւին ինչե՞ր պիտի խաչենք:

Պէտք չէ՞ գիտնաս այլեւս
 Թէ ի՞նչ կ'ընենք մենք հոս:

Ի գուր կը փորձես
 Դարաւոր քախիծով
 Ու անյատակ յուսահատութեամբ
 Դատապարտել սա պուտ մը կեանքը,
 Զոր Հայրդ շնորհեց մեզի, օր մը,
 Ինչպէս եսկայական ժայռը
 Մանրադիտական ճեղք մը կը շնորհէ
 Դիպումով իր վրայ ինկած սերմի մը,
 Որպէսզի ծիլ արճակէ արեւուն դէմ:

digitised by A.R.A.R.@

Ու դուն
Եկաք պարզապէս հասկցնելու համար մեզի
Որ ապրիլը
— Մեզի պէս ապրիլը —
Ոնիք էր,
Եւ տառապանքն ալ
Մեզ էր դատապարտելի:
Պնդեցիր որ
Մենք մեր դրացիին հանդէպ
Միշտ նայնքան բարի պէտք է ըլլայինք,
Միշտ նայնքան բարի, քան Հայրդ եղաւ մեզի հանդէպ:

Բայց մենք մարդ էինք մահկանացու,
Աստուածաբան շնորհով,
Մինչ կու գայիր հաստատելու որ
Մեզաւոր ճերագործներ էինք միայն
Դատապարտուած պատիժի,
Դատապարտուած ամուլ ապաշխարանքի:

Կը կարծէինք թէ
Այս կեանքին համար եկած էինք հաս,
Բայց դուն հաստատեցիր որ
Այս կեանքը մեղանշելու կրկէս մըն էր միայն:
Մենք այս կեանքին մէջ
Մեզ ուրախացնող,
Մեզ երջանկացնող
Ինչե՛ր, ինչե՛ր գտած էինք,
Մինչ դուն
Եկար փաստելու որ
Այդ քալորը
Ազտաւ քայմ,
Յանցանք,
Մեզ էւ Ոնիք էին:
Ինչպէ՛ս կրնայինք համաձայն ըլլալ քեզի,
Մինչ մեր շրթները կ'այրէին պապական,
Մինչ մեր իրանները կը գալարուէին տափանքէն,
Մինչ մեր արիւնը մեր եղբոր արեան կը տնջար:
Ինչպէ՛ս կրնայինք հաւատալ քեզի,
Երբ միայն սուտով զրահուած՝ կրնայինք մեր հացը ճարել:
Կ'ենթադրուի որ գտնէ հիմա հասկցած ես
Թէ ինչու՛ համար իրաւունք ունէինք
Քեզ խաչելու:
Ներէ՛ փշաւար լեզուիս,
Որովհետեւ պէտք է ներես,
Որովհետեւ չես գրտար
Թէ քեզմէ ետք ինչե՛ր խաչեցինք մենք
Ու տակաւին ինչե՛ր պիտի խաչենք:
Ներէ՛, ներէ՛,
Ներէ՛:

Մ Տ Ո Ւ Ե Ր Մ

Կ'անցնիմ
 կը փախչիմ ստուերէս
 որ մերթ կը սարսռայ
 անապարտ շրջագոյնս մը վրայ
 ու մերթ կը յամենայ
 ինձմէ աւելի աննշան մարդու մը վրայ
 որ իր ոչնչութիւնը կը պտտցնէ
 ետեւէս քայլով
 երբեմն ետ կը դառնամ
 ո՛չ թէ շուքս բռնելու համար
 այլ
 ճշգնելու համար գոյնը
 անապարտ շրջագոյնսմէն քանցքիմ
 եւ կամ չափելու համար հասակը
 ինձմէ աւելի աննշան այն մարդուն
 որ յամառօրէն ետեւէս կը քալէ
 Ստուերս անհամբեր ինձի կը սպասէ
 չի յագնիր քնաւ
 կ'ուզէ պարզապէս
 իր առաճգական գոյութիւնը շարունակել
 ու կը թափառի անցորդներուն վրայ
 կը յամենայ իրերուն վրայ
 որովհետեւ չի գիտեր գտնել տխրաբէ խելացիէն
 ո՛վ անմեղութիւն
 չի գիտեր գտնել աղաւթը տգեղէն
 կամ զանազանի հեշտագրգիտը անհրապարտէն
 կեանքը մահէն
 ապրող էակը անշունչ քարէն
 երկտառարդութիւնը ծերութենէն
 սպիտակամարքը սեւամարքէն
 քամիւնիսքը քարիքալիսքէն
 կաթուղիկը քողոքականէն
 եւ մարդը մարդէն

Այսպէս է որ
 ինձմէ աւելի երջանիկ է ստուերս
 ու ես կ'անցնիմ կը փախչիմ ստուերէս
 դասակարգային
 ցեղային
 պատմական եւ բնկերային ամէն խնդիր
 Ու ես կ'անցնիմ կը փախչիմ ստուերէս
 կը փախչիմ գոյութեանս այն միակ մասնիկէն
 որ երջանիկ է իսկապէս

ՄԿՐՏԻԶ ՀԱՃԵԱՆ

digitised by A.R.A.R.@



ՄԻՄՈՆ ՄԻՄՈՆԵԱՆ

(1914 — 1986)

•

Արձակագիր, հրապարակագիր և ռուսագիտ Միմոն Միմոնեան ծնած է Այնթապ, 1914 Մարտ 11ին: Ամ առաջին կնիքն է Սամոյ կերմու գիւղէն շաղապա՝ Օլէի:

Նախնական աւանդը կը ստանայ ծննդավայրին մէջ: 1921ին, ընտանիքն հետ գաղթելով՝ կը հասնի Հալէպ և կը յաճախէ տեղւոյն վարժարանները: 1930ին կու գայ Լիքնամ և կը հանդիսանայ Ամբիլիասի դպրիվաթին առաջին ուսանողներէն մէկը: 1935ին՝ շրջանաւարտ, կը մեկնի Հալէպ ու կը Յուլիոսի ուսուցչական առաքելգին: Եւրոյ 20 տարւում ուսուցչական ծառայութենէ հտէ, 1955ին կը հեմէ «Սեւան» հրատարակչաւոնը: Իսկ 1958էն սկսեալ լոյս կ'ընծայէ «Յփուսթ» շաբաթաթերթը, որ իր խմբագրութեամբ կը շարունակուի հրատարակուիլ մինչև 1974 թուականը:

Ս. Միմոնեան կ'ունենայ գրական բեղուն գործունէութիւն: 1965ին կը հրատարակէ «Կը ինդրուի... խալաճիւնը» երգիծական վեպակը, 1967ին՝ «Եմրապետ Աւրան աղէկը» և «Միփանայ բալեր» պատմականներու հաւաքածոյին տաղիկն հատորը, 1970ին՝ «Միփանայ բալեր»-ում ներկրող հաւաքածոն, 1988ին՝ «Լեռնականներու վերջալոյսը», 1972ին՝ «Լեռնա հաճատագիրը», իսկ 1981ին՝ կը տպէ, սակայն չի հրատարակել «Լեռնաճաղարան» վեպը:

Ս. Միմոնեան ունեցած է մաւր թանասիրական հետաքրքրութիւններ: 1948ին կը խմբագրէ «Յիստորիական ձեռագրաց»ի երկու հատորները: 1965ին լոյս կ'ընծայէ «Մեռնալոյսի դրականութիւնը», իսկ 1981ին կը հրատարակէ «Նորայայտ ազատաց ժը՝ Մանփանա Գալանցի» խորագրեալ հատորը:

Իր վաստակին մաս կը կազմեն մաւր հայոց պատմութեան և հայերէն լեզուի գաւազիրներու շարքերը:

Ս. Միմոնեանի հրապարակագրական և ուսուցչական վաստակին յորելեանը կը առնուի 1983ին, Լուս Անգէլսի մէջ:

Կը մահանայ 24 Մարտ 1986ին, Պէյրութի մէջ:

digitised by A.R.A.R.@

Ս. Ս Ի Մ Ո Ն Ե Ա Ն

Ա Ն Ո Ւ Ր Ի Ծ Է Ր...



Ներքե՛, մայր, որ ես գրեցի
քու Պետոյիդ մասին:

Պետոն մօրս առաջին ամուսինը եղած է եւ հօրս՝ մտերիմ բարեկամը: Հայրս եւ Պետոն իրրեւ բաժնեկից ընկերներ միասին աշխատած են նոյն ջաղացքին մէջ: Պետոյի մահուանէն ետք հայրս ամուսնացած է անոր կնոջ՝ այսինքն մօրս հետ:

Պետոն իր մահուանէն ետք շարունակած է ապրիլ մեր տան մէջ եւ ցարգ կ'ապրի իրրեւ ամուսին, իրրեւ հայր եւ իրրեւ ընկեր, քայց՝ այլեւս թշնամի դարձած ընկեր:

Հայրս, որ իրրեւ եղբայր սիրած է Պետոն, միակ դժգոհն է մեր տան մէջ անոր վերապրումէն եւ անոր հետ իր թշնամութիւնը կը սկսի գերեզմանէն, երբ հոն իջաւ Պետոն:

Եւ կը յիշեմ՝ մանկութեանս՝ մեր տան մէջ ամէն անգամ, որ ծանր դժուրութիւն մը պատահէր հօրս եւ մօրս միջեւ, ասոր միակ պատասխանատուն Պետոն էր, որ տարօրինակ կերպով կը դռժէր իր մահուանէն ետք: Ու բոլոր մեծ հոգիները՝ սուրբերը, հերոսները եւ մեծ տառապողները իրենց բեղուն գործունէութեան կը սկսին գերեզմանէն անդին եւ ո՛չ առաջ:

Բայց Պետոն ո՛չ սուրբ եղած է, ո՛չ հերոս եւ ոչ մեծ տառապող մը, այլ միայն՝ սասունցի մը, Սասունի Տալոսրիկ գիւղէն, երկաթագործի մը աղան: Հայրը Տալոսրիկէ երկաթի հանքերուն մէջ աշխատած է. քարերու մէջէն երկաթի երակներ ջոկելով հալեցուցած է դանոնք եւ անոնցմով շինած խոփ, ուրազ, բաճ ու բրէշ, եւ նորոգած հրացաններ՝ չախմախիներ, որոնցմով ինք եւ իր հղբայրները, ինք եւ իր գիւղացիները կոռւած են թըշ-

նամիներու դէմ, քերտու եւ թուրք, Մուրատի՝ Համբարձում Պոյաճեանի, Միհրան Տաղաճեանի, «Պարոն» Վահանի, Գէորգ Զաւուլի եւ միւս լուսարնակներու կողքին։ Պետոյի հօր եւ անոր ընկերներուն համար երգըւած է՝ Տալարիկի գաւառի եւ քաղ։

Պետոն ջստան տարեկանին Սասունէն ելած է եւ եկած Սահուն՝ հիւսիսարեւմտեան Միջագետք, ուր ջաղացականութիւն ըրած է։ Սետոյ հաստատուած է Այնթապ՝ բազմաթիւ ուրիշ սասունցիներու պէս։ Իր քսանչինգ տարեկանին՝ ամուսնացած է մօրս հետ, որ այն ատեն հազիւ տասնեօթը տարեկան եղած է։

Պետոն եղած է շատ գեղեցիկ եւ կտրիճ երիտասարդ մը եւ խորապէս պրաւած է մօրս սիրտը։ Եօթը տարուան կենակցութենէ մը ետք՝ մեռած է անզաւակ։

— Մայրի՛կ, գեղեցի՞կ էր Պետոն, — կը հարցնէի մօրս, երբ ան, մանկութեանս, կը պատմէր անոր մասին։

— Իր նմանը չկար, — կը պատասխանէր մայրս, — սեւ յոնքեր ունէր, սեւ պոկեր, գեղեցիկ հասակ, համայափ դէմք։ Կը հապէր պէկի պէտ։ Իր առնական գեղեցկութեամբ կը նկատուէր մեր քաղաքին ամէնէն գեղեցիկ երիտասարդը։ Երանի՛ քեզի, կ'ըսէին ինծի բոլոր կիները...

Ու որպէսզի հաստատէր իր ըսածը, ամբիջապէս կը բանար իր հիւսնտուկը, օժիտի՛ սնտուկը, որ իրեն հետ եւ իրեն պէս հետգհետէ մաշող վըզայ մըն է հիւսն ու երջանիկ օրերու, որոնք այլեւս սատափիայ մշուշ ունին իրենց հետին։ Հարսանեկան հնարոյր, մաշած եւ ցեցաբնակ հաղուստներուն մէջէն՝ զոց լողուարթ, ծիրանի եւ մետաքսէ գոյներուն տողանցումէն ետք՝ կը հանէր լուսանկարներու ծրարը, կը քակէր դայն իր ապրումէ պատանձքէն եւ ինծի կ'երկարէր հարսանեկան նկարը, որպէսզի դիտեմ Պետոն, ի՛ր Պետոն։

Մօրս պատմածները եւ լուսանկարէն արատհասող դէմքին գեղեցկութիւնը հիացումով կը լեցնէին սիրտս անոր հանդէպ, որ մօրս ամուսինը եղած էր եւ որ հայրս չէր։ Մայրս ստատկացնելու համար սպաւորութիւնը, զոր կը կրէի մեռնող մարդէն, կ'աւելցնէր։

— Այս նկարին մէջ դեռ գեղեցիկ չէ ելած։ Հէ՛յ կիտի անցած օրեր։ Անակնկալ կերպով լուսանկարուեցանք։ Ա՛խ։ Զաղացքէն նոր վերադարձած էր՝ ալիւրոտ հագուստներով եւ դէմքով։ Դրացիները կը լուսանկարուէին մեր օրերուն լուսանկարչատուն չէին երթար կիները։ Անմիջապէս լուսանկարուեցանք, որովհետեւ ան մերժեց հագուստ փոխել։

Ինծի կը մնար մտովի քննել ալիւրի փաշին Պետոյի նկարէն, որպէսզի այդ սեւ յոնքերով եւ սեւ պոկերով մարդը աւելի՛ հապէր սեւութիւն, որ խորհրդանշի է ուրիշ պարագայի մը մէջ՝ երիտասարդութեան։

Մօրս աչքերուն մէջ արցունքի կաթիլները կը հասուննային նուրի հաւերուն պէս ու կ'իյնային հատ-հատ՝ դարձեալ նուրի հաւերուն պէս։

Երբեմն կը պատահէր որ լուսանկար ցուցադրելու այս խորհրդաւոր արարողութեան ատեն՝ հայրս անակնկալ մուտք կը գործէր տուն։ Մայրս արտաստաթոր աչքերով կը փաթթէր լուսանկարը իր հին պատանքին մէջ եւ կը վերցնէր։ Հայրս անխօս եւ թախծոտ կը նստէր անկիւն մը եւ խորունկ կերպով ներս կը քաշէր իր սիկարէթին ծուխը։ Հօրս թախծալի լուսնութիւնը կը տեսնէր օրեր, մինչեւ իսկ շարաթներ. այդ շրջանին բնաւ չէր թուեր մօրս հետ։

Այդ քաջական այսպէս կը ցանէր դժտութիւն հօրս եւ մօրս միջեւ։ Անբացատրելի խորհուրդով կը լեցնէր մանկական հոգին — հօրս

Թախծով, մօրս արցունքով եւ մեռնողիմ հօր ներկայութեամբ։

Երբ հայրս մեր տունէն բացակայէր՝ ամիսներ մեկնելով ջաղացք, մայրս՝ ձմրան գիշերներուն՝ թոնիրի շուրջ կը սկսէր պատմել իր Պետոյին մասին։ Մենք, իր գաւազնիւրը, բայց ուրիշ ամուսինի մը որդիները, հիացումով ականջ կու տայինք իր պատմութեան, որ հօրս բացակայութեան շնորհիւ՝ կը քակուէր ազատ եւ յուզական կերպով, մօրս սիրտը թեթեւցնելու եւ վերստին լեցնելու հին յիշատակներով, որոնք թանկագին իւղի պէս պէտք է որ երբեմն պարպուին ու լեցուին։ Մայրս կը սկսէր.

— ...Գեղեցիկ էր։ Նոյնպէս կտրիճ։ Երբ զիս ուղեւոր եկաւ, նախ մեր տունէն ներս շտաւ։ Պահ մը կեցաւ բակը եւ դիտեց չորսբուրբը, ինձմէ առաջ քննեց մեր տան դիւղը։

— Ինչո՞ւ այդպէս բռաւ, մայր, — կը հարցնէինք։

— Ախ փախցնելու յարմարագոյն կէտերը որոշելու համար, եթէ հայրս մերժէր զինք։

Ուրեմն Պետոն մօրմէն առաջ դայն փախցնելու կէտերը տեսնելու եկած էր։

Այդպէս սկսած է աղջիկտեսը։ Մայրս կը շարունակէր.

— Հայրս ի վերջոյ՝ երկար տատանումներէ ետք, որոշեց զիս անոր տալ։ Խօսքիւ պէն առաջ, Պետոն բռաւ հօրս.

— Լա՛ւ մտածէ, ալլա՜յ՝ ա՛յ չըլլայ...

Երջանիկ նշանաւորէն ետք, որուն ընթացքին մայրս եւ Պետոն իրար մէկ անգամ միայն տեսած են, տեղի կ'ունենայ իրենց ամուսնութիւնը։ Երբ ջանիկ կ'ապրին։ Պետոն շատ կը շահի։ Իր ձեռքին տակ կ'ունենայ երկու ջաղացքներ, որոնցմէ մէկուն ընկեր կ'ըլլայ ի՞մ հօրս հետ։ Հայրս եւ Պետոն հալալ եղբայրներու պէս կ'ապրին։

Պետոյին տունը հիւրանոց կ'ըլլայ։ Երկրէն եկող բոլոր սասունցիները՝ զաղթական եւ տառապած՝ իրենց հանգիստը կը դռնին անոր տան մէջ։ Ու իր աղաղակներէն շատեր անոր հացը ուտելու համար միայն եկած են իր մօտ։

Պետոն եղած է առատաձեռն։ Երբ սրճարանէ մը ներս մտնէր, տեղացիները անկիւն մը կը ծուարէին, անոր ուժէն եւ առատաձեռնութենէն վախօցած եւ այդ մէկ հոգիին համար տասը հոգինոց տեղ կը բանային, քով գիտնալով, որ անոր ետեւէն ուրիշներ պիտի գային իր շուրջ հաւաքուիլ։

Ու իր ընկերները, սասունցիներ բոլորն ալ, կը հաւաքուէին իր շուրջ. կը խմէին ու երկրի բաներու մասին կը խօսէին եւ ուշ գիշերին կը բաժնուէին իրարմէ ու կը մեկնէին իրենց տեղերը։ Ո՛չ ոք Պետոյի ներկայութեան կը համարժակէր ձեռքը քսակին տանիլ։

— Տարօրինակ մարդ մըն էր, — կ'ըսէր մայրս, — ձմրան գիշերներուն, ձիւնի եւ բուրբ մէջ, երբ իր միտքն իյնար տունը, կը ձգէր ջաղացքը եւ կու գար, կտրելով չորս ժամուան ճամբան։

Անշուշտ տունը մայրս էր՝ իր երջանկութեան օթեւանը...

Այսպէս երջանիկ եօթը տարի կ'ապրին մայրս ու Պետոն։ Իրենց միակ ցաւը կ'ըլլայ դաւի չգոյութիւնը։ Մայրս կ'ըսէ, թէ այդպիսի՝ կտրիճները անժառանգ կը մնան։ Այն օրերու բժշկական եւ պատաւական բոլոր գեղերը անգոր կը մնան դաւի մը երջանկութիւնը պարզեւելու իրենց։ Մայրս կը հաւատայ մինչեւ հիմա, որ եօթը տարի ետք զաւակ մը պիտի ունենային։ Բայց եօթը տարին կը լեցուի եւ նորը չի սկսիր...

— Այդ տարին՝ երկրէն շատ սասունցիներ եկան, հակառակ անոր, որ ո՛չ պատերազմ կար եւ ո՛չ կոտորած։ Մեծ պատերազմէն երկու տարի առաջ

էր: Պետոյի աղղականներէն ալ հինգ-մեց հոգիներ եկան. ուրիշներ ալ պիտի գային: Բոլորն ալ թշուառ էին ու հիւանդ: Իր սիրտը բզիկ-բզիկ կ'ըլլար: Իր ամբողջ շահածը կը ծախսէր բարեկամներու եւ աղղականներու համար: Հաճոյքով կ'ընէր: Ձմեռ էր եղանակը: Առտու մը ջաղացք դնաց: Յաջորդ օրը՝ կէսօրուան ժօա՝ ձայն մը առի փողոցէն: Գլուխ երկնցուցի մեք պատուհանէն...: Ուսամբարձ մէկը կը բերէին...: Մարդերը մտան մեր տուննէն ներս...: Մեռեր էր...

Ի՞նչ հարկ նկարագրել մօրս դալարումներն ու երկար տառապանքները:

Պետոն յանկարծամահ եղած էր ջրաղացքին մէջ: Երեղ յուղարկաւ որու թիւն եւ համայնական ողբ: Սուգ՝ բոլոր ստաւնցիներու համար: Բոլոր սպացոյցներուն մէջ ամէնէն խոր կերպով կ'ողբայ հայրս՝ իր ընկերը: Մայրս մասնաւոր կերպով կը շնչոյն հօրս ողբը. «Իր մեղիւնքը կը փռէր անոր հոգակոյտին վրայ եւ կու լար...»:

Մօրս սուղը հեռուհեռէ ո՛չ կը պոստիկնայ եւ ոչ կը ծանծաղի: Ժամանակը չ'ըլլար դեղ իր կոտորացող վէրքին, ընդհակառակն, կ'ըլլայ սո՛ւր: Մօրս համար ա՛յ կանգքին մէջ ընելիք մէկ բան կը մնայ՝ գերեզման տնջելիք:

— ...Նոյնիոյ ձմրան ամէնէն ձիւն օրերուն կ'այցելէի գերեզման: Հաւ կը յիշեմ. Վարդանանց տօնի օրն էր: Այդ օրը անպայման պէտք է, որ երթայի գերեզման: Գիշերը սաստիկ անձրեւած էր: Մայրս հետս էր: Մօտեցանք գերեզմանատան: Բոլոր տապանաքարերը գիշերութեւ լուացուեք էին: Մեր քաղաքի գերեզմանատունը ո՛չ պարիսպ ունէր եւ ոչ ալ պահակ: Գայլի վախն ալ կար...: Տապանաքարերուն մէջէն կը յառաջանայի: Մայրս հետեւ մնացած էր: Լուացուած սեւ տապանաքարերը կարծես շարժեցան այդ ամայութեան մէջ...: Տապանաքարերը վերածուեցան մարդկային ամբոխի...: Յանկարծ դէմս կեցաւ Պետոն՝ իր ճի՛շդ այն հագուստներով, որով մեռելական սնտուկին մէջ զրուած էր: Քարացայ... Ի՞նչն էր... Նայեցաւ ինծի ու պոռաց ուժգին, — վերադարձի՛ր եւ ալ մի՛ դար հոս...: Մայրս հասաւ ինծի եւ զարմացաւ, որ քարացած մնացած եմ: Ոչինչ ըսի իրեն: Մօրս թեւէն քաշեցի եւ վերադառնա՛նք՝ ըսի: Դեռ Պետոյի հոգակոյտին չէինք հասած: Մայրս զարմացաւ...

Վարդանանց օր, գերեզմանատուն, լուսութիւն, ամայութիւն, լուացուած սեւ քարեր, շտեմնուած գայլեր, երկու կիներ՝ որ կը քալեն տապանաքարերու մէջէն, Պետոն, իսկական Պետոն, իր վերջին հապուածներով ու վերադարձը երկու կիներու...

Այդ օրը կ'ըլլայ ճակատագրական՝ մօրս համար: Ա՛յ մայրս անկէ ետք կը հիւսէ, կարծէք ասեղով սպաննելու համար ցաւը: Անդրաշխարհային պատգամը եւ այդ միայն՝ զինք կը հանէ օուզի ծովէն: Տարուան մը ասեղի վաստակով կը չինէ լաւ տապանաքար մը՝ ի՛ր Պետոյին համար: Տապանաքարին վրայ դրել կու տայ:

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՊԵՏՈՅ ՏՕՆՈՅԵԱՆ
ՏԱԼԻՈՐԻԿ ԳԻՒՂԻ ՀԱՔՄԱՔ ԹԱՂԵՆ
ԵՐԵՒԱՆ 1880, ՀԱՆԳԵԱՒ Ի ՏԵՐ 1912 Թ.

Հաստ տապանաքարը սակայն իր բոլոր ծանրութեամբ չի կրնար մեռցնել Պետոյին սիրտը, որ կը շարունակէ ապրիլ այս աշխարհի վրայ, որ սինքն՝ մօրս սիրտին մէջ:

digitised by A.R.A.R.®

Կ'անցնի տարի մը... Հայրս կ'ուզէ զինք... Կ'ամուսնանան Կը սկսին ունենալ զաւակներ: Մայրս կը նուիրուի իր զաւակներուն՝ մեզի: Բայց երբեք չի մոռնար իր Պետոն: Անցնող տարիները եւ նոր հոգերը իրենց ճնշումին տակ՝ Պետոյին յիշատակը կը խտացնեն եւ կը վերածեն ազամանդի կտորի մը, զոր մայրս կը կրէ իր սիրտին վրայ: Եւ մայրս իր սիրտին վրայ կը կրէ միմիայն այդ քարը: Իր զաւակները կը մեծցնէ Պետոյի յիշատակով: Մայրս համոզուած է, որ մենք զաւակներն ենք մեռնող Պետոյին, վասնզի մեզմէ իւրաքանչիւրին իր յիշանալու նախորդ գիշերը մի'շտ իրեն երեւցած է Պետոն եւ առանց Պետոյի երեւումին երբեք չէ յղիացած... Այսինքն՝ Պետոն եղած է Սուրբ Հոգին...

Մայրս կտակ ըրած էր, որ երբ մեռնէր, զինք թաղեն Պետոյի մօտ: Տեղահանութիւնը, սակայն, արդէլք եղաւ իր այդ ուխտին: Բայց մայրս տուած է ուրիշ որոշում մը, զոր ո'չ տեղահանութիւնը, ո'չ պատերազմը ու երկրաւոր ո'չ մէկ բան կրնան խափանել: Միւս աշխարհի մէջ պիտի ըլլայ իր Պետոյին հետ: Հայրս դիտէ մօրս այս ահաւոր նախընտրութիւնը եւ ատոր համար տրտում է իր անձը մինչեւ ի մահ: Գիտէ, որ ճակատագրական ապահարգան մը իրեն կը սպասէ միւս աշխարհին մէջ:

Այս նախընտրութիւնը միշտ մտածել տուած է ինծի: Խորհած եմ, թէ առաջին սէրը, Պետոյի գեղեցկութիւնն ու կտրիճութիւնը, երիտասարդ տարիներու անմեղադարձ երջանկութիւնը մեծ դեր ունեցած են այս նախընտրութեան մէջ: Մայրս այս պարագաներէն ո'չ մէկուն վրայ չէլտ դրած է՝ հետաքրքիր հարցապնդումներու ատեն, այլ միայն ըսած՝

— ...ԱՅ ուրիշ էր:

Մայրս կ'ընդունի, որ հայրս — իր երկրորդ ամուսինը — եղած է տաքինի, աստուածավախ, բարի, ուղիղ եւ իրեն հետը միշտ ազնիւ վարուող: Ու հօրս բոլոր առաքինութիւնները — հոգեկան միջոցներ — տեղի տուած են մեռնողի ուժին առջեւ: Մայրս էութեամբ կը մնայ ամուսինը մեռնողին: Ու հայրս՝ մօրս Պետոյին տուած ամբողջական այս նուիրումին համար անբուժելի ցաւ միայն ունի եւ անդրաշխարհային այդ սէրը սայրասուր կը խոցէ իր հոգին: Ասոր համար իր կ'անքի ամէնէն սիրելի բարեկամը՝ Պետոն — իր մահուրէն ետք — դարձած է իր ամէնէն սիրելի թշնամին, որուն սակայն ո'չ մէկ վնաս կրնայ հասցնել իր ողջութեանը հակառակ, մինչդեռ միւսը իր մեռելականութեամբն իսկ զինք կը հարուածէ այս աշխարհի վրայ:

Մենք ալ — զաւակներս — յարափոփոխ դիրք մը ներկայացուցած ենք մեր երկու հայրերուն հանդէպ: Մեր մանկութեանը, մօրս հեքիաթին մէջէն, խորապէս սիրած ենք Պետոն, մօրս հեքիաթով չքեղացած այդ մարդը:

Յետոյ, երբ տարիք առինք, թափանցեցինք մեր հօրը թախիծին, ու ազդուած անկէ՝ անցանք անոր կողմը եւ սկսանք հարուածել Պետոն, որ իր անդրաշխարհային միջամտութեամբը տրամութիւն կը պատճառէր հօրս: Ու մեր յարձակողականը չըջան մը տուաւ լաւ արդիւնք, շնորհիւ մեր ուժեղ զէնքերուն: Մայրս լսեց մեզմէ.

— Եթէ Պետոն լաւ մարդ ըլլար, զաւակ կ'ունենար...: Մեզ ունեցար այս ամուսինէն: Պետոն կ'ուզէր առանց մեղի, թէ մեզմով հայրս:

Մայրս լսեց: Հայրս մեզմով զօրացաւ ու յաղթանակեց: Պետոյին պարտութեան եւ անկման շրջանը սկսաւ մեր տան մէջ: Բայց այդ միտելը երբեք իր վաճը չկորսնցուց մօրս սիրտին մէջ, վասնզի հին սնտուկը մի'շտ բացուեցաւ, մօրս մօտները մի'շտ դպան նկարներու ծրարին եւ մայրս մի'շտ կրցաւ մեղմապէս քրքիլ:

— ԱՅ ԽԵՐԻՆ ԷՐ...

Վերջապէս հերքեց քանի որ զտորեցինք ու դարձանք աւելի հասուն, այլեւս կողմ չեղանք: Ատրկա մեր չէղողութեան շրջանն էր: Ձգեցինք, որ Պետոն անդրադարձնէր դատարանի աշխատութիւնները սոյն մեր տունը եւ շարունակէ իր սէրը մօրս հետ: Նոյն ատեն թոյլ շտուինք, որ մայրս իր հին նախնորութիւնը հրապարակէ մեր առջեւ:

Կը մնայ վերջին շրջանը, որ պիտի սկսի միւս աշխարհին մէջ: Վըստահ ենք, որ հոն ապահարդան տեղի պիտի ունենայ: Մայրս պիտի միանայ ի՛ր Պետոյին հետ, որ անշուշտ հիմա անհամբեր կը սպասէ մօրս: Մենք պիտի մնանք մեր հօրը հետ: Հայրս տրամուրդեմը եւ լեռնցիի կայծքաբէ դատաւութեամբ, իսկ մենք անո՛ւն ժպետով պիտի դիմենք վերածել ու քաղցր ունենալու մօրս եւ Պետոյին: Յետոյ վստահ ենք, որ մայրս պիտի չդիմանայ մեզմէ իր բաժանումին, պիտի դայ մեր՝ իր գաւազներուն մօտ, առանց ձգել ուղեւոր իր Պետոն: Մենք պիտի մնանք միշտ մե՛ր հօր հետ: Մայրս պիտի տատանի ի՛ր Պետոյին եւ մեր միջեւ: Պիտի առաջարկէ իր Պետոն հեւ մեր մէջը բերել եւ կապել ճերմակ ընտանիք մը՝ Ֆրանսացիներու պէս: Բայց հայրս, որ կ'ատէ Էթնիպիներու օրէնքները եւ մեր տան մէջ Պետոյի հոգիին իսկ ռիտիմ հակառակորդ է, եւ մենք, որ այս աշխարհի վրայ նման եռաբնակութեան շէնք վարժուած, պիտի մերժենք մօրս սրտագին առաջարկը...

Ի վերջոյ մեր սիրոյն՝ մայրս պիտի լքէ ի՛ր Պետոն եւ դայ մեր մօտ: Այսպիսով մենք հոն եւս պիտի կաղմենք մեր նոյն տունը: Եւ Պետոն, խեղճ Պետոն պիտի մնայ դարձեալ մինակ:

••

Այս տողերը կը գրուին երկարամտաւ աբժակուրդի մը ընթացքին: Մայրս եզրայրներէս կը լսէ, որ ես բռնեմ մը կը գրեմ սասունցիներու մասին: Ու, ընթերցող, երբ կը գրեմ ի՛ր Պետոյին մասին, արդէն պատաւած մայրս կը մօտենայ ինծի եւ կ'ըսէ.

— Տղա՛ս, չըլլա՛յ որ Պետոյի մասին այ բան գրես: Ատրկա ո՛չ Մանոն է, ո՛չ Քենկոն, ոչ ալ Մակարը...: Աճ արի՛՛ք է...

• • • • •

== Մա՛յր, ես գրեցի քո՛ւ Պետոյիդ մասին:

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆ

1945, Գուճիս, Հալէպ

ՀԱՆՐԱԿԱՌՔ

Նստել էր մուր հիւրանոցի մէջ,
 Նստել էր մուգ լուսամտի մօտ.
 Միտքս գտել էր դանդաղ ելուէջ,
 Հագիս խռով չէր — խաղա՛ղ առաւօտ:
 Մտածում էի եքերի մասին,
 Ողորկ քոյտիկը ցանցող երկաթի,
 Տեսնում էի մանր անձրերը դրսի
 Ու «դատարկ փողոց» (կտաւին պատի).
 Մտածում էի՝ լաւ է եզրեր կան,
 Որ դեռ ապրում են սեփական կեանքով,
 Անտարքեր գծեր հորիզոնական, —
 Պատուհանների, փուերի լայնքով...
 Եւ հագիւ դրած մերդաշնակութիւն
 Հագուստ պատեպատ պահերի միջեւ —
 Հռելիայն սահեց մարմին մի շարժում
 Խաղաղ պատկերի պտուերի միջեւ:
 Կարծես վթարուեց մի յանքժուրիւմ՝
 Հանրահառճի ծանր անիւների տակ,
 Եւ ես յիշելով *աղմուկ ու շարժում*՝
 Յանձնուեցի քեզ, անտի՛կ փառք...

22-1-85

ԼԱՊՏԵՐՆ ՈՒ ԿՈՑՐԸ

(Արեւելեան)

Քայլում էր կոյրը ու լապտեր տանում,
 Նրբանցքը մութ էր, անցուդարձը՝ շատ.
 Մտադրաղ մարդիկ գալիս ու գնում,
 Խոկ մա շարժում էր յամր ու անկատ:

Մէկը տեսաւ այդ արարքն անսովոր,
 Մօտեցաւ նրան ու հարցում արեց.
 — Դու որ չես տեսնում, տես աննոցաւոր,
 Ինչո՞ւ ես վառել այս լապտերը մեծ:

Աչազուրկ այրը դառնօրէն ժպտաց,
 Թէ՛ միշտ է՝ փակ են խորշերը լայսիս, —
 Բայց բռնել եմ այս նրազը առկայծ,
 Որ դո՛ւք տեսնէ՛ք ինձ, չգիպչէ՛ք ուսիս...

Քայլում էր կոյրը ու լապտեր տանում...

ՎԱՐԱՆԻ

digitised by A.R.A.R. @

Ս. Փ Ա Ն Ո Ս Ե Ա Ն

ՊԱՂՏՈՅԵՆՑ ԶԱՐՍԸ

Պաղտոն դեռ կը պարէր, երբ Սանամ պարամէջ մտաւ անոր կողքին: Տեղափոխ եղած էր էրիկը եւ կիներ իր ձախ կողքին ունեցաւ Փէս ու շալվարով, հնամաշ բաճկոն մը կոնակին տէտէ-տարիք մարդը, որ հաճոյքով ձեռք ձեռքի տուաւ դեռատի հարսին ու ժպտեցաւ Պաղտոյին: Կարծէք բան չէր պատահած Սանամին: Կը պահէր պարեղանակին կշռոյթը. կը սեղմէր ամուսինին ափը եւ Պաղտոն զգաց ու յիշեց բուն պատճառ-նպատակը անտառ դալուն: Պարը թողուց, քաշեց կնոյ ձեռքէն, հանեց խոնարմէն դուրս: Գաղթականներն քառորդը հոն էր լեցուած հիմա: Ծառադիւղները անցնող-դարձողներ ունէին բուններուն տակ՝ կէսօրուան ճաշի պատրաստութիւն տեսնող բազմաթիւ ընտանիքներ, ճլուղլացող մանուկներով: Պաղտո, որ աչքերով հետազուտած էր հեռունները անտառին, ըսաւ.

— Տեղ չկայ, ջանս:

Սանամ հասկցաւ միտքը, յարեց.

— Սիրտ չունիմ, Պաղտո:

— Աս եղա՞ւ...

— Պար չմտնելէ առաջ մտածէիր: Տուն-վրանը դառնանք:

— Լաւ. տուն երթանք: Գիշերը մէրիկը հանդիստ կը ձգէ մեզ,

— եւ այդ յոյսով ալ մխիթարուած՝ ինկան դարձի ճամբան: Արեւը կրակ կը թափէր իրենց վրայ: Գետեզրէն քալենք, թէ չէ կը խալինք մինչեւ տեղ հասնինք, — ըսաւ Պաղտո:

— Հետերնիս բան-ման առած ըլլայինք, կը մնայինք: Ամբողջ տուրիւն է կէսօրը վրաններուն տակ մնալ:

— Լաւ, — ըսաւ Պաղտո, — դուն մնացիր, ես երթամ բաներ մը բերիմ կէսօրուան ճաշին:

— Ես առանձինն չեմ մնար...

— Ուրեմն, քալէ երթանք:

Պաղտո գինովի պէս էր. յոգնած էր շատ պարելէն. կ'ապրէր մէկու մը ուրախութիւնը, որ զգացնել կու տայ իրեն ազաւոր կիներն: Դեռ ձեռքի տակ ունէր իր անհատականութիւնը: Լուրջ չէր նայեր սեփական բուն ձեռնդմամբներու երանութիւնը: Լուրջ չէր նայեր սեփական կնոյ երեսին, որ ներքին ցաւէն դեղնցած էր: Սանամ չուզեց մթապ-

նեւ ամուսինին միտքը: Ետեւ ի՞նչ պիտի ըլլար: Կ'երթար մօրը կը պատմէր. մայրը կը սկսէր խռովանալ քաջքը դուրս հարսը, ամուսինը փոխանակ շարագործը հետապնդելու՝ նախանձով ու խանդով կը վարակուէր եւ իր կեանքը կը դառնար կրկնակի դժոխքի բաժին: Ամօթէն դեանի տակ պիտի անցնէր ինք, երբ կրնէրու բերանը իյնար մտերմասնութիւն շունեցոց պատահարը: Երկու տղաք խոստացան զաղտնի պահել: Լուրջ էին. երգուեցան: Խոստացան զսար տալ շուշանորդիին, Մացակ կոչեցեալին: Ըսին, խեղճ մօր մը մէկ հատիկն է: Մայրը խելացի, հին վարժուհի է եղեր Երկիրը: Կազմակայանին մէջ, իննսուն տակոսով անդիտութիւնը չէր կրնար հանդուրժել ուսում առած կիներ, ծածկեցին անունը քանկով... ու մայրը եղաւ թոռակ Ստամբար:

Արեւին ջերմութիւնը կը տարբադարէր Ստամբին միտքը եւ անոր մտածողութիւնը զգացումներու հիւանդութիւն դարձաւ: Թնձուկը գորգեան հանգոյցին պէս կը թուէր անյուծելի: Ի՞նչ ընէր, ինչպէ՞ս շարժէր: Կը նմանէր մէկուն, որ կը քալէ անդունդը եզերող արահետէ մը: Վախը, որ կէտին ալ կտիէր, սայթաքումը անդունդ պիտի առաջնորդէր... Ակամայ ափը տարաւ որտեղ եւ Պաղատ նկատեց որտեղոր կնոջ կոպերուն վրայ:

— Յա՛ւ ունիս, ջանս:

— Գլխապտոյտ, անցաւ...

— Անոթութենէն է, — ըսաւ Պաղատ վստահ:

Իսկ Ստամբ ինքն իր հեան էր: Թաղի երէցին կամ մեծ ջոջեւուն տանէ՞ր բողոքը. ի՞նչ իմանար, թէ անոնք ալ անզաղտնապահ չեն բամբասող կիներու պէս. կ'ելլեն կին, բարեկամի ահանջ կը հասցնեն, «խօսքը մէջերնիս մնայ» ի տնիմաստ փոփոխութիւն: Եւ մէկէն մէջը ծնաւ անգլիացի սպան տեսնելու գաղափարը՝ կ'երթամ, կը խնդրեմ, որ այդ Մացակ ըստած շարամիտ տղան ձեռով մը հեռացընել տայ մէջերէն հրամանով. դորձ մը կու տան իրեն Գերբուք կամ Պառլա քաղաքներէն մէկուն մէջ, մայր ու տղայ կը հեռացան...: Եւ կ'ապաւնան ապաղայ զայնթակղութենէ, մայրը՝ թոռակ անունէն: Այս միտքը գործնական թուեցաւ Ստամբին. զգաց, որ հոգիին հանդարտութիւն անմիջական եղաւ...

Զ.

Այդ գիշեր Պաղատին մայրը չկատուեցաւ հարսին փէշէն: Ետեւ թէ մը ի վեր ջուր բերողը կեսուր մայրը եղաւ եւ դռն էր: Զրամբարին շուրջ կրնէրուն լեզուն, ջաղացքի քարին պէս անդադար եղած-չեղած լուրեր կ'աղար: Տիրուհի խաթունը սպունդք պէս իրմէ ներս կ'առնէր ու կը մտրտէր այդ անմիտ լուրերը: Փամանցի տեղ էր հոն: Առաւօտ կանուխ միտքը փոխեց, Սովորականին պէս մշտեց հարսին կողքը:

— Ելի՛ր, աղջիկ Ստամբ. դէ՛ռ վարժեցուցի. ծուլացար: Ելի՛ր զնա ջուրի...

Հարը քնաթաթախ դուրս սողաց անկողինէն: Պաղատն եւ հայրը կը քնանային: Կեսուր մայրը դինք արթնցնելով, ինք կռնակ տուաւ էրկանը մէջքին ու կրկին քուն մտաւ: Վրանին ներքոյ նստարացած էր: Ամառ-տաք գիշերները կը քշէին վրանէն դուրս այրը եւ

երկտասարդ մարդիկ, որոնք կը սիրէին թեթեւ ծածկոցներով բաց երկնքի տակ անցընել զինքները: Եւ շտապ կը պատահէր, որ ջուրի գացող կիներ խրաչէին, երբ հտեւներէն սուրց լսուէր...

Կէս վարադուրուած վրանափէշին հտեւ հազաւ ծաղկափէշը: Մաղերը սանտրեց, պարուկածեւ մազափունջ մը, վառ-դեղնագոյն լաշակին տակէն՝ հենել տուաւ եւ կախեց ճակատին վրայ: Փոքրիկ հայկերէն խորքէն գեղեցիկ աղջկայ մը դէմքը Սանամին ըսաւ թէ՝ չբաշալի է: Դէմքը, որ ժպտիլ կը սկսէր, կնճիտ մը քաշեց ճակատին: Կը զգար, որ կնոջ մը գեղեցկութիւնը կը նմանի մազնխտակաւ ուժի. քաշողութիւնը կը հաւաքէ շուրջը շուրջը մետաղի մեծ ու պղտիկ կը տարնեն: Ժամագոտած կամ փայլուն, ինչպէս են մարդիկ բարի ու լար: Այդ կնճիտը տխրութիւնն էր հարցումներու...: Սիրոյ խորքը սա- լարկուած է միշտ կարօտի, ցանկութեան փոքր սալիկներով, որոնց վրայ հտեւէն կը բարձրանայ մարմարապատ երազին դիտակը: Իսկ Սանամ երազ չէր կրնար ունենալ: Ինչո՞ւ համար էր իր գեղեցիկ երեւնալը. չէ՞ որ կնոջ մը գեղեցկութիւնը, անյարմար միջավայրի մէջ՝ փորձանք է: Այդ սրիկայ Մացուկը փնտռած էր մարմինն հմայ- քը, որով փնտրուած էր... Իսկ ինք կ'ուզէ գեղեցկանալ. որո՞ւ հա- մար. օտարական սպայի՞ն. իր ի՞նչը կու գար. աղջիկ չէ, որ սիրա- հարեցնել տայ իր վրայ...: Սանամ՝ թօթուեց ինքզինք, իրմէ վանե- լու ինչուներու դրոշմ սրտէն ներս...

Երբ ուսը առաւ սափորը, իրենները դեռ կը քնանային: Ելաւ անցք-փողոցը ու քաշեց. հաւաքել կը փորձէր ուժերը, որպէսզի չը- շորորան կոնքերը: Գիտէր, որ լրտեսող աչքեր կը հետեւէին իր քաշուածքին:

Յուլիսեան արեւը դարձեալ նստած էր Տիգրիսի աջափնեայ պարտէզներէն գլուսը ցցած արմաւենիի կատարին եւ հոնկէ կ'անդա- նէր Սանամին աչքերը, որոնք ստիպուած էին վար նայիլ, խպնելու պէս՝ գլուխը կախ: Զրամբարին շուրջ թիթեղներ կ'աղմկէին: Կըռ- ւազան կիներ կը պողտային, որսին դիակը բաժնել չկրցող գազան- ներու պէս: Այս բաները փոխանակ իրեն տխրութիւն պատճառելու՝ դատեպնդեցին զինք: Պատրուակ մըն էր արդարացնելու որոշումը, զոր առած է աւագարուր երթալու համար: Բայց, կանգ առաւ, որ իր ներկայութիւնը նկատողներ ըլլան. ներքին վախով՝ աչքերը փնտռեցին բարի կիներ, որ թմէն անգամ կը քաշէր ձեռքէն սափորը ծորակին բերանը տանելով գայն: Ուրիշ օրերուն Սանամ պիտի ախրէր բարի կնոջ բացակայութենէն: Այսօր դո՛ւ եղաւ, որ անիկա չէր եկած դեռ: Հրապարակը կիսելով, վրաններու նոր խմբաւորու- մի անցք-փողոցներէն մէկը ընտրեց, կարծելով թէ կը կարճցնէր երթալիք ճամբան: Զգուց, որ ոտքերը տարին զինք այն ուղիէն, ո- թուն վրայ կը բացուէր թոռու Սուսամբարինց վրանը: Այս շրջանի վրաններուն մէջ եռուդեղը աւելի առոյգ էր: Զարմացաւ, թէ ինչո՞ւ մարդիկ, կիներ իր կողմը կու գային: Անոնք կը նայէին իր դէմքին, քաշուածքին: Եւ հիացական էին այդ նայուածքները, եւ ապրահար: Ո՞վ էր այս աղջիկը, որ սափորը ուսած, հակառակ ուղղութիւնը Ո՞վ էր այս աղջիկը, որ ջրամբարին՝ կը քաշէր: Որո՞ւ հարսն էր, ո՞ր թաղէն: Սանամ հտեւէն հասկցաւ, որ ջրամբարը մնացեւ էր իր հտին եւ այս մարդ ու կիները կը դիմէին հոն կամ դէպի կրպակները...

Վրանի մը առաջամասը աւելի կիներ, որ մեր ծանօթ Թոռուկ Սուսամբարն էր, շտեղծ կոնակը եւ հիացիկ՝ նայեցաւ Սանամին

ետեւէն: Իր հիացումին մասնակից կիներ ունենալու ցանկութիւնը
զինք դարձուց զէպի վրանէն ներս, ու կանչել տուաւ:

— Քա՛, կէք նայեցէք սա աղուոր հարսին, կարծես թէ փերի
ըլլայ. մեռնիմ իր պոյին...

Եւ ոյգպէսով բարի ու խելացի այդ կինը, անգիտակցաբար
իւզ պիտի քէր Սանամի ճակատադրի հային: Իր տղան, որ կէս
քուն, կէս արթուն պառկած էր, վեր ցատկեց տեղէն ու վազեց դուռն:
Իր խոռվքը ծածկելու համար, մօր երեսին չպրտեց:

— Դուն ալ դատար աղուոր կինը. սաստնային ալ հրեւտակ կը
դարձնես...

Սանամ անտեղեակ իր ետեւէն բռնած խօսքերուն՝ կը քալէր
եւ իր մէտքը զբաղած էր ներաշխարհին մէջ ծաղած երկու ետերու
կոխով: Մէկը՝ խորամանկ ու չար, միւսը՝ բարի եւ աղնիւ: Զգա-
ցումներու կոյէն եւ Արեւ մը, որ ծնունդ տուին երկպառակտումին
մարդոց հետագայ սերունդներուն մէջ, մինչեւ օրս...

Զարը կը մղէր.

— Աղջի Սանամ. որոշէր ես, զնա՛ իրեն այդ սրիկայ Մացակի
դէմ. ան լայցարձակ կ'ուզէր բռնաբարել քեզ. շես աղատիր իր ձեռ-
քէն...: Գնա՛, աղաչէ, որ բռնեն լան լակոտը եւ դատը տան: Գնա՛,
անգլխացի սպան հինգ օրէ ի վեր հոն կու գայ, քեզ չի գտներ, ա-
մօթ է...

Եւ Սանամ կը քալէր առոյգ, վնասկան: Գետեզրը մօտ էր:
Անցք-բացուածքէն կ'երեւէր աշտփնեայ կանաչ դօտին. ապա՛ անոնց
հովաշարածեւ կանաչ փարթամութիւնը, որ պտղատու ծառերուն
էր: Բարակ ճիւղերով պարթեմեւեւ զապարթները արմաւենիներուն:
Սանամի աչքին զարկաւ գետի ջուրի մակերեսէն շերտիկ մը, որուն
վրայ արեւի լոյսը կաթնագոյն շղարչ մը փռած կը թուէր ըլլալ:

Գետին հասած՝ դատա յախտնական նոյն կիները լուացքով
զբաղած: Լողուորներ քիչ կային: Քիչ վերեւ կը տեսնուէր ամայի
թումրը, որ կը ձգուէր մինչեւ աւազարտութիւն: Այդ ամայի թումրը
պատճառ եղաւ, որ կ'թռտէին սաքերը: Անգամ մըն ալ հարցադրեց...
Իրա՛ւ եմ, թէ յիմարութիւն է ըրածս: Մէկ օրունան ծանօթներ ենք:
Մի՞թէ մէկ օրը ծնունդ կու տայ բարեկամութեան: Մէկ օրէն, մէկ
անկնթարթէն կը ծնի սէրը. բարեկամութիւնը սերտել է պէտք: Իմ
սրտին մէջ տեղ չկայ սիրոյ. աղջիկ մը չեմ. ես կլին եմ. իսկ եթէ
պարտադրուի՞ սէրը կ'ստի մը. բայց պարտադրուած սէրը սեռային
հետապնդում է, որմէ ծայր կու տայ անառակութիւնը... Ձմի՛շ, ո՛չ.
մէջն շունիմ այդ սերմէն: Ձիսկ աղուորս, եթէ դուն շունիս, ին-
չո՛ւ կը քաջալերես միւսը, օտարականը. ան ո՛չ քու ցեղէկ է եւ ո՛չ
քու եղբայրդ. օտար մարդ է, երիտասարդ, կայտառ, դեղադէմ.
մի՞թէ չես դարձուած արտաքին այդ տուեալներուն:

«— Սո՛ւս, քա՛. կը զրպարտես, Գանթագանք. զիրք ունի եւ
ես ալ ինդրանք ունիմ. կը վախնամ նոր պատահարէ. կը վախնամ
բսկ մերկներուն. անունս կը խայտառակուի: Սպան օտար է. կա-
տարե՞ց. մպիտով կը կաշտուեմ զինք. բռնանալ փորձէ, կ'ըսեմ՝
վաղը. իսկ վաղը, միւս օր, դեռ միւս օր՝ չի տեսներ զիս...»:

«— Աղջի Սանամ. Լիւր ես կեցիր. անոր մի երթար, ետ
դարձիր: Յոյս ալ չկայ որ գտնես զինք հոն: Ծաքաթ մըն է անցեր.
մոռցեր է գոյութիւնդ. ասուպի ուլն եղաւ այդ Գնա՛ Պաղտոյին
պատմէ, կեսուր հայրդ արդար մարդ է, քեզ կը սիրէ հաբազառ ապ-

ըրկան պէտք: «— Ա՛խ, քուրիկս. խնդիրը կը մեծնայ. դանակ դանակի կու գան. անունս կը ցեխոտի... օ՛Ֆ, սարսափելի է իմ գրութիւնս. ինչպէ՞ս ընեմ, չեմ գիտեր...»:

Սանամի հոգին խաղաղ չէր. վէճ կար իր ներաշխարհին մէջ, երկու հակառակորդ եսերուն միջեւ, եւ այդ եսերը սիրտէն թելադրուած էին եւ ուղեղը չէր կրնար վճիռ արձակել: Հետեւաբար, կախակայեց զանոնք: Ներաշխարհը փոթորկած էր անկարող միտքին դէմ: Կանգ առաւ Սանամ ճիշդ ջրաթումբին, որուն ներքեւ Տիգրիսի ջուրերը խորութիւն մը ունէին: Դէմքը դէպի աւաղարարը, նայածքը անկախ իրմէ, թռաւ հեռուն, ուր իր մանկական յուշերը պիտի դռնէր՝ մնաք բարով ըսելու. վաղուց չէր այցելած անոնց. եւ մանք անուն չունէին, ուրիշներ՝ տարիք: Փամանակ չէր ունեցած զանոնք յիշելու, յիշողութիւնը թարմացնելու համար: Եղաւ դադիւ, բախտը ձգեց զինք կենուք մօր մը ճանկը, որ օր ու գիշեր ցոյց չըտրուէ իրեն...: Հիմա փախած էր առօրեայէն եւ կը դիմէր դէպի անյայտութիւն. հետեւաբար, առիթ ունեցաւ: Մինչ իր միտքը աչքերու ճամբով դրկած էր դէպի անցեալը, ինք կը մնար կանգնազեղ արձանի պէս ջրաթումբին վրայ: Մաղկափէշը կը խաղար սրունքնեւուն չուրջ. մագի փունջ մը, որ կը պարոյկուէր ճակտին վերեւ, կը թուէր ոսկեջրուած՝ վառվռողնորակ լաչակէն, որ թխական հալի նըման իր հոթերուն տակ առած էր հարուստ ծածկեր: Եւ այդ կենդանի արձանը ունէր պատուանդանի փոխան՝ ջրաթումբ մը, եւ անի՛ն՝ Տիգրիսի դետը եւ միւս փոխի՛ն՝ կանաչ գօտին. մինչ ձախին կը տարածուէր շոր անապատ մը՝ Եւայի անիծած հողը...

Սանամ չարժեցաւ եւ արձանին պատրանքը ցնդեցաւ: Աւաղարարի վրայ, հեռագիտակը աչքերուն՝ մէկը կը նայէր իրեն: Ան էր, անդլիացի սպան: Սանամ այլեւս ետ չէր կրնար դառնալ: Քայլեց առաջ. «— Թող պատառնան իմ ճակատագրիս...»:

Սպան, թեւերը բաց, խանդավառ ժպիտով ընդառաջեց Սանամին.

— Ո՛ւր էք, սիրելի Մատոնա. անապատին միակ ծաղիկը օ՛ւր մնաց՝ ըսի, եւ ամէն օր կու գայի հոս: Հաւատացէ՛ք, եթէ ձեր անունը պիտոնայի, փնտռել կու տայի Գաղթակայանին մէջ...

Սանամին սրտազոգը վախէն քուսածքակ որոփել սկսաւ կուրծքին տակ.

— Ի՛նչ կ'ըսէք, սրբ. մի՞թէ գաղթական ժողովուրդի մը մէկ դուստրը այնքան հետաքրքրի է կայսերական բանակի մէկ սպային: — Որպէսզի չնայէր անոր շողուն ժպիտով աչքերուն՝ ծոկեցաւ սառնորդ յարմարեցնելու ոտքերուն միջեւ: Իրաւ որ մարդերը նոյն տեսակի փոքր յարմարեցնելու ոտքերուն միջեւ: Իրաւ որ կէտերուն վրայ ալ: Երանի՛ լսէի ցանկամունքներ են, աշխարհի բոլոր կէտերուն վրայ ալ: Երանի՛ լսէի բարի եսիս խօսքը եւ կէս ճամբէն ետ դառնայի: Այս յիմարը իրապէս սիրահարուած է ինծի...: Լսեցիր, չէ՞. ամէն օր եկեր ինձ սպասեր է հոս, կարծէք բան գործ չունենայ, այլ միայն կարօտի:

— Իրաւ կ'ըսեմ, սիրելի Մատոնա. գաղթական, բայց քաջ ժողովուրդի մը դուստրը կրնար զարդը դառնալ թագաւորական պալատին: Ինչո՞ւ դուք ձեզ կը նուստացնէք, — ու բռնելով Սանամի թևէն, քաշեց—տարաւ աւաղարարան յարմարեցնած կողին, — հոս կը նստինք եւ կը խօսինք:

Պաղտոյնեց հարսը հետեւեցաւ անդլիացի սպային: Թէեւ իր ափը անոր թաթին մէջ թրթփար ծառէն ինկած թռչնակի ահուգո-

դով: Այդքան ստորգ հրաւէրը դեռ ոչինչ էր նշանակէր: Նստեցան ջով ջովի, իրենց միմեկու. կը մնար հովանցք մը եւ այն շաղկապող բանը, որ մարդուն եւ կնոջ գիրար բարեւոյ ձեռքերն են...: Սպան կը պահէր Սանատին ափը, երբ գոհունակ նայուածքը կը պտըտցնէր անոր դիմապնդին վեր ու վարը հետազոտողի ժրջանութեամբ: Եր- ջանիկ կը զգար, որ իր ցանկացած կիներ իր ոտքով եկած էր, ինչ որ կը նշանակէր երազածին իրականանալուն առաջին քայլը: Երիտասարդ էր ինք, պարմանի ազդիկ մըն էր ջովը նստող կիներ:

Սանատ գոհունակ կացութիւն մը կ'ապրէր այդ պահուն: Սը- խալած միջավայր ինկողի վախուռորիկ աչքերով կը դիտէր շուրջը- լորը, թէ միգուցէ իրենցմէ մէկը տեսած էր ջով ջովի նստիլը: Սպան շատ էր մօտիկ իրեն: Գրկել ուղեւու փորձանքէն ինչպէ՞ս ազատէր ինքզինք. իր մէջը բարակ էր, անգլխացի օտարականին բազուկը՝ երկար: Իր ապրած վայելէն եւ ձեռքերու շփումէն առաջ եկած քնքշե- վանիկ ուղեց եւ փոքրիկ շարժումը թէ՛ մօտիկութենէն հեռացուց զինք եւ թէ խլեց ափը մարդուն ճանկէն:

— Ես անհանգիստ էի քանի մը օր. պիտի չգայի, եթէ խընդ- բանք չունենայի: Զեր ըրած լաւութիւնը չեմ մոռնար. դուք շատ բարի դստուկացող այդ օրը եւ... այդ բարութիւնը միշտ գիտ, որ դամ, դիմեմ ձեզի խնդրով մը... Գիտէ՞ք, արեւ. մեր բարքերը խիստ են. կիւն մը ազատօրէն չի կրնար տեսնուիլ օտար մարդու մը հետ...:

Օօ՛, Կիրիլի Մատոնա. հասկանալի է, որ մենք այժմ, օտար- ներ չենք, այլ՝ բարեկամներ: Ըսէք, տեսնեմ, ի՞նչ խնդրանքով էք եկեր... չըսեմ՝ խնդրանք, այլ՝ պահանջը: Որովհետեւ, իմ ջովս՝ դուք կրնաք ստիպել միշտ, իսկ ձեր մօտ ես միայն խնդրարկու...: Այս քանի մը օրուան ձեր բացակայութիւնը քուն չէ տուած աչքիս: Կրնաք երեւակայել իմ վիճակս: Հա՛, ուրեմն, լսենք պահանջը...:

Մօտիկ էին եւ սպան իր ձեռքը դրաւ Սանատի ազդրին, որ ծաղկափշիւն այդ մասը, նօրացած ու թափանցիկ՝ առաւ-տուաւ մարմնական զրդիւն մը: Ի՞նչ անուն տար այդ տեսակ շփումին: Սը- տածուած ցանկութեան մը փոքր, թէ առօրեականացածի բնոյթ: Սակայն, իրմէ անկախ, եսերուն վէճը սկսաւ մէջը: Սրտէն էր, որ ամօթխածութեան ետք զրոհեց անմիտ խելքին վրայ՝ Վիէ, Ըսէ, յի- մար աղջիկ. երբ այս մարդը օրեր քուն չէ ունեցած քեզ երազելով, սիրահարուած մը չէ՞ քեզի: Մացակ կուտած այդ հայ տղան նոյնա- տեսակ սիրահարուած մըն էր: Անոր ծարը կար. կը ճգմարտէին եւ վերջ, իսկ այս անգլխացի սպային ո՞վ ինչ կրնայ ընել, կը ճգմէ թէ՛ քեզ, թէ՛ բոլոր ջոյաղաներուն դուրսը: Գաղթականային մէջ, քեզ պիտի անուանեն ինկիլիզի կնիկ, բող, մարդը դաւաճանող ինկած կին...: Եթէ պատմես դէպքը, դուցէ ազատիս տկարէն եւ ինչո՞ւ ուժեղին թակարդը, ուր քու մարմինդ կը բղկտուի անխղճօրէն...:

Միտքը կը դիմադարձէր սիրտին՝ «դուն զգացական ես, խե- լօքս. քու ամօթխածութիւնդ եւ պատիւդ քեզ պիտի ձգէին մահուան դիրկը: չէին ներեր քեզի նեղմիտ բարքերու տէր մարդիկ, որոնք ժողովուրդին իննսուն տոկոսը կը ներկայացնեն: Կը ծամէին միտերդ կիները, լպիւրջ աչքերով երիտասարդներ քեզ դուրին որս կը նկատէին իրենց սեռային ցանկութիւններուն, եւ դուն միբաւոր, ծամծամուած, հալածական, օր մըն ալ խելագարած՝ կը նետուէիր դետը. ուրիշ ազատուած չկար...: Այս սպան. ի՞նչ կրնայ ընել քեզի, եկար, ան ուրախ է գալովդ. նստեցուց ջովը, ձեռքը ձեռքին մէջ պահեց,

կամ՝ ափը դրաւ զինաթիւ, դուցէ՛ զորքուին ջեզ գրկին կամ համառութեւ, ինչ զնաս կը կրէ մարմինը կամ պատիւը...: Կարօտցիք է Եդեր, զուէ շէ ունեցիք. այժմ, բռնանալու միջոց չիմ նկատեք իր մօտ, նազիկային միջոց ամբողջատար է եղիք, մէնիւն իննտուն տարի կը համբիւրէ. իսկ զուսն ի տկարանար. դէ՛մ կը զննւ, էբր ոպանայ, բայց այս մարդը կը փորճի, թէ ամէն օր պիտի գաս եւ ան ալ օրը օրին պիտի մշակէ զու տրամադրութիւնդ. թող ան հրգցէ մշակման մասին, զուսն ըրէ խնդրանքդ եւ վաղը... Էնե զար եւ ոչ ալ միւս պարտութեան»:

Սահամ մհուական դարձաւ, մինչ սպան իրեն կը հրամցնէր
շոքնալի սալիկ մը, ոսկեգոյն թղթածրարոյ փաթթուած:

— Սիրելիք Սատանա. այդ շողովան խապցումն է վերածիրենբ-
բուն: Հետեւորիդ կը վերցնէ՛ք. իսկ երկորդ առիթը կը կեննէ միւր
միկն: Խառնէ՛ք, տաննն՝ ու անկիւնէն. մի ջաշուքէ, խառնէ՛ք,—
ապա քոռած էր սանամի՛ շրթունքներուն դիմաց. հոկ լրբունքներ
շնչէ ուրիշ բացումի. անկարող էր. Սաման կը խախտար, որ ապա
ինչո՞ւ չէր կրօած շողովայի կտորը... մինչ առաջին կտորն մնա-
ցեր էր իր աներկած մեղեքունի մէջ: Ո՛րք կրեսար պահել, տեղ մը
չունէր դրան. մտղիկապէ՛ն զբաղան լռեւէք, իսկ Սաման չէր ալ մտա-
նալ հետք տանիք մը պահել մոցր...

— Այն մէկն ալ բաւ է, օրը. պահելիք տեղ չունիմ: Գուցէ լաւ պիտի ըլլար, որ չ'առածէիք չօքուլայի մասին. աւելորդ պերճանք մըն է դալիթական աղկալալ մը չ'առար: Քուան-քանսինդ չօքինոց վրանն որ մէջ կ'առնի չէ ո՛չ ուտելու եւ ոչ ալ պահելու. չնորճակալ նմ:

Պաշտպանից հարաբեր սխալ գործեց, նախաձեռնությունը զիջելով ապայի, որ ձեռքի առնելով, սահանցուց արագ, անանկիաբարձի, տպահով՝ շոթըլային կարծող կուրծքին քայցել վար. մինչ միւս թեւ. ուով զրկած եղաւ մէջքը, իրեն արդարացում տնկնալով, կոնակէն ապշտպաններ եւս կողում, մերժումիս պահուն... Յետոյ, թիւը բարձրացաւ. գէպի Սանտամին կոնակը, մինչ միւս ձեռքով կը հրէր շոթըլային կտորներ տկարներուն սիշէն. չէ խամ, սիրելիս. թոյն չեմ առաջարկեր կամ թմրեցուցիչ. եղանքը մըրջալիս խամ ըլնէ է. համելի, համել. քաղող սննդներու ճաշակելիքը շոթըլային...»

Պատուհնդ հարստ առարկեց.

— Դուք լաւ չբերեք. վրաս գէշութիւն կու գայ. իսկ այդ կը տարբը կը չափը կուրծքիս տակ. պէտք է այդպէս վարուէիք, սըր: Հաճելի չէ ինծիք Համար ա'յն, ինչ որ գէտ է իմ կամէր...

[illegible]

Սանամ օգտուեցաւ առիթէն եւ մէկ շունչով բռաւ զանոնք
թիւեր անտառի դէպքին: Շէշոր դրուեցաւ հետապնդումին վրայ եւ

սպան անկախ ենթադրեց, որ այդ հայ երիտասարդը, Մացակ Մատինեան կուեցեալը, նրէց Վարդանի ծուխէն՝ արգելք մը կը ներկայանար իր Ծրագրին: Խոստացաւ զինք քշել տալ գաղթականացնէն եւ սեւ աշխատանքի մէջ փոխցնել, նաւթահորերուն խորը... զըրկելով:

Պաղտոյենց հարսը կարծեց փրկուած ըլլալ ընդմիջտ միւսէն: Սպայի մասին ապահով էր, որ ան զինք չպիտի տեսնէր այնուհետեւ: Ոտքի ելաւ՝ ուշ կը մնար:

— Կը ներէք, սըր, որ ուշի կը մնամ եւ պէտք է երթամ: Զերտուած ապահովութեան համար անչափ ուրախ եմ. հոգ մը կը վերցընէք սրտիս վրայէն: Մնաք բարով, սըր. սափորը քիչ մը վարէն ալ կարելի է լեցնել ջուրով:

Սպան տաւ Մանամին ձեռքը, տարաւ շրթունքներուն եւ համբուրեց մաւններէն.

— Վաղը կը սպասեմ, սիրելի Մատնա. անպայման եկէք...

— Եթէ արգելք չըլլայ, սըր. այժմ՝ մնաք բարով. ձեր յաւթեան տակէն ինչպէ՞ս պիտի ելլեմ. շնորհակալութիւն եւ ցտեղութիւն:

Առաւ պարապ սափորը անութիւն տակ ու քայլ նետեց. սիրտ չըրտւեաւ դարձնել զէմքը ու քիչ մը ժպիտ բանալ աչքերուն խորը:

Սպան կեցեր կը դիտէր քիչ մը բռնադրօս շորորը, որ բնական էր Մանամին դալար հասակին, ու հիւսեց մօտիկ ապագայի մը շողուն երազները...

Թ

Կէսօրուան մօտ, վիզլուկ փրթաւ Պաղտոյենց վրանին մէջ: Հարս Մանամ դեռ չէր դարձեր ջուրէն...

Անհանդստութիւնը պղտոր ցաւի պէս կրծեց կեսուր մօր սիրտը, որ միշտ թոյն էր կաթեցողցեր Մանամի սրտին մէջ: Իրեն համար հանկնափ կը դառնար, եթէ հարսը կորած ըլլար. գուցէ դնաց ջուրը նետուեցաւ. ս՞վ պիտէ:

— Այս աղջիկը ո՞ւր մնաց:

Սափորը իր տեղը չգտան Պաղտոն եւ հայրը:

— Ի՞նչ բրիւ Մանամին, այ կնիկ. ո՞ւր է, — չարացաւ էրիկը: Ամէնօրեայ ջուրի թիթեղը առած՝ տիրուհի խաթուն վաղ տըւաւ ջրամբարին կողմը: Ու ճամբան անդադար կը կրկնէր՝ «Երաւալ, մեր Մանամը ի՞նչ եղաւ, դուն ըսէ...»: Զրամբարին շուրջ բաղմունքիւն չկար. չկար հարսը ջուր տոնողներուն մէջ: Դողը սաստկացաւ տիրուհի խաթունին, որմէ ետք անեցաւ տապնալը: Զարացաւ հարսին դէմ. ի՞նչ ըսէր մարդուն. ի՞նչ ըսէր սողուն. ինքզինք չէր կրնար պաշտպանել. «— Աղջիկ, ըսի՛ գնա. չըսի՛ գնա կորիւր...»: Ոտքերը կիթոնեցան: Զարաշուք վախը տուն առաւ մէջը: Ետ դարձաւ յոյսին կառչած, թէ կը գտնէր վրանին տակ Մանամին ներկայութիւնը...

— Զեկա՞ւ դեռ, — դռնեց դեռ վրան չմտած:

— Քեցիր. դնաց ու դեռ կը սպասես որ գա՞յ, — Պաղտոն էր. ձեռքերը չփշփշեցնէր իրարու մէջ ներս ու դուրս կ'ընէր վրանէն: Անոր սիրտը փլած էր բոլորովին. դէմքը սպրդնած:

digitised by A.R.A.R.®

— Քա, Զարուկ. Սանամս չտեսա՞ր: Առտու սափորը առաւ զնաց... ըսաւ՝ մէրիկ, դու չողնած ես, ես երթամ: Ոտք մտիկ չըրաւ... լեզուս չորնար: Զպնդեցի. ուրախ սրտով ելաւ—զնաց. այդ երթալը եղաւ...: Տղայ Պաղտօ, չերթա՞ս փնտռես կնիկդ. զնա՛ դետին կողմը. վազ տուր: — Իսկ տազնապը Հետզհետէ կ'անէր ու կը մեծնար ներսը:

Պաղտօն դետէն դարձաւ: Հրապարակէն անցած պահուն՝ հարը միացաւ իրեն: Դարձեալ պոչատ յոյսն էր փակած իրենց սրտին. դուցէ եկած ըլլար Սանամ...

— Զեկա՛ւ դեռ Սանամ, — ըսին տազնապահար: — Զգտա՞ք, — ողբաց մայրը:

Պաղտօն շարացաւ մօրը դէմ: Ո՛ւր փնտռէր կինը. զոչ մէկ ծանօթ չմպեցիր, որ ունենայ: Աղպական, բարեկամ, երկրացի՝ շատ. երեսներն ցոյց տուի՞ր խեղճին: Փէշը թող չտուիր, որ չարժանէր... ես ո՛ւր փնտռեմ զինք: Եւ Պաղտօ վրանէն գուրս նետուեցաւ կրկին: Ան կ'երթար ծով գաղթականներն մէջ իր ոսկեճկեիկը փնտռելու, ոչ մէկ հիմնակէտ մտքին մէջ ունենալով: Հայրը լռելեայն նոյնպէս դուրս ելաւ. ծանօթ աղտք գտաւ. եւ զիրենք զրկեց չորս ծագերը Վրանաքաղաքին՝ «Քարի տակէն պիտի գտնէք—բերէք հարօս, հոսկըցա՛ք...»: Սոստացաւ զեղին ոսկի մը, որովհետեւ հարսը իրեն համար անդին գտնձ էր. եւ պատահած չէր, որ ան կորսուէր...

Սկզբնական մտահոգութիւնը դեռ կախուած էր քիչ քիչ քիչ վրանէն ոչ ապահովուած յոյսին: Վրանցիները փոխանցեցին այդ մտահոգութենէն բաժին մը դրացի վրաններուն եւ լուրր սահման չճանչցաւ. այնուհետեւ. թաղամասին մէջ, կրկին կը փսփսային իրարու ականջին, ջիշ մը բամբասանք ալ խառնած լուրին.

— Քա. Պաղտօյնեց հարսը եւիւր է վրանէն առաւօտուն. կէսօր է, չէ դարձած տուն...

— Իրա՛ւ կ'ըսես, քա. ո՛ւր գացած պիտի ըլլայ. ջուրի երթար, ես կը դառնար. տեսնող կ'ըլլար...

— Քա, փախած չըլլա՞յ կեսուրիին ձեռքէն...

— Փախելիւր տե՛ղ ունէր խեղճը: Աստուած երեւին նայի. խորոս հարս էր: Կ'ըսեն՝ կեսուր հայրը հողի կու տար անոր...

— Քա, կնիկին լսէիր. էրիկը հարսը կը տիրէ եղեր...

— Բերանը պապանձի ըսողին: Կարապետ աղան, Յիսուս Քրիստոս, սուրբ մարդ է...

Դրկից վրաններէն մէկէն պառաւ կին մը յայտնեց, որ առտուն, երկու տղաք հարց տուին, թէ Պաղտօյնեց հարսը տեղ դրնա՞ց...: Եւ ահա մտահոգութիւնը կապարի պէտ ճնշեց մարդոց ուղեղին:

— Այդ տղաքը ովքե՞ր էին, ի՞նչ ունէին Պաղտօյնեց հարսին հետ...

— Զըլլա՞յ անոնք գլխուն գէշ խաղ խաղան...

Պառաւ կինը գարմացաւ.

— Աման, քա. ադ ի՞նչ խօսք. աղաները դառնուկի պէս էին. հարց տուին, գացին...

Պառաւ կինը սուտ չէր խօսեր:

Այն տղաքը, որոնք անտառի գէպքին տանն, փրկած էին Սանամին պապիւր եւ խօսք տուին դատար տալ թառակ Սոսամբարի անկիրթ աղուն, հետքը չգտան Սացակին: Որոշեցին յաջորդ օր հե-

ցոյց կու տա՞ս, թէ որ կողմը դացած կ'ըլլայ տղադ: Անպատճառ զինք կ'ուզենք տեսնել: շատ ստիպողական գործ ունինք հետք, — կտրից Մակար Մացակի մօր եռանդը եւ անդրադարձաւ, թէ դուցէ իր շատ երկար պատմելու սէրը մղած էր ժողովուրդը զինք կոչելու Թոռուկ, ախիւնքն՝ թոբիք կատարող, եւ ոչ թէ խենթ խոտքեր ըսելուն համար:

— Հա՛. ես ալ հոն պիտի հասնէի. ո՞ր կողմը գնաց. գնաց սա թումբը բռնած, որ ի՞նչ, Աստուած գիտէ...

Ուղղութիւնը դէպի աւազարուրն էր. իսկ մինչեւ հոն տասնը-հինգ րոպէ բաց տարածութիւն էր, ամալի: Մացակ ի՞նչ կը փնտռէր ալդ կողմերը: Մի՞թէ Պաղտոյննց հարաւ հոնկէ իր ջուրը առնելու կ'երթայ: Ձէր կարելի: Մայրը գուցէ կը սխալի:

— Անգամ մը անտառ հանդիպինք: Հոն դացած չըլլայ, ճըր-դաս:

— Գայէ, Մակար: Ծնորհակալ եմք, մայրիկ. լուացէ՛դ ետ ընել տունիք:

Գաւիթին դէպի անտառին կողմը եւ ալդպէսով վիժեցաւ իրենց առաքելութիւնը...

Թ.

Սանամ կեղծեց անգլիացի եպսկոպոս Որոշած էր ա'լ քնաւ ոտք չկրիւնէլ ալդտեղ: Աւաղըլուրը բարոյական վտանգի վայր դարձաւ: Մինչ ներաշխարհին մէկ անկիւնը կծկտած անբխտ աղջիկը կու լար պատիւը գրկած: Ան կը մղկտար, որ որունքը յանձնեց օտար երիտասարդի ափի շփումին, մէջքը զրկեց խայտառակը եւ անպարարի ճարպիկութեամբ ձեռքը օակեցուց կուրծքերուն միջեւ: ՁԱ՛խ, ալդ ի՞նչ կերպ շորոյա կերցնել էր. խածնել տուաւ եւ ինք խածաւ միեւնոյն տեղէն, թէ ահա սիրելիս, ես կը խածնեմ շրթունքներդ: Ան-մօթը ինչի՞ր վրայ հիմնուելով սերահարեր է իրեն. հինգ օր քուն չէ ունեցեր, կարօտեցր է. որո՞ւ. ինծի՞... Սոված գալլի աչքեր ունէր եւ կատուի թաթեր, ճանկերը ներս տուած, որ թաթին տակի մուկը սարսափը ճիշի չվերածէր: Կը խաղար հետը. մտածելով մէկտեղ բզկտելու պահին մասին: Ա՛խ, ի՞նչ յիմար եմ եղեր. տուր է ըսի, եկայ իրեն, որ դարդս խոտտովանիմ եւ ահա՛ սատանայ ելաւ դէ-մացս...»

Բայց Սանամ ինչէ՞ն դիտնար, որ վայրագ սատանայ մը ունէր իր դիմացը, որուն ներկայութիւնը զգաց, երբ դէպի ջրաթումբ պիտի քալէր սափորը լեցնելու համար:

Իր դէմ ցցուածը նախ ուրուական թուեցաւ իրեն. վախէն՝ սափորը ինկաւ-փչրեցաւ: Եւ անմիջապէս մտածեց ինքնապաշտպա-նութեան մասին: Ծրջապաղով ամալի էր. օգնութեան ճիշը կը մեռ-նէր տառը քայլ անդին: Աչքը առաւ մահը: Որովհետեւ դիմացը ել-յող ուրուականը իրեն ծանօթ էր. ալդ մօրուքաւոր սրիկան, որ ան-տառին մէջ սպաննաց մեռցնել, եթէ...

Կանգնեցաւ փչրանքներուն քով սափորին, որուն կորուստն ալ ուրիշ մահ մըն էր իրեն համար: Միւսը, ձեռքին բռնած էր մերկ դաշուինը եւ կը յառաջանար՝ վազրի կակուղ թաթերը հագիւ գետին կոխած: Սանամին կուրծքը փքոցի պէտ ելեւէջ ունէր. շրթունքները կուղպ. չնչառութիւնը՝ հեւացող:

— Տղա՛յ, հեռացիր այստեղէն. դասդ չտո՛ւի՛ն, չաճչցա՛ծ...

— Ամա՛յի է շրջապատդ, զիս մի՛ կատողեցներ. ուզածս մեծ բան չէ. յանձնէ ու դնա՛մ համբաղ, Պաղտոյենց հարս...

— Գորտուէ՛, սրիկայ, անառակ. զանգատ կու տամ վրադ, — եւ Սանամ ծոնցաւ արագ եւ դետնէն վերցուց մէկ քանի կտորները սափորին, որ իր անբախտութեան սկիզբն էր...

Մացակ, նայուածքը սեւեռած որսին, դեռ կը մօտենար այս անգամ բորենիի քայլերով՝ թէ՛ որտոտ եւ թէ՛ վախկոտ, իր հոգին յանձնած մտորումներու դատախազին.

«— Իրու որ Պաղտոյենց հարսը մահը աչքը առած է՝ պատիւը փրկելու ի դին։ Ձի վախնար դաշտնէս։ Սափորին կտորները ձեռնեց հետս կուռելու համար»։ — Յիշե՛ց հօրը, չօպանութեան ատեն մօտը կ'երթար, կը տեսնէր հօտին արունները, որոնք կը քծնէին՝ էգերուն սիրտը առնելու համար։ Բնաւ չէր պատահած, որ արուն եղջիւրով հարուածէր էգը, անկէ առնելու սեռային գոհացումը...։ Իսկ, ինք ի՞նչ կը ներկայացնէր, անբան անասունէն վատթարը։ Արուն կղիւրը կամ իմ ձեռքիս դաշտնը նոյն իմաստը չունին՝ ուժ եւ հմայք է արուն կղիւրը էգին մօտ, մինչ իմ դաշտնս սարսափ կ'ազդէ դեռաւոր կնոջ։ Ուղեց փխրանալ, կակղիւ...։ Վրոյցէ քծնելով հասնիմ նպատակիս»։ Դաշտնը գրաւ գօտիին մէջ։

— Աղջիկ, հոգիդ ուտեմ. այրած եմ քու սիրով, հմայուած քու տեսքով, իրանիդ շորորով. եկուք համաձայնիք. երդում կ'ընեմ, որ զաղտիքը կը մնայ իմ եւ քու մէջ։ Անգամ մը ալ ետեւէդ ո՛չ կը որուլեմ եւ ոչ ալ քեզի կը հետեւիմ...։ Խելքդ գլուխդ հաւաքէ...

— Տղայ, մի՛ քծնիր, անցիր դնա՛ քու համբաղ, քեզի պէս տնառակ, խայտառակ մարդուն ստանան՝ չի յանձնուիր, ուր միաց Պաղտոյենց հարսը, որ իր պատիւը ամբողջ աշխարհի հետ չի փոխեր...։ Գնա՛, դնա՛...։ Կը մոռնամ, կը ներեմ յանդգնութիւնդ, եթէ գլուխդ առնես ու քալես, թէ չէ...

Մացակի աչքերը դադանային փայլ ստացան։ Կրկին ձեռք առաւ դաշտնը։ Արեւը ճառագայթեց անոր շեղքին, ու ցուրը նետեց Սանամի աչքերուն, որ չլմորած՝ կը չափէր յոյսի հեռաւորութիւնները, փախչելու պարագային։ Ծառ էր հեռացած աւազարուրդին. հոնկէ յոյս չկար. գուցէ անգլխացի սպան արդէն հիւանդանոց կը դռնուէր։ Գետը, հսկայական իր մակերեսային ջուրերով, տակէն հոսող անօգնական լիճ էր։ Միւս երկու կողմերէն մէկը՝ անյոյս տաքածութիւն, մինչեւ Եփրատ։ Կար գաղթականների միջեւ ինկած ապաղինեալ գօտին՝ տասնէ աւելի վայրկեանի հեռաւորութիւն՝ վաղ քով։ Կրնա՞ր փրկուիլ, եթէ վազէր...

Մացակին աչքերը եւ արունքներուն երկարութիւնը հառաւատում էին իր անկարողութեան։ Թեւը բարձրացուց ուղանական։ Դարձեալ ամօթխածութեան հպարտութիւնը կը կայկանդէր ճիւղ, որ ակար կիներու միակ զէնքն է վտանգի պահուն։ Սանամ պիտի ճշար։ Օգուտ չունէր ճշալը, որ պիտի տար փառսը գիմացիներն ուժի առաւելութեան, Ուրեմն, վճռուած էր. պիտի պայքարէր պատիւը փրկելու համար։ Քանի մը քայլ մնացեր էր մէջերին.

— Քեզի կ'ընեմ. խելքդ գործածէ, Պաղտոյենց հարս։ Գիտեմ, որ մարդդ անպէտք է. անոր համար չէ՞ որ քու առնելու պատրուա-

կով Լեկեր-Հասեր ետ առաջան հեռուները, սէր փնտելու... դու՛ ին-
կիթիդի կնիկ- չտեսա՞յ ... դու՛ անամուս...

Արիւնը զարկաւ Պաղտոյնից հարսին գլուխը. երկրաշարժ ե-
ղաւ ողջ էութիւնը եւ աչքերը լեցուեցան կատաղութեան արցունք-
ներով: Անմիջական եղաւ խելագարութիւնը, երբ զինուած կոտորած
սափորին կանթովը՝ շարտեց.

— Լիբրի լակտո, դու՛ սրիկայ, թրջածին զրպարտիչ... —
ու յարձակեցաւ պատիւը վարկարեկողին վրայ, որ անակնկալի եկած՝
չկրցաւ կողմնորոշուիլ: Սանամ խփեց կանթը անոր քիթ-ու-մը-
ռութին, կուրծք ըսուած բարոյական պարապութեան. այնուհե-
տեւ, երկու ձեռքերուն ճանկերով փակաւ Մացակ չրլլալիք մարդու
ճիտին... — Սրիկա՛յ, անամո՛թ... Թուրքի ֆի՛ն՛ հս քու միտերդ
կը բզկտեմ, ինծի թո՛ղ ըսես, թո՛ղ ըսես...

Աչքերը կու լային, ձայնը խուպոտեցաւ: Սանամ տարիքէն
պղտկեցած էր, եղած տասը տարեկան պղտիկ աղջիկ, որուն պու-
րիկը խլած էին Թաղին լակտոնիւրը, շարդած եւ ինք անզորութենէն
կու լար ու կը խածոտէր պուպրիկը ջարդողները:

Մացակ կը զգար ճակտին արիւնիւրը. սուր կակիծը դաժներ էր
ցուր աշտակի: Վիզը դժուարութեամբ ազատելով ուղղկան մազիւտ-
նման մատներէն, թեւերով գրկել ուղեց զազանացած ուժով Պաղ-
տոյնից դեռատի հարսը, զոր այնքան բրտօրէն ցանկացած էր: Բնաւ
իւր միտքէն չէր անցուցած դաշտնով քերծել իսկ անոր պարիկային
գեղեցկութեամբ մարմնին աննշան մէկ տեղը նոյնիսկ: Սակայն,
ձեռքին մէջն էր դաշտնը...

Գրկուած, իրար պլլուած մարմիններուն տապալման հետ
լսուեցաւ աղիողորմ ճիւ մը, որ կնոջական էր եւ որ ծնաւ ոտը ցա-
ւէ մը, երբ սիրտ մը կը խոցոտուի...

Պաղտոյնից հարս՝ Սանամ կը մնար Թաւալած կոնակին վրայ.
կապառաքին աչքերը քաշած էին կոպերու վարագոյրը: Գեղեցիկ էր
դէմքը, անարատ, սուրբ: Կը շնչէր ծանր: Ձէր դիտողներ, թէ չըր-
թունքները կ'աղօթէին, թէ քաւութիւն կը խնդրէին իր չգործած
մեղքերուն համար: Մացակ, որ անասնացած նայուածք ունէր, ան-
զիտակից սարսափէն պլլտած՝ ինկած էր կողքին վրայ, կուշտին
անշարժ մարմինին: Այլ ձեռքը կը մնար անոր կռնակին տակ: Քա-
շեց-Հաննից ձեռքը ու զգաց, որ դաշտնը խրուած էր Պաղտոյնից հար-
սի ձախ կողին: Խուճապահար վերցուց դիպկնացած կնոջ կողը, քա-
շեց-Հաննից դաշտնը... պահ մը դիտեց Սանամին դէմքը եւ, յանկարծ,
գիւսահարածի պէս վեր ցատկելով՝ սուրաց դէպի գետը...

Դիւահալած աղ զգալի էր, զոր նշմարեցին հեռուէն երկու
բնկերները՝ Տրդատ եւ Մակար: Անոնք կը սուրային նոյնքան դիւա-
հալած, որքան աղամայ ոճրադործը, որ իր փրկութիւնը ապաւինած
գետին՝ կը նետուէր ջուրը:

Երբ Հոսան դէպքին վայրը, Պաղտոյնից հարսը կը շնչէր դեռ:
Տղոց լաց ու կոծէն, շրթունքներէն փրցուած Հայհոյանքներէն ըզ-
գաստացած՝ մահամօտ աչքերը բացաւ Սանամ. նայեցաւ վրան ծռած
ծանօթ աղոց դէմքին եւ իր աչքերն ալ լացին. լնջաց ցած, բայց
յատակ, մարմնող ձայնով:

— Աղբարիկներս... հասաք... ուշ մնացիք... սրտիս վրայի
թղթածրարին մէջ... բան կայ... առէք. չթողուք մնայ կուրծքիս...
կ'ըսէք, որ Պաղտոյնից հարսը... պատիւը...

Մակարին ծուռկին վրայ հանգչող Սանամին գլուխը ինկաւ
կողմի վրայ: Մեռած էր...

Ազգական չէին. ծանօթ-բարեկամ չէին: Մաքուր, մաքուր
նկարագրի տէր տղաք էին երկու, ընկերները: Անոնք ողբաձայն
լալով ոտքի կանգնեցան պարմանի կնոջ դիակին առջեւ, հանեցին
իրենց աշակերտական քսուքները: Ուրկէ՞ ուր Մակար յիշեց բա-
նաստեղծին ողբը՝

Ողբամ գփեզ, Հայոց աշխարհ...

ԺԱ.

Վրանաքաղաքի միւս թաղերուն մէջ բոթը դեռ չուներ իր գուժ-
կանը: Ամէն ինչ բնական կը թուէր յօրանջող տաքով վարագու-
ած վրաններէն ներս: Հետզհետէ մօտենալով Պաղատենց վրանին,
ղղալի կը դառնար անհանգստացող ուշացումը հարս Սանամին:

Վրանին շուրջ թիմուած էր մանուկներու, այլ մարդոց եւ
կիներու հոծ բազմութիւն մը: Կը լսուէր Պաղատայի գոռգոռոցը, մօրը
պաշտօնադրկուած, դատապարտուածի ինքնապաշտպանական ողբն
ու ճիւղ: Կային ձայներ մխիթարող, կիներ՝ ձայնակցող ու անիծող:
Հարօին ուշացման պատճառած անհանգստութիւնն էր, որ կ'աճէր
անընդհատ՝ լափերը խռորցնելով:

Կէսօրը անցած էր:

— Գետը նետուած չըլլայ խեղճը, — յարեց մէկը, դրսեցի մը:

— Գլխուն դժբախտութիւն եկած չըլլայ, — ենթադրեց ուրիշ
մը, որ աղբիւս չուներ մտահոգող վիշտին հետ:

— Փախողուած չըլլայ... դեղեցիկ հարսի մը ճակատագիրը
ետեւէն կը վաղէ...

Տխուր, վհատեցողիչ մտապատկերներով անհանգստութիւնը
հետզհետէ աներ, հոռի էր գտնաթնակէտին եւ գերազգուած
Պաղտեն, փայտը առած, ինկաւ վրանը չըջապատող ամբոխին վրայ:

— Կորէք-զացէք, հեռացէ՛ք...

— Թողէք մեզ մեր ցուին հետ, եւ խալիս, — Կարապետ աղան
էր:

Հացող կիներ կային. Սանամը սիրող հարսեր ու աղջիկներ:
Թաւկիներն արցունքոտ աչքեր շորցնելու կ'աշխատէին եւ խուլ
քշփշոցը ընդհանուր ժխորի վերածուած էր, որովհետեւ ամէն փըն-
ալուտութիւն դերեւ ընդունուած էր:

Եւ մէկէն պայթեցաւ գուժկտնը, ամպրոպի պէս:

— Պաղտայենց հարսին դիակը տեսեր են աւագարբիւրան տակ...

— Իրի՛նչ...

— Իրի՛նչ պէտէ՛ս...

Ինչն ու ինչպէսը ահաւոր ճիւղեր էին, որ փոթորիկ բարձրա-
ցուցին Պաղտայենց վրանէն: Փոթորիկը հեղեղեց վրանէն դուրս:
Հեղեղը ծփանք տուաւ եւ ալիքները շրջաններուն խառցան, ահազ-
նացան ու բռնեցին մէկ ուղղութիւն...

— Ի՞նչ կայ...

— Ո՞վ է գոհը...

— Ո՞վ է գարնողը...

— Ո՞ւր, ո՞ւր...

Հարցնողները, հետաքրքրութենէ մղուած, բնագլային թա-

փով, ալիք-ալիք, իրար զայլով, խտանալով, ամբողջութեան մէջ իդան դեռ ու գետը հոսեցաւ գէպի աւազարուրը: Գետին սկիզբի մեծ ալիքը Պաղտոնն էր, որ սարսափահար կենդանիի պէս ոռհալով կը որուար: Իր ձայնը խորուած էր. դէմքը ճաթկուած, թուին մէկը օդը բռնած, գաւազանը շարժելով: Ան կէս խելագարած էր եւ բառերը անհասկնալի էին: Բայց հասկնալի էր, որ ան կը վազէր զարնուած վազերի մոնշիւնով, գինք վերաւորողը բզկտելու համար:

Պաղտոնին կը հետեւէր հայրը. մայրը կը վազէր ողբաձայն լալով, պոռչալով, երկու թեւերը երկինք քարձրացուցած՝ անխնայ-ծելով ինքզինք, որ պատճառ էր եղած հարսնուկի մահուան...

Մարդկային հեղեղը գոռում-գոչումներով, լաց ու կոծով հասաւ աւազարւրան տակ: Պաղտոնին հարաւ գտան կոնակի վրայ պառկած, դէմքը գէպի Տիգրիս գետը: Մահուան անկողնի մէջ եղածի պէս: Մարդկային էր ծածկէր սրունքները. վառ դեղնագոյն լաւ-շակը քիչ մը սահած ետեւ, լոբոստ մազափունջը թողած էր ճակտին իջքեւ սպոյ պոսակ: Մատաղ տարիքը դեռ չէր հիւսած ոչ մէկ կնճիռ դէմքին: Կապտորակ աչքերը վարապուրներ էին կաթնագոյն կոպերը, որոնց միախառնուած թարթիչները ըլլային կարծէք սեւաթոյր, երբեմն ժապաւէնի հիւսքեր՝ սուգի նշան... Գուրծքին տակ, կոնակէն ծիրան թարմ արիւնը կ'ընէր մարդոց, թէ ոճիրը նոր էր գործուած: Անվիրտ պառկած էր Սանամ մահուան միջնակի վրայ եւ գեղեցիկ էր հրեշտակի պէս եւ անբիծ՝ շուշանի պէս: Այս էր, որ պտթկացուց բոլորին լացը Պաղտոնինց հարսին համար եւ անէծքը՝ մարդասպանին հանդէպ...

Կետուր մայրը փռած էր իր կուրծքը հարսի սրտին, թեւերով գրկած անոր գլուխը: Լաց չէր իրենինը, այլ սիրտը քղկտող ողբ.

— Վա՛խ, հարսնուկ ջան. վախ թմ մէկ հատիկ Սանամ... յեղուա չորնար, աչքերս կուրծքին... սապաղ եղալ քու ջանիդ... ձեռքերս կոտրէին, որ քու ազատութիւնդ բանտեցին... Ելի՛ր, ելի՛ր հարս ջան, պոռա՛ երեսիս մէկ անդամ գոնէ, սուսիկ հարս ջան... Ելի՛ր, տե՛ս. նոր հարսնեւորներ եկան՝ քեզ նոր պիտի պը-սակեն, ես քեզ դուրքան, դէ, գլուխդ վեր առ, ժպտա՛ մէրիկիդ... Ժպտա՛, ժպտա՛, դու որ շփոտացիք բնաւ...

Կարապետ աղան ծնօտը ափած կանգնած էր հարսին գլխա-վերեւը: Թաւիլինակը աչքերուն, մարդիկ կը տեսնէին անոր ուսերուն ցնցբուսածը, որ խոր վիրտի նշան էր: Պաղտոն խելագարած էր, նկա-տեցին ներկաները, որովհետեւ կը թաւալէր աւազին վրայ եւ ծիծաղ ունէր ձայնալարերուն մէջ...

Ձխուած բան էր: Համաճարակը շատ մարդ տարած էր, ող-բը ընդհանրական էր. բուժ էր մարդկային վիրտը: Նահր էլ-Սմարի մէջ առաջին մահն էր Պաղտոնինց հարսինը եւ միակ զոհը ոճիրի մը, որուն գրգապատմաւ դեռ յայտնի չէր:

Դէպքին վայրը փութացեր էին Գաղթականների պատասխա-նատուները, ծուխին քահանան եւ քննիչ մարդիկ: Տեղւոյն վրայ ու-րոշուեցաւ Սանամին մարմինը թաղել քրակողին, գետահայեաց լան-ջը բնորոշով:

— Հառարակաց գերեզմանոց շունինք: Այս անպատը կը մեր-ժէ գերեզմանոցի գոյութիւնը: Կեանքին մէջ Հարս Սանամը բախտա-ւոր չեղաւ, ինչպէս մեզմէ շատեր. բայց թող յիշատակը ըլլայ բախ-տաւոր: Կետուր հօր, Կարապետ աղայի առաջարկով, կը թաղենք տաւրը:

գաղթականների ամենասիրուն հարսը՝ Սանամը, աւագարընան կողմին. հետը ունենալով հայրենի մեր աշխարհին սրբազան գետերէն Տիգրիսին ջուրերը. — Մուխին երէցը այդպէսով ալ օրհնեց գերեզմանը, ուր կը հանգչէր անապատին կարմիր ծաղիկը՝ Հարս Սանամ. Թող թիշտ անթառամ մնայ իր գարուն յիշատակը...: Է՛մ Վերիմ Երուսաղէմը երգուեցաւ համերգանման ձայնանիշերով: Բոլոր ներկայ եղողները սպառել կը ճգնէին իրենց ձայնին պաշարը. Կողբային այրերը, կիներ եւ հարսեր արցունքով կ'ողողէին մահերգը, աղջիկ-տղայ ձայները կը թուէին ըլլալ ճիշդ դաշունահարուած Սանամին:

Մաղթերգի կէսին, Հոն հասան երկու տղաք, արմատենի թարմ ճիւղերէ հիւսուած խոշոր խաչ մը կրելով: Քահանան օրհնեց խաչը, զոր գետեզեցին տղաքը Սանամի հողաթումբին դիմադրեալը:

Ո՛չ ոք պիտի անգրադառնար, թէ այդ երկու տղաքը ի՞նչը կու գային Պաղատինց հարսին: Անոնք վիժած առաքելութեան մը ուշացած վկայութիւնն էին տեղի ունեցած ոճիրին, որ պիտի մնար անյայտ: Տրդատ եւ Մակար չէին կրնար վկայի դեր խառնել, վախնալով, որ սկզբնական քննութեան առաջին զոհերը չգառնալու համար՝ պէտք էր կասկածէ դուրս մնալ...: Մակար կը պահէր Սանամի կուրծքին վրայէն վերցուցած, ոսկեջրուած թղթիկով չորայայտ սալիկը, շնորհուած անգլիացի օպային կողմէ: Բազրատ գիշած էր իր բաժինը ընկերոջ եւ Մակարի համար անիկա պիտի դառնար յիշատակի նիւթական մասունք մը:



Ոճիրը անարձագանգ չմնաց: Գաղթականների պատասխանատուները դէպքը նկատեցին ազգային արժանապատուութիւնը վիրաւորող արարք մը եւ նշանակեալ քննիչ յանձնախումբը փորձեց լուսթեան քողով ծածկել զայն: Սակայն, շարաթ մը ետք, Անգլիական Բարձր Հովանաւորութիւնը, որ առիթ կը փնտռէր հարուած աւալու աղաղային այդ արժանապատուութեան, սպայ Մազլոնալդի գլխաւորութեամբ, տառնեակ մը հնդիկ զինուորներով, կոխել տուաւ այն վրանը, ուր կը բնակէին Թուռն Սուսամբար եւ իր որդիին, կալանաւորելով Մացակ Մարտինեան կոչեցեալը, ոճիրի իրրեւ բուն հեղինակը:

Սանամին բողոքը եղաւ մահուան իր ստորգ կտակը...

Անգլիական Բարձր Հովանաւորութիւնը պատժեց հայկական դիմադրական կորովը եւ քանդեց ջրամբարներուն գոյութիւնը, որ ժողովուրդը գետէն առնէր իր ջուրը, չէ՛լ մը աւելի յողնեցնելով ջրկիր կիները...

Սկզբի օրերուն, երբ դեռ կային Մացակ Մարտինեան եւ Հրակայ ջրամբարները, ժողովուրդը սրբացուց Սանամը: Հարս ու նշանուած աղջիկներ գացին մէկ-մէկ Սանամի գերեզմանին վրայ իրենց ուխտը կատարելու: Զրամբարներու վերացումէն ետք, ջրկիր կիները սկսան անիծել անոր յիշատակը, որովհետեւ չպապանձող լիզուններ հնարեցին սուտը եւ զայն վերածեցին բամբասանքի: Գաղթականային մէջ այնուհետեւ կը լսուէր անիծեալ հարսին առասպելը՝ Իմլիլիզի կնիկը նկատելով իրենց նորանոր չարչարանքներուն բո՛ւն սապապը...

(Շար. 3 եւ Վերջ)

ՍՄՐԱՆ ՓԱՆՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R. @

Ն. Բ Ի Ի Զ Ա Ն Դ Ա Յ Ի

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

ԺԲ

Երբ որ ես ինձի առանձնացած տեսայ առանց բարեկամի, առանց խորհրդակա- նի, առանց փորձառուների, չորս կողմս դատարկութիւն, ձանձրութիւն, դժուա- րութիւն, պարսպորդութիւն, անմխի- թարութիւն, երեք շաբաթ միտքիմակ ու- ռոնացի մտացս մէջ աշխարհ դատնայու խորհրդոյն վրայ, գուշակեցի ինչ որ վե- րակացուս կրնար առարկել եւ անոնց պա- տասխանները պատրաստեցի, վերջապէս ինքզինքս պնդելով ու մէկիկ մէկիկ յի- շելով հին ասանի կտրին զօրավարներուն քաջագործութիւնքն որպէս զի անոնցմով խրախուսուիմ, մասյ իր խաւցը, եւ այն միջոցին որ կրցածիս չափ անայլ- ալլակ մայնով մը յայտնեցի կամքս, կարծեցի որ կապարի ծանր հատոր մը սրտիս վրայէն փրթաւ վար ինկաւ ու ա- զատարար սկսայ շնչել, Այն աստիճանի հաստատ կը կարծէի ինքզինքս որոյմանն վրայ եւ փափաքիս հասնելու այնպէս ապահով որ ամառվ առաջ փոքրիկ դաւեշտ մը շարադրած էի, յորում կը նկարագրէի թէ ինչպէ՛ս կը շփոթէին ընկերներս իմ վաճառքն հինկուս համար, ի՛նչ դատա- տաններ կը կտրէին եւ ի՛նչ պակասու- թիւներ կը դնէին վրաս(11)։ Բայց որ- չափ որ անաշատութեամբ խօսիլ կուտայի

իրենց եւ յերս զրհիւն ընդունվին պար- տաւոր կը ցուցնէի զիս, ուրիշ կողմանէ շատ սուր երգիծութիւններ, շարանճի ակնարկութիւններ եւ իրենցմէ ոմանց ու իմ մէջս անցած հետաքրքրալարժ դիպ- ւածներ ալ դրած էի, որոնք բաւական էին իմ յիշատակ պատկառելի ընել տա- լու։ Այս զաւեշտը ճամբայ ելած օրս խը- ցիս գրասեղանին մէջ պիտի ձգէի որպէս զի երբ որ թողած գրքերս եւ թղթերս խառնէին՝ ապահովապէս գտնէին զայն։ Ըրչափ յետս ընդդէմ ակնկալութեան եւ կարծածիս պատահեցաւ ամէն բան։

Մեծ զարմանք եւ մեծ ցուցուց վերակացուն երբ որ լսեց խնդրեցս. ան- շուշտ չէր կրնար գուշակած ըլլալ որ ին- ծի պէս ուսումնասէր, հանգարտ միտքը գոց եւ տնանկ ընտանիքէ պատանի մը Մ. Ղազարու համգումալիւնը ձգել եւ ծնո- ղացը քով դառնալ ուղէ։ Առաջին անգամ որ այս խնդրեցս ըրեր էի Մինասեան Հ. Պետրոսին՝ խաղ տղայ մ'էի, եւ վերա- կացուն մէկ շաբաթուան երեսգործու- թեամբը, յետոյ հալատուելովն, զժողովոց կրակին զեղեցիկ նկարագրութեամբն եւ քանի մը պատկերներով զղջման եկայ ու գմեղայն ըսի։ Այս երկրորդ անգամուն ալ անփորձ, երկմիտ, եւ ամենէն աւելի՝ վախկոտ, կը թուէր ինձի որ իմ երջան- կութիւնս վաճառքն մէջ պիտի ըլլար եւ չէ թէ յաշխարհի. առակին չունը մտածելով չէի համարձակեր որ բերնիս ապահով չէի համարձակեր որ բերնիս մէջ նետեմ եւ չքոտի շու- ըի մը ցանկացած ըլլամ։ Հապա թէ որ

(11) Զաւեշտ Փռքոյն Թեքոն զատանայ, տեսարանն է ի վարժարանի, 18 էջ, 21 Մարտ 1881։ Պատուած է Երաւորի Դիւանում։

իրաւացնէ Հողեւոր Հօրս բաւերն պէս վաճառէն դուրս անթուրեմնէ մեռնի՞մ, թէ որ Պօլոսոյ նման սպախանալ քաղաքի մէջ մէջ շար օրինակներու հաւեւելով բուրովին ցոփանամ, թէ որ յախտեալան տանջանաց դատարարութի՛մ ... այս յիմարական խորհուրդները անգաղար կը տանջէին, կը խռովէին, կ'ապշուցնէին իմ միտքս, որով չկրցայ պէտք եղած պնդութիւնն եւ հաստատութիւնը ցուցնել վրաս եւ վերակացուն շարար ու մեղր իրատեսիլէն բոլորովին թուացայ: Միտասուանը հանդերձեալ կենաց եւ անհեղ զոտաստանին վախովը բռնէր էր դիւս. իսկ սա՝ այս աշխարհիս, այսինքն վաճառէն քաղցրութիւններովն եւ վաճառական իննաց տուելութեամբը ջանաց բռնէի. «Տես, որդեակ իմ, բաւ, թէ ի՞նչ կանոնաւոր, ի՞նչ խաղաղ եւ ի՞նչ հանգիստ կեանք կը վարես մեծաստանին մէջ. բնաւ հող կամ մտմտով չստանիր. կանակդ միշտ տաք եւ փորդ միշտ կուշտ է. (այս իտաքս աւելի ճարտասանական բացատրութիւն մը սեպեցի մտքէս քան թէ ճշմարտութիւն, վասն զի թէ՛ ցրտէն եւ թէ՛ անթուրեմնէն լատ անգամ նեղուած եմ): Դու կը փափաքես աշխարհ դառնալ, բայց չես գիտեր թէ որպիսի՜ տեղ է այն. մինչև հիմա ապրուստող հայթայթելու համար մտածած չես, մինչև հիմա հացդ առանց քրտինքի կաթիլ մը թափելու գրտեր եւ կերեր ես. մէջքը հօրդ հարցուր թէ ի՞նչ նկատութիւններ չկրէր ամառ ձմեռ, հիւսնդ կամ վատառողջ, ամէն օր չուկայ երթալու եւ դառնալու համար: Վաստակածն ալ ի՞նչ է, վախելածն ալ ի՞նչ է. չեմ ուզիր սիրտդ վերաւորել, բայց աւելի լաւ է որ յայտնապէս առջեւդ դնեմ աշխարհի կենաց ամէն զօրութիւններն, քան թէ թող տամ որ խաբուսիկ երազներով մոլորուի սեւ որողայթի մէջ իյնաս: Մեծապէս անիրաւած կ'ըլլաս Անտուռոյ եւ մեծապէս կ'ապերախտես եթէ հազար փառք չտաս որ աղցաւոր կեանքիս ամէն զօրութիւններէն բոլորովին ազատ ըլլալդ ետքը լատ աղետական եւ տանձող զուարճութիւններ ալ կը վայելս ամէն օր. հապա երկու շարք թարեկենդանի զրօսանքն, թաղտոնական հան-

դէսները, հապա հինգ շարք գիւղահանացութիւնը, հապա Լիտուան, հապա ճիւղնաղանքը: Այս ամէն վայելքները նորընծայարանի մէջ ունէիր եւ վարժարանիս մէջ ալ կ'ունենաս. իսկ երբ քահանայ եղած դուրս կ'ենես՝ գիտե՛ս թէ հոն ալ ի՞նչ զուարճութիւններ, ի՞նչ առաւելութիւններ, ի՞նչ փոխարէններ պահած են քեզի: Ուսումնասէր եւ լեզուագիտութեան կողմանէ քաջուշիմ պատանի մ'ես դա, քեզ հպարտացնելու համար չեմ ըսեր, բա՛ւ լիցի. անտարուկոյս Ռաֆայէլեան զարոյցը պիտի դրուիս իբրեւ ուսուցիչ. առկէ աւելի մեծ պատիւ կամ շնորհ կ'ընա՞յ ընել քեզի միաբանութիւնը. դու որ միայն տախտակ տնեւու երես տեսած ես, այն փառաւոր պալատին մէջ պիտի նստիս տիրաբար, եւ պարահանդէսին ոսկեմեղուն դահլիճը վեր վար պարտած ժամանակը կ'ընաս յիշել երբեմն նոյն պալատն նստող ազնուատոհմ տիկիներն եւ օրիորդներն որոնց թոռուքն այսօրուան օրս շքաւորութեան մէջ կը տուապին, եւ դու խոնարհ եւ աղքատիկ կ'ըսես որք թաղաւորի մը պէս անոնց բնակարանին մէջ կը նստիս եւ անոնց պառկած սենեակներուն մէջ կը ննջես: Սկսեմք թէ հնազանդութիւնը քեզի հրամայէ Բարիդու զարդն երթալ. ո՛հ, ի՞նչ քաղցր բան է այսպիսի հրամաններու հնազանդելը. ես Բարիդ տեսնելու բախտն ունեցած չեմ, բայց քանի որ կը մտածեմ թէ զուցէ դու, իմ յառաջագէ՛մ եւ սիրելի աշակերտս, օր մը այդ հրաշալի քաղաքն տեսնես՝ չեմ կրնար որոտ խուրճանս չափ դնել. եթէ աշխարհական ըլլայիր, ստոյգ է որ ծննդական քաղաքիդ ազատի, ցեխոտ եւ նեղ փողոցներէն դատ աշխարհիս մէկ կողմն կամ անկունն յաւիտեան պիտի չտեսնէիր. իսկ հիմա խեղճ արեղայ մ'ըլլալով փառաւորապէս կ'անցնիս Բաղիսայն, Ձուիցերիսայն, Գաղղիսայն եւ կ'երթաս դարու քաղաքականութեան կեդրոնը զոր տեսնելու համար ամէն մարդ կը խնթենայ, կը տեսնես այն մեծակառոյց շէնքերը, դեղեցիկ փողոցները, հրապարակները եւ պարտէզները որոնց համբաւն իսկ ինքնակայներն եւ թաղահիւսիսն կը յորդորէ աշխարհիս շորս կողմէն զան տեղանաւոն

ըլլան։ Տես մեր Հ․ Ստեփանոսը որ աճիւններով Լուսինայի դքսին պալատը նստած է ուսումնասէր իշխանին հայերէն լեզու սորվեցնելու համար․ — տես մեր Հ․ Ղեւոնդը որ աշխարհաւրջիկ ուղեւորի մը պէս կրկին եւ կրկին տնդամ անցած է Դաւրիդէն, Լոնտարայէն, Պեռլինէն, Վիեննայէն, Հոտովմէն, Ֆիորենցիայէն եւ այլն․ — տես մեր Հ․ Օքսենտը որ մինչեւ Հնդկաստան տեսնելու կղական բարեբախտութիւնը ունեցած է, եւ մեր իւրոյ ճանչցած տաճարները, մահաբանները, պրահմանները, բակուրները իրեն համար ընտանի եւ ծանօթ բաներ են․ — տես մեր Հ․ Արսէնը․ դրիթէ քառասունհինգ տարի նստած է Տիւղեան Յակոբ չէյէպիի եւ Միհրան ոյէյի տունը, ու Ս․ Ղազար տղմուտ կըդրկին կրօնաւորներէն ըլլալ ուղելուն համար՝ զնացած է մինչեւ Բեդրպուրկ։ Ո՛րք թողում նաեւ որ թաղուորք եւ թաղաւորապետք, իշխանք եւ մեծամեծք, տնտանի ճարտարադէտք եւ մատենադիրք երբ որ Վենետիկ կուգան, լին ուղիւ տունաց Հալոց վանքը տեսնելու մեկնել։ չէի՞ր տեսնելք ամառուան օրերուն մէջ որ խուռն բազմութիւն արանց եւ կանանց յամենայն կարգէ կուգային պըտըտելու այս անշուք մենաստանս, այնչափ որ չորս հինգ քահանայ չէին բաւեր անոնց առաջնորդելու։ Ո՛վ պիտի նայէր քու երեսդ եթէ աշխարհական ըլլայիր․ ո՛վ իր անձին պատիւ պիտի համարէր քեզի հետ ծանօթանալը եւ խօսակցիլը․ ո՛ր թագաւորը կամ ո՛ր իշխանը արծառի պիտի սեպէր քեզի սկի միտալ, ականակապ չբանշան կամ սակաւագիտ եւ մեծազին գրքեր ընծայելու։ Կ'ուզե՞ս որ այն ալ ըսեմ թէ Միսիք-Բաբեան ճեմարանի անդամ ըստիւր մեծ պարծանք կը համարին իրենց եւրոպացի գիտունները, հաճութեամբ կը թղթակցին մեզի հետ եւ մեր կարծիքն պատկառանք կը հարցնեն արեւելեան ազգաց պատմութեանը եւ լեզուաց յրաջօք ծագած տարակոյտներուն մէջ։ Կ'ուզե՞ս որ այն ալ ըսեմ թէ Միսիք-Բաբեան անունը չդիտցող քէլ մարդ կայ, ու շատ ուսումնականներէ արեւելից Բենետիկեանք ըստելու պարծանքն ունեցած ենք։ Մի՛, որդեակ իմ, յետ այսչափ մանրամասնարար քեզի նկարագրելուս

կրօնաւորական վիճակին միջթարութիւններն, առժամանակեայ թեթեւ դժուարութեանց համար մի՛ լքանիր, ու արքայութեան ճամբուն մէջ ակօս բանալու համար մտնդ բռնելէն վերջը ետեւդ մի՛ նայիր, վասն զի Սոքոմ ու Գոմոք ծծմբով եւ միւթով կ'այրին եւ աչքեդ աւերածոյն պղծութենէն զատ ուրիշ բան չեն տեսներ։ Դիմացդ է տմէն հանգստութիւն, ամէն անդորրութիւն, ամէն երջանկութիւն։ Ատոռած զքեզ սահմանք է նախանձիք վիճակ քահանայութեան։ Թող մի՛ տար որ սատանան զքեզ գրկել ջնայ այն ամէն բարիքներէն զորոնք հարիւրապատիկ խոստացած է քեզի երկնաւոր վարդապետք եթէ յայտ աշխարհի եւ թէ՛ ի հանդեմնելու, որուն արծանի պիտի ըլլաս հասնելու շնորհք եւ մարդասիրութեամբ Տեսն մերոյ Փրկիչին Յիսուսի Գրիստոսի, որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ յաւիտեան յաւիտենից։ Կամայ ակամայ ամէն միմեկից եւ ոտքի ելայ․․․ համարում։

ԺԳ

Գիտեմ որ ընթերցողը անմիտ կամ խենթի տեղ պիտի դնէ զիս ու զաղամանայ որ ինչպէս խաբուել եմ այս կեղծապատիւ յորգորներէն ու կապանքներս չեմ կրցած խորտակել։ Ո՛վ դու որ այդպէս յանդիմութեամբ կը դատես եւ կը դատապարտես զիս, եթէ իմ տկար եւ թոյլ ընտրիւնս աւնենայիր, եթէ ինծի պէս ընթերցասէր եւ ուսմանց ծարաւի ըլլայիր ու սիրէիր հանդարտ ու անշիթ կեանք մը, եթէ իննուկէս տարուան հասակէդ չորս պատի մէջ փակուելիք՝ առանց մօր մը հօր մը դուրս վարելելու եւ տեսնկութեան մէջ մեծցած ըլլալով ամենեւին կենաց թաղցրութիւն զգացած եւ զքօսանքներն ճաշակած ըլլայիր, եթէ վեց տարի շարունակ քանի մը օտարախորթ, ցուրտ կամ դաժան երեսներէ զատ ուրիշ մարդու երես չտեսնէիր եւ ամէն օր նոյն քարոզներն, նոյն խճրատներն լսէիր, կը կարծես որ իմ տեղը արիութիւն եւ հաստատամտութիւն ցու-

ցած կ'ըլլայի՜ր եւ ուղածդ առաջ կը տա-
նէիր. կը կարծեմ որ միանգամ ծուղակն
խնակդ հոգը դիւրին կ'ըլլար Հոնկից
աղաթիւը Յիւրաի տասնուվեց տարե-
կան էի երբ որ Հայրենիք դառնալ փա-
փաքեցայ եւ այս երկրորդ անգամն
էր. սակայն ոչ միայն սիրտս արթնցած
չէր, այլ եւ ոչ ծնողացս կարօտ կը ըզ-
գայի. Վասիլի եւ պղտիկ քոյրս Հատոնց
մոտցեւ էի, ինչպէս թերեւս իրենք ալ
ղիւս. բնական կան յիշատակներն օրէ օր
կ'աղօսանային մտաց մէջ. Հօրաքիւռ-
քոյրի մը ունէի գոր Հօրեղբայր կը կոր-
ծէի եւ աշխղէս ա. կ'անուանէի թղթոցս
մէջ (12). Հայրս՝ անշուշտ գործոցը ան-
յաջողութեան համար եւ վախճանով որ
իբրեւ բեռ կ'ըլլամ՝ կը դռիէր իմ քահա-
նայութեան ցուցած փափաքս եւ կը յը-
գորէր որ ետանդէս չպաղիմ: Ինչո՞ւ, ու-
րեմն հանէի կրօնաւորական զգեստս.
Ինչ կը պակսէր ինծի վանքին մէջ. ու-
րեմն էին իմ նեղութիւններս եւ հոգերս.
Միթէ կը ծեծէին զիս, անօթի ծարա՞ւ.
Կը պահէին կամ քցաններով մարմի՞նս
կը կալաւէին, ինչպէս ըսաւ վերակա-
ցուն, օրպէս զի ատիւի երեսը ինծի վան-
քին բնակութիւնը: Եթէ առ ժամանակ
ինչ գծուարութիւն կ'իմանայի, արդեօք
աղայական կարճամտութիւն չէ՞ր յու-
սահատիւը: Եւ վեց տարուան թափած
քրտինքս ապարդիւն ընելը. եթէ ամեն-
օրեայ ժամերգութիւններն եւ հոգեւոր
հրահանգներն կը ձանձրացնէին զիս,
արդեօք սրբազան լեզուով զաղօրութիւն
ըսուած հիւանդութեան հետեւանքը չէ՞ր
այն ու պահքով եւ աղօթքով չէի՞ կրնար
ջախջախել ստոանային դուրսը, մօտա-
ւանդ որ սիրելի վերակացուն ալ ինծի
նշանակեց պիտի ըլլար: Արդեօք ամենայն
առաւարք շղիւրտացա՞ն, ամենայն գառ-
նութիւնը չքաղցրացա՞ն լսած գեղեցիկ
եւ մեծամեծ խոստմունքներովս (13).
Արդեօք վանքին անապատը ծաղկաւէտ
ընթերցի պարտէզի մը պէս չգարդարուե-

ցա՞ւ ինծի համար, ու ես ալ ճերմակ
սրբաւէր ազանի մը չեղա՞յ որ սեւ ու
ժժւր աշխարհիս մէջ մաքուր թաթիկ-
ներս հանգչեցնելու տեղ մը չգտնելով
մրտենիներու եւ դափնիներու վրայ պի-
տի թառէի ու հոգեւորական վուժմունքս
հնչեցնելով արժանի պիտի ըլլայի երկ-
նաւոր փեսային որտակաթ համբոյրներն
ընդունելու: Ես՞տ բան մըն էր ճրկու
տարի ալ ակոսներս սեղմած համբերե-
լը, որպէս զի վերջը հանգստութեամբ
ծովուն մէջ լողած ու Բարիկ տեսնեմ,
Լոնտոն եւ Բեռլինի երթամ: Վերա-
կացուն աղէկ կը ճանչնար իր արուես-
տին այս ու քէն. ինծի պէս երե-
սուն քառասուն տղայ ձեռքէն անցուցած
ըլլալով գիտէր թէ ի՞նչ են մեր գլա-
ցումները այն տհաս հասակին մէջ, ինչ-
պէ՞ս փոքրիկ նեղութիւններով կը յու-
սահատինք եւ մանկական անհամբերու-
թեամբ կը դանդաղեցնէր կրթութեան տասը
տարիներուն երկայնութեանը վրայ. գի-
տէր թէ ո՞ր տեսակ խօսքերը մեր սիրտը
եւ միտքը կը շլացնեն եւ կրօնաւորական
գիւրութեան քան դերկաթ խոտազոյն
չղթաներն՝ ծաղիկէ փափուկ գրասանդ-
ներու կը դարձնեն: Ըմբարիտ էր ըսածը
թէ աշխարհ ի՞նչ ըսել է դեռ եւս հաս-
կըցած չեմ, բայց խորամանկ մարդասի-
րութեամբ մինչդեռ աշխարհային կենաց
միայն ծանրութիւններն եւ տառապանք-
ներն ճոխանալով մը կը թափէր դիմացս
զիս սարսափեցնելու համար, միւս կող-
մէն մարդկային ընկերութեան, բնա-
նական կենաց, ամուսնական վիճակին
բաղցրութեանց եւ վայելքներուն վրայ
մէկ քառ մ'ալ չարտարեքցի:

Աստուած. Եթէ զգացումներս ար-
թնգած բոլորին եւ խելքս հասած ըլ-
լար, եթէ գիտնայի թէ ի՞նչ անուշ, ի՞նչ
սիրելի բանէ զիս զրկել եւ ի՞նչ ծանր
պարագ մը վրաս դնել կ'ուզեն, երկինք
երկիր ի վրայ կ'ընէի, կը սպառնայի
վանքին չորս կողմն կրակ ձգել, ինքզինքս
ծով կը նետէի եւ այնպէս կը փախչէի:
Մական իմ անմեղութեանս, անփոր-
ձութեանս եւ աղայութեանս յազթե-
ցին մեծերուն շահախնդրութիւնը, ան-
գրթութիւնը, չարութիւնը: Անիծեա՞լ
ըլլայ ճակատագիրս:

(12) Տե՛ս ծանօթութիւն 5:

(13) Տոգալերեւում, մասիտով՝ «կախարդիչ
հրապուրիչ ճկարագիւրներով»:

ԺԴ(14)

Թերեւս դորտեւրը իրենց համար երկնքէն ինկած երկրորդ կամ երրորդ թաղաւորին չօրս կողմն այնպէս հետաքրքրութեամբ եւ զարմանքով չպատահեցան եւ զինքը չզննեցին, ինչպէս մենք մեր երրորդ եւ վերջին վերակացուն համար բրինջ, որ 1861ի Նոյեմբեր ամսուն մէջ Բարիդ քաղաքէն թաւայեցաւ ինկաւ գլուխներնու վրայ(15): Տասն օր, քսան օր, երեսուն օր միօրինակ իրեն քսուելէն, հետը խօսելէն, դաս տալ եւ դաս առնելէն ետքը, դեռ չէինք հրցած թափանցել իր խորհրդաւոր եւ դադարեցածուկ մտաց խորութիւնը: Ոլիմպական ծանրութիւն մը, փիլիսոփայական գրաւութիւն մը, մէկ խօսքով եւ իր բառը գործածելով՝ ամէն կողմանէ իսկատիպ (original) բնութեւնութիւն մը կը պաշտօնէր, կը պատկանեցնէր զմեզ եւ թող չէր տար որ հետն ընտանեկանով իմանանք ինչ տեսակ մարդ ըլլալը եւ քանի՜ արտելը: Կ'ըսեն թէ խօսքը տրուած է մարդուս իր մասնութիւնքը կեղծելու համար. իսկ մեր վերակացուն տրուած էր խօսքը՝ միտքը չհասկնալու համար. ինքն լաւ չէր բացատրեր, մենք հայերէն լեզուի մէջ տկար էինք, խնդիր մը որուն համար շատ մէկնեք ծագած են մեր ընկերութեան մէջ եւ շատ անգամ ծագը եղած են իր կողմանէ եկած պատճիւրակքն, որոնք իրենց չհասկցած հրամանը չկրնայով ուրիշներուն ալ հասկըցնել՝ ամօթով կը մնային եւ հարկ կ'ըլլար որ երկրորդ դեպքան մը երթար խրթնախօս քրմապետէն առաւելագոյն լուսարարութիւն եւ մեկնութիւն խնդրելու: Իր ամէն պատգամներն եւ պատասխանները միավանկ բառեր էին: Եթէ լիկուրդոսի օրով ծնած ըլլար՝ Սպարտացիք անշուշտ կ'աւտուածացնէին զինքը իր ծայրագոյն եւ գերաւորեալ սակաւախօսութեան համար. արքայն իր

բազմազուծ ողորմութեամբը սփինջս մը պարզեւած էր մեզ, սակայն չէր տորվեցուցած թէ ինչպէս իր մտքին մէջ եղածները կարգալու եւ լատ ալմ հրամանները կատարելու էր, որպէս զի յանդիմանութենէն ազատ ըլլանք: Գրգռուր եւ հատուկաւոր խօսքերէն իմացանք հուսկ ուրեմն որ բարի դիտաւորութեամբ լի էր միտքը, որ շատ ազնիւ համարում չէր առած մեր դասերուն վրայ, որ ամէնքս ալ անկերպարան եւ անկերթ արջու ձագեր էինք եւ թէ ինքը լիզլով լիզելով կատարեալ արլ ալիսի ընէր զմեզ, այսինքն մարդու կարգ պիտի առնէր, որ Պէնտէկոստէի հրաշքը՝ ասորքերի, զանդիկ, պահաւիկ, յոյն, լատին լեզուներն մէջներկա պիտի բաժնէինք եւ կ'լլէինք, եւ այլն եւ այլն: Քիչ քիչ հասկցանք նաեւ որ քաղաքը ինքնահանգ կարգադրութիւններէն շատ կ'ախորժի եւ այնպէս կը սիրէ նորաձեւութիւններն ինչպէս տղայ մը քաղցրաւորները. ասոր փորձն լաւ առինք իր սակաւամասնակեայ տեսեռութեանը միջոց թէ՛ մենք որ իրեն աշակերտ ըլլալու բարեբախտութիւնն ունէինք, եւ թէ՛ րոտոր քահանայ եւ նորինծայրանի ուսանողք երբ որ անուանի կերակուրներ կամ մանրացոյցով տեսնելու քանակութեամբ բաժիններ գրողեցան զիմացնաւ եւ ամիսներով կ'աւանալ ինչ է չկրցանք գիտնալ: Զաչէն ետքը պարտէզ չըջագայութեան կը հանէր զմեզ որպէս զի անմարտութիւն եւ ստամոքսի ծանրութիւն չունենանք (Մինասէանը սոյն մտքով հաստատած էր ընթերցելու ետքը կէս ժամ մտածականի կանոնը) նոյնիսկ դեկտեմբերի կամ յունուարի ցրտովն հիւսիսային հովուն փչելուն ժամանակ. որպէս զի այս ճողտակար կըթուրէինք շէղդրիւնք՝ մեծաւ եռանդեամբ կը վազէր եւ կը վազցնէր զմեզ քամիին դէմ: Ետանգամ նշմարած եմ պատահաններու ետեւ մէկ երկու քահանայից գլուխներ օրոնք գիտելով մեր ցրտէն կարմրած քթերը, հովէն խոտացած մազերը եւ անկարգ հրոսակի մը պէս խառնիխուռն եւ իրերու ուրուականք լուիկ մնջիկ արշաւելը՝ Հեղարար կը ծիծաղէին եւ իրարու կը ցուցնէին մեր խկաւտիկ վերակացուն,

(14) Այս գլխից սկսած պահպանուել է զԵԻ-
ւածքի սեւագրութեամբ մի մասը:
(15) Նոր վերակացում երեւելի է. Ղեւոնդ Ա-
լիշան էր:

որ կալ չես թէ մեզի ճամբայ ցուցնելու համար Հենրիկ Դի Վիտարկին փետրին յիշատակաւը սպիտակ թաշկինակ մը կը պատէր դուխը եւ կապային քղանցքն երեւցնելով կը վազէր:

Շատոնցունէ հռչակուած էր իր անունը միաբանութեան մէջ իրրեւ շատահան-հար բանաստեղծ եւ ամենահմուտ ազգային պատմութեան, հնախօսութեան, մատենագրութեան, աշխարհագրութեան: Եթէ մէկն իրանբաւ տեղեկութեանց սրչափութիւնն հասկնայ կ'ուզէ եւ կը փափաքի հանշնայ զինքն այս կողմանէ՝ թող ինձի դիմէ, եւ անկեղծաբար կը խոստովանիմ որ թերեւս ոչ ոք իրրեւ զիս կը մեծարէ զինքը գրականութեան եւ հայագիտութեան մէջ ունեցած դարմանալի բեղմնաւորութեան եւ ծովածաւալ հմտութեան համար: Սակայն ի սէր ճշմարտութեան կը խոստովանիմ նաեւ որ աւելի ինքն օդաւընցաւ մեղովէ քան թէ մենք իրմէ. բարոյական ազահութեան, ուրիշի հասկնչնելու անկարողութեան թէ անխմանալի անհոգութեան պատճառաւ չեմ գիտեր՝ գրեթէ հինգ տարուան միջոց չըրկեցաւ մեզի փոխանցել իր մտաւորական գանձերուն գոնէ մէկ մասը, մինչդեռ ամենքիս ալ երաշտացեալ եւ պապակեալ գետին պէս բուսարեւելու համար կը ըստանէինք շահեկան անձրեւի մը: Ընդհակառակն մենք իրեն յի ու լի օգտակոր եղանք հին գրչագիրներ, ճառքներներ եւ յայտնաբերք խառնելով ու պրպտելով, այլեւայլ ցանկեր եւ ցուցակներ շինելով, ամէն տեսակ հատուածներ, պատմութիւններ եւ ճառեր գաղափարելով:

Չորս հինգ ամիս անցնելէն ետքը անյուշտ մտածելով որ մեզի պէս չափահաս եւ կրակուրոց պատանիք որչափ որ արտաքին զրազանք ունենան այնչափ աւելի պակաս կ'իմանան իրենց վիճակին ծանրութիւնները, զոյգ մը ազաւնի եւ զոյգ մը տատարակ բերաւ վարժարան, բաց ի քանի մը հաւերէ եւ աքլորներէ, Ամերիկացի բազէ մը եւ զոյգ մը ճերմակ սազերէ որոնք մասնաւորապէս մեզի հետ մար բերուեցան Բարիդէն եւ ձուռեցան պարտէզին մէջ: Հաւերը եւ սազերը րնկերները մէջերին բաժնեցին եւ ոկսան զանոնք խնամել, իսկ ես ընտրեցի ազաւ-

նիներն եւ տատարակներն, որոնք մեծ զրազանք եղան ինձի համար ու մեծ պատմութիւն:

Բայց ի՞նչ վիճակի մէջ էր այն ատեն միտքս ու ի՞նչ նոր փոփոխութիւն կ'ըլլար վրաս:

ԺԵ

1861ի փետրուարի երկրորդ օրն լըրացած էր նորընծայութեանս առաջին տարին, եւ կանոնին համեմատ նոյն տարեդարձին օրը եւ ինքն սեղանատունը ծնրադրելով միւս ընկերացս հետ հրապարակաւ ծանուցեր էի զայն արքային եւ թոյլ տր միաբանութեան եւ յայտնել էի նաեւ թէ սրտի մտօք կը փափաքիմ կրօնաւոր ըլլալ եւ ուխտել ցմահ հնազանդութիւն, աղքատութիւն, ողջախոհութիւն: Իսմէ ետքը ընկերներս ալ կարգաւ յոտակ եւ բարձր ձայնով կրկնած էին նոյն սրբազան խօսքերը:

Հինգուկէս տարուան նորընծայարանի փորձը եւ ամենօրեայ հրահանգները եւ վարժարանի երկու ամիսները քիչ շատ հասկցուցեր էին ինձի թէ վաճառի մէջ ի՞նչ կը նշանակին հնազանդութիւն եւ աղքատութիւն բառերը, որոնց վաղափար չկրնար ունենալ աշխարհական մը: Սրտի մը կը հնազանդի իւր հօրը, ազջիկ մը իւր մօրը, կին մը իւր ամուսնոյն, բայց ի սիրոյ եւ ոչ ի հարկէ. իսկ կրօնաւորին իւր առաջնորդին հնազանդելը չկրնար եւ ոչ իսկ կերպով մը բազմապատկել ծառայի մը իւր տիրոջը, գինուորի մը իւր գընդապետին, գերւոյ մը իւր բռնաւորին հնազանդելուն, վասն զի առոնք որչափ ալ խիստ հրամաններ ընդունին, սակայն մտօք ազատ են, կրնան հպատակելով հանդերձ չհաւնի, պախարակել, տըրտընջալ եւ սրտանց ատել իրենց մեծերը եւ «մահու չափ մեղք» չեն գործեր: Բայց կրօնաւոր մը. ճշմարիտ եւ կատարեալ կրօնաւորը պէտք է սեպէ թէ Աստուած եւ իւր արքայն մի եւ նոյն քանն են, ինչ որ քա կ'ըսէ Աստուծոյ կողմէն եւ բերնէն է. «վարդապետն առաջ». անսաստել սոսկալի ամպարչտութիւն է, գանդատիլ եւ նոյն իսկ ա-

աւարկութիւն ընելը կամ մտաւոր դիմա-
դարձութիւնը՝ մահուչափ մեղք է եւ դը-
ժոխաց արժանի եղեոն։ Սեւին ճերմակ
ու ճերմակին սեւ պէտք է ըսել, եւ հա-
մադամբ ծանր պաշտօններ կամ անա-
խորժելի յանձնարարութիւններ կատա-
տարելու է, եւ սիրով։ Ի պաշտօնովի
պէս ողորմելի, անսպաս եւ անմխիթա-
րազարք (որ վանքին Սիրերիան է) Հինգ
իւնիս տարի նստելու է եւ անարտունջ։
Հնդկաստանի կրակատեղաց կլիմային
ներքեւ տարիներով ժառանգութեան ան-
վերջանալի կռույց մը համար տառապե-
լու եւ յողմելու է, ու նաեւ մեռնելու։
Քառասուն յիսուն տարի ընտանեաց երես
ամենեւին տեսնելու չէ՝ յետ տասն կամ
տասներկու տարեկան հասակէն։ անոնց-
մէ բաժնուելուն, հայրենեաց կամ ծննդ-
եան քաղաքին կարօտը սրտին մէջ խեղդե-
լու եւ արցունքով թրջած հացը ուտելու
է, եւ նամակներու մէջ հաեւ ետեւ կար-
գալու է չորը, մօրը, եղբորը, քրոջը,
յախորհիս վրայ ամէն սիրականներուն
մեռնելը ինչուան որ ինքն ալ մօտէ մահ-
ւան անկողինը։ անշուքի որ բթէ արքայն
յակնկալս պատուէր տայ ճշտաստան,
Դոշինչին կամ թէ Ամերիկայի շիկամորթ
վայրենիներուն քարոզութեան երթա-
լու, պէտք է ճամբայ իյնալ, եւ նոյն
չաքաթը, նոյն ժամը, նոյն վայրկեանը,
եւ անշուշտ նահատակութեան մը տան-
ջանքներն համարելու է գրօսանք հա-
սանեաց կամ խնջոյից։ Այս ամէն բա-
ներս մարդկային տկարութեան եւ ահա
խելապատկիւն կարողութեան համեմատ
հասկցեր էի, սակայն վերակացուիս
խօսքին հաւատարմով Բարիդ, Լոնտրա,
Իտալիա կը յիշէի, Մուրաթեան եւ Ռա-
փայելեան դպրացաց դիւրեկեցիկ բնա-
կութիւնը կը յուսայի, փառք, պատիւ,
պարծանք կ'երազէի, ու հնազանդութիւնը
իրբեւ ընդելացնալ եւ կեղծաւոր դադան
մը կը քննէր ինծի քան թէ սարսափ
կ'աղղէր։

Նոյնպէս աղքատութեան համար ալ
չառ հոգ չէի ընէր։ Իրաւ՝ հագած սեւ
ու ճերմակ լաթերս չէին կրնար նորու-
թեան, մաքրութեան եւ վայելչութեան
օրինակ ըլլալ, սակայն տեսնող մը չու-
նենալով՝ ամշնալու զգայմունքն ալ չէր

զար ինծի. ծակծկած կամ խաւ ի խա-
ւոյ կարկտաններով հասոցած գուլպաներ
(զորոնք կը լուայի ու կը նորոգէի),
զինուորաց շապիկներուն նման բիրտ,
սոճեւ ու փայտի պէս ցցուած շապիկներ
որոնք ամենեւին չէին կակղանար, կա-
պաներ որոնք սեւութենէն ելած նախ կը
դեղնէին, յետոյ կը կանաչնան, ձմերուան
ցրտէն պատապարուելու համար անբա-
ւական զգեստներ, մաշած, կարկտած
կամ ծռմուկած մուսկներ, ասոնք էին
իմ հանդերձաւորութեան ալիւսալ մա-
սունքը։ Կը յիշեմ, որ երբ Տիգրան
Մարեոնքա տիկինը վենետիկ եկած տա-
րին Ս. Ղազար ալ այցելութիւն բրաւ ու
նորընծայարան եկաւ գմեղ տեսնելու, եւ
որ այն ատեն տասներկու տարեկան էի՝
հաղածներու խեղճութեան համար չը-
համարձակելով առջևով կենալ՝ ընկեր-
ներուս Լուիս պահուրտեցայ, ամօթէս
էարմրեցայ երբ որ աչքը վրաս դարձուց
ու երթալէն ետքը նստայ լացի բաղա-
տելով իր զգեստներուն վայելչութիւնը
իմ տնուն շունեցող ցնցոտիներու հետ։
Ձեռ կրնար բացատրել թէ ինչպէս կ'ու-
րախանայի տեսնելով հանդերձապետ
եղբայրը որ կանդուն ի ձեռքն կը մօտե-
նար ինծի եւ նոր կապալի կամ վերա-
կուլի շափ կ'անէր, երբ որ անդորձանքի
զուրկայի կամ շապիկի տեղ, փոխանակ
նուազ հնացածին, բոլորովին նոր եւ չը-
զործածուած դուրպայ կամ շապիկ կ'ըն-
դունէի։ Անգամ մը չեմ դիտեր ո՛ր ար-
ժանաւորութեանս համար նոր ասուեայ
բաճկոն (Ֆրանկ) մը տրուեցաւ ինծի,
ուրախութենէս քառորդի մը շափ պա-
ղիր, հոտուրտացեր եւ շոյեր եմ գայն
ու աւելի յանձն առած եմ մօտեց մօրի
քան թէ հաղնիլ, որպէս զի չըլլայ թէ
հիննայ եւ տեղը նոր մը չգայ։ Այս ամէն
բանով հանդերձ աղքատութիւնը չէր
խրտեցներ դիս, մանաւանդ որ քահա-
նայից հաղածները դիտելով կը մտածէի
որ եւ ալ վարժարանէն երեւիս ետքը ա-
ւելի մարուր եւ կոկիկ զոհատներ կ'ու-
նենամ։ Դարձեալ հասկցած էի որ միա-
բանութեան մէջ տա իմ՝ տա քառորդ
պէտք չէ երեսն կրօնաւորին բերնէն, թէ
ամէն բան հասարակաց է. թէ բաց ի
պաշտօն ունեցողներէն ոչ ոք կրնայ ար-

ծաթ ստանալ կամ քովը պահել, եւ ի հաստատութիւն հարիւր անգամէն ան- լի լսած էի Անանիայ եւ Սուփրայոյ սոս- կայի դիպումը ու անոր նման շտա ու- բիւ հոգեւոր պատմութիւններ:

Իսկ ողջախոհութիւնը. ի՞նչ էր այս ողջախոհութիւնը: Բարբարոս եւ անիմա- նայի բառ մը զոր ամէն բառգիրքերու մէջ փնտեր էի եւ չէի կրցած հասկնալ. նորընծայարանի բարեյիշատակ վերա- կացուս որչափ որ լաւ տպաւորել ուզած էր մտքիս մէջ հնապանդութեան եւ աղ- քատութեան դաղափարները, այնչափ ալ զգուշութեամբ, չափաւորութեամբ, մա- նաւանդ թէ խրթնութեամբ խօսած էր ողջախոհութեան վրայ, եւ միշտ փա- խուստ ապուր կերպով մը. միայն դիտեր էի որ ամէն անգամ աղմուկի, զարշալի ածականները կուտար ողջախոհութեան դէմ եղած մեղքին, որ ուրիշ այլանդակ, անհեթեթ բառով մը կ'անուանէր բղտ- խոհութիւն, կ'ըսէր թէ գոսիւքին ամե- նէն սաստիկ կրակը եւ ամենէն մեծ տան- ջանքը բղջախոհներուն համար է որոնք մինչեւ վերջինին կը թաղուին սղմի եւ գարշութեան մէջ, թէ ողջախոհները ա- մէն առաքինիներէն աւելի սիրելի են Աստուծոյ, եւ այլն եւ այլն: Իսկ այս իմ միտքս աչք վերացեալ եւ անսրբ խոս- քերէն լոյս մը չէր կրցած առնուլ ու բղջախոհութիւն եւ ողջախոհութիւն բա- ռերը անհնարին չփոթութեան մէջ ձգեր էին գիտ. վերջապէս որ մը չկարենալով հետաքրքրութեան խթանին դիմանալ, անտարբեր կերպով հարցուցի դասատու- ներէս մէկուն եւ իմացուց որ ողջախո- հութիւն կը նշանակէր «կնիկ չառնել, չամուսնանալ»: Ի՞նչ է կնիկը, հարցու- ցի այն աստե՛ն ինքնիրենս. պզտիկուց՝ Պօլիս, եւ Վենետիկ քաղաքը, Լիտույ կամ գիւղը տեսածներէս (թէպէտ եւ արգել- եալ էր կանանց երեսը նայել, սակայն աչքերս աստիկ խաղաւն ըլլալով առանց իմ ուշիւրու շատ անգամ կ'երթային կա- նանց վրայ ու դժուարաւ կը զատուէին) իմացեր էի որ կնիկ ըստա՛ծը երկայն մաղ կ'ուենայ, էրիկ մարդու պէս ձեռք եւ ստը, բայց աւելի պզտիկ, աւելի փա- փուկ, աւելի ճերմակ, որ ձայնը բարակ է եւ անոյշ, երեսը աւելի շնորհալից եւ

աղուոր, մօրուք եւ ընչացք չունի, հապա լերկ է եւ մորթը կակուղ, եւ թէ կուրծքը՝ անուշտ կանացի մասնաւոր տկարու- թեամբ կամ հիւանդութեամբ՝ ուռած է. միանգամայն դիտելով որ երբէք էրիկ մարդու պէս տաբատ կամ սոնաւոր ըզ- ղեստ չեն հագնիր, միտքս գրեւ էի, ներուի պարզմտութեան՝ որ անհեթեթ բան է արգելք ըլլալու իրենց սրունքին տաբատի մէջ սղմեցնելու: Հոս կը լը- մըննար գիտութիւնս: Իսկ արդ ես ին- չո՞ւ պիտի չկարենամ կին առնուլ. միթէ կինն ալ Աստուծոյ ձեռագործը չէ՞. ի՞նչ բանի համար ստեղծուած է կինը. ինչ- պէ՞ս մէկը կրնայ բղջախոհութիւն ընել կնոջ հետ: Այս քնական տարակոյնեքո ետեւէ ետեւ ծնան մտքիս մէջ երբ իմա- ցայ որ կրօնաւորին ողջախոհութիւն ուխտելը կին չառնելու համար է. Սրեք ուխտերն աղէկ մտաւելու համար. ձեռ- քերնիս յիտուեան Հոգեւորիկ քահանային գիրքը տուած էին, յորում ողջախոհու- թեան վրայ ալ շատ կը խօսուէր եւ այլեւ սլլ պատմութիւններ կը ցուցնէին թէ ի՞նչպէս ամէն ժամանակ պատժուած են բղջախոհները. բոլոր այն պատմութիւն- ները ծայրէ ի ծայր հինգ վեց տեղամ կարդացի, բայց ճնաքէն գրուած մը կարդալու ըլլալի նէ, անկէ աւելի հա- տիրնայիք չունէի: Հաբանց վարք մը կար յորում Պոռնիպոլիս մակագրեալ զը- խուն մէջ հասկցեր էի որ ողջախոհու- թեան կամ բղջախոհութեան վրայ բաներ զրուտը են. անյազութեամբ կարդացի, սակայն ոչինչ հասկցայ: Աստուածա- շունչ մը կար որուն մէջ կարմիր թանա- քով նշանակուած էին սեղանատունը չը- կարդացուելիք հատուածները եւ գլուխ- ները. յարձակեցայ Աստուածաշունչին վրայ եւ ամէն մէկ բառը երգուրնցնելով կրկին եւ կրկին կարդացի Ղուտայ եւ իր աղջիկներուն, Թամարայ եւ Յու- դայի, Անանայ, Ամոնի եւ Թամարայ պատմութիւնները, ամբողջ Հոռութայ զոչարիկ գեղօնքը եւ Նրզոց երգոյն ու- ռայի բանաստեղծութիւնը. սակայն տարակոյնեքո աւելցան քան թէ փարա- տեցան: Ուրիշ կողմանէ արագան եւ արտաքին պատմութիւն սորվելու ժամա- նակ կը հարցնէի ինքնիրենս թէ ի՞նչ մըտ-

քով Սոդոմայ բնակիչները կը բռնադատեն զՂուլտ որ իրենց ձեռքը ժառանգեալն էր հրեշտակները, ինչո՞ւ Ղուլտ պատենք չուզէր տալ եւ կ'ազալէ որ իւր ազնկներովը շատանան. ինչպէս Բենեամինի Գարաա քաղաքին բնակիչները առանց սրտի կամ դանակի մեռուցներ էին դուտացուցի փախառական հարճը. ինչ փրչեր էր Պարիսի խնջին որ պոգնայ զՀենդինէ, որովհետեւ ոչ ոսկի էր եւ ոչ ալ արծաթ, եւ ինչո՞ւ բիւր անգամ աւելի կ'ընտելէր առանձնեայ պայարման եւ պատերազմի վտանգները ջանք թէ հաղարմանէր զայն. ինչ ըսել էր Հոռոմայեցւոց պատմութեան դատաւրքին այն խաբէր թէ Մեքստոս Լուկրետիայի պատուոյն նախատինք ըրաւ ու Լուկրետիա չկարծեալով խայտառակութեանը գիմանայ՝ ինքզինքը թրով կը զարնէ եւ այլն եւ այլն:

Այսչափ հասկցեր էի ողջախուճութիւնը եւ այսչափ ճանչցեր էի զկանայս, երբ որ 1861ի փետրուարի 2ին յայտնեցի հանդիսաւորութեամբ թէ կը փափաքեմ ողջախուճութիւն ուխտել եւ հրաժարել ի կանանց:

ԺԶ

Սակայն ժամանակէ մը ի վեր մտքիս մէջ նորաթեք զսպանակներ լարուած եւ սկսած էին անսովոր աշխուժութեամբ բանիլ, տիրտ տարօրինակ շարժման եւ յուզման մէջ էր, եւ օրէ օր զարմանքս կ'աւելնար կերպարանափոխութիւն մը նկատելով վրաս, որուն ուսկի՛ց դալը եւ ուր գիտելը չէի ըմբռնել: Երբեմն աչքերս ծովուն ընդարձակութեան վրայ յառելով խորին եւ տարած մտածութեանց մէջ կ'ընկզմէի, այնպէս որ կէս ժամ, մէկ ժամ անցնելէն հետք չէի կըրնար որդակել զրուցել թէ ինչ բանի վրայ մտածել էի. երբեմն ալ չկարենալով անդ մը հանդարտ կենալ, հարկ կ'ըլլար որ սրահին մէջ վեր վար շրջապայտէի, պարտէզ իջնէի, բահով ու բրիչով հողը փորէի, պատուհան մը բանայի, գիրք մը առնէի գիրք մը ձգէի, որպէս թէ ես իզմէ փախչիլ ուզեմայի: Գեղեցիկ ծաղիկ մը, վանքին անապատին մէջ մոլորուած

սոխակի մը կամ սարեկի մը ճռուողիւնը, բուսական անոյշ բուրմունքներով առդարուած առաւօտեան հողմիկ մը, խաղաղ իրիկուն մը յորում արեգակը լճակին ծիրանեփայլ ալեացը վրայ խոնարհած՝ կ'սկսեցօճէր արեւմտեան ամպերը եւ կը հրկիղէր վենետիկայ եկեղեցեաց դմբէթներուն կամ քանդակատանց ծայրերուն հրեշտակները եւ խաչերը, լուսինը որ արծաթի ծածկերն արձակած կը լուացուէր սիրակարկայ ալեացը ծոցը, վերլապէս ամէն բան կ'այրէր կը խուղէր, կը ցընորեցնէր զիս: Օղուն մէջ թեւերս կը բանայի, ասկայն չէի գիտեր թէ ինչ կ'ուզեմ պնդել. կը հառաչէի առանց պատճառի գիտնալու. յանկարծ կուրծքս կը սկսէր տրոփել, աչքերս կը մթնային, ու կարծելով թէ հիւսնդ եմ՝ միաբար կը դնէի որ բժիշկին այցելութեան եկած օրը դեղ մը ուզեմ իրմէ: Անշուշտ նոյն զգացմունքը կ'ունենայ նաեւ արծուոյ ծագուկը երբ փետրիկներն հագնելու ելի սկսած՝ բոյնէն դուրս յարձակելու, երկնից անպարտը տարածութեան մէջ ստաւանդելու, անդունդներէն իջնելու եւ լերանց զապաթներն խոյանալու բնագոյնը քիչ քիչ կ'արթննայ, սակայն թեւերն ու վարագոյթներն անած եւ զօրացած չեն որ դիւր թոցնեն: Ամենէն աւելի օտարականաց երթեւեկութիւնը սաստիկ այլալուրսեան մէջ կը ձգէր զիս. երբ հեռուէն նշմարէի կոնստանտնուպոլիսը կարապաճեւ թթովն արագ արագ ճեղքելով յճակին քնացած մկանները գէպի ի վանք կը մօտենար, հաճութեամբ կը լիցուէի. իսկ ընդհակառակն երբ կը տեսնէի որ վանքի գոնէն զատուալ՝ տիրուկը սկսէր գէպի քաղաք դառնալ՝ տիրուկը կը պատէր վրաս: Ինծի այնպէս թիւնը կը պատէր որ այն նաւակներով հրեշտակ կ'երեւար որ այն նաւակներով մը կուզար զիս միթաբանլու, մարդասէր անձ մը իմացեր էր վշտերս ու իմ բանտս մտնելով երկաթներս պիտի խորտակէր ու պիտի կործանէր մաքիս առնելի թանու պատնէլը որ միայն ափ մը երկնք եւ ափ մը երկիր թող կուտար ինծի տեսնել. զուր անկալութիւն եւ դառն պատանք. ամէն ժամ, ամէն վարկեան ալ աւելի կը պնդացնէր իմ գերութեանս կապանքները: Շատ հեղ պարտէզը ճաշէն

ետքը կամ իրիկուան դէմ պատելու ատեն կնոջ մը կամ օրիորդի մը հանդէպելով երբեմն ամչնալէս կը կարմրէի, երբեմն կը փախչէի որ երեսնին շտեմանեմ, երբեմն ալ կը փափաքէի որ նոյն վայրկեանին յանկարծական խենթութեան մը զարնուելով ոտքերնուն առջեւ իյնամ ու կոխած տեղերնին համբուրեմ։ Ուրիշ անգամներ ալ եկեղեցւոյն փակալուելու եղած ատեն երբ քահանայէ մը կը կանչուէի որ քանի մը տիկիներու ասուկէ դուրս շուրջաւ մը, աւետարանի դաստառակ մը կամ սկիծածկոց մը բերեմ ցուցնեմ (որոնց վրայ Հրաշալի կերպով կ'երևանայ մեր պօլսեցի աիկնայց ժառանգներուն ճարտարութիւնն եւ բարակութիւնն), ի՛նչպէս սրտանց կ'օրհնէի այն քահանայն որ օտարազգի խաթունները հաճեցնելու համար քաղցր ծառայութիւն մը կատարել կուտար ինծի, ի՛նչպէս ուրախութեամբ կը բանայի ինձմով եւ զգուշութեամբ ծալլած եկեղեցւոյն բազաններս, եւ յետոյ երբ որ տշխտանացս վարձք merci, grazie կամ thank you կը լսէի իրենց փափկաման բերաններէն, ի՛նչպէս կը մոռնայի ամէն նեղութիւններս, ի՛նչպէս ինքրիմէս դուրս կ'ենէի։ Բայց որովհետեւ կանայք, եթէ ազգային երեւելի րնտանիքէ կամ թագուհի եւ իշխանուհի չլլային, վարժարանը մտնելու հրաման չունէին ի կանոնաց, եւ որ սկսելու էի հասկնալ թէ կիներ զեղեցիկ տարարած մէկ ու գողարար եւ դիպուածով տեղափոխուելու գտնելու համար ուրիշ կերպով կ'ին տեսնել, մտածեցի որ ազուրկ կանանց պատկերներ ձեռք ձգեմ, եւ ամէն օր զլուխ մը թոյժա Քեմպացի կամ

Հոռոգերիկ կարդալէս ետքը մէյմը անոնց երեսն ալ նայիմ, որպէս զի տեսնեմ թէ ի՛նչ խնդութիւն կուտան ինծի, ի՛նչ կը թելադրեն։ Բախալէս քանի մը Գոթայի տարեգիրներ (almanach) ձգուած էին վարժարանի մէկ անկիւնը, որոնք հարցնող փնտռող չունենալով թանձր փոշւոյ խաւի մը ներքեւ կը քնանային։ Դիտել ամենայն ոք որ այդ տարեգիրները ամէն տարի վեց եօթը փահապտալ կամ իշխանազանց, երբեմն նաեւ թագուհեաց եւ իշխանուհեաց պատկերներով զարդարուած կ'ըլլան։ Ո՛վ կրնայ զգալ իմ ուրախութիւնս երբ որ տաքնի շափ զեղանի բամբիշներու ղէմքերը կ'որելով այն կոթաներուն մէջէն առի սենեակս փախուցի, ու զգրոցիս խորը տեղաւորելով ամէն օր եւ օրուան մէջ շատ անգամ կը դիտէի դանոնք, կը համբուրէի, ձեռքս կ'առնուի, աչքիս վրայ կը դնէի ու նայէի եւ սիրելէն չէի կշտանար։ Մէկը մանաւանդ, որ էր Բորգուալի Ստեփանէ (Stéphanie) թագուհին, ա՛յնպէս յափշտակեց խելքս միտքս, որ չէի կրնար առանց սրտի բարախման վրան նայիլ։ Եւ մինչեւ այսօր, որ է րոնել տասը տարի անցնելէն ետքս, տակաւին նոյն անոյշ խոռովութիւնը կը զգամ երբ պատանեկութեան ժամանակէն մնացած Հին թղթերս խառնելու ատեն կը հանդիպիմ իր պատկերին զոր մասունքի պէս պահած եմ։ Զորացեալ խոտերու մէջ մոռցուած անուշահոտ եւ փափուկ ծաղիկ մը, որուն բուրմունքը ոչ երբէք պիտի ցնդի, գեղեցկութիւնը ոչ երբէք պիտի պակասի, նաեւ երբ հազար տարի ալ ապրելու բոլոր, եւ միշտ պիտի զմայլեցնէ զիս։

(Շարք 3)

ՆՈՐԱՅՐ ԲԻԻԶԱՆԴԱՏԻ

Փ. Վ Ա Լ Է Ր Ի

Ա Մ Փ Ի Ո Ն

(Ք Ն Ա Ր Ա Խ Ա Ղ)

(Երաժշտութիւն՝ ԱՐԹԻԻՐ ՀՈՆԵԿԸՐԻ)

Լաշար կը վերագառնայ քիչ-քիչ, եւ աստիճանաբար կը գումաւորուի Արշալոյսին երանգներով: Մուսաները աներեւութացած են: Կը տեսնուին Քմարը եւ Պիկուրը՝ Ամփիոնի ոտներուն: Անորաշ շշուէջ կենսաւոր Բնութեան, որ կը զարթնուի:

Թռչնաց նիշեր: Ջրերու մրմունջ:

Վերստին Ակումբներու Երգը:

Կէս-կենդանական էակ մը կ'ստանուի, հալածուած ուրիշէ մը:

Անոնք հազիւ փախած, կը տեսնուին մարդեր եւ կիներ, որ դուրս կու գան անտառներէն: Ոմանք կը փութան որսի, յարիշներ կ'առաջարկեն գէպի այլազան աշխատանքներ:

Կին մը կու գայ զուր առնելու աղբիւրէն: Ուրիշ մը կու գայ մայրու ամառ մէջ եւ հերարձակ, որ ետ կը դարձնէ ինքզինքը՝ երեսուած ու յարգարւած մազերով:

Տղաներ կը խաղան ու կը կռուրտին:

Ամփիոն կը շարժուի:

Զարթոնք Ամփիոնի

Այս տեսարանի ընթացքին, մախորդի այլազան անձերը կը քաշուին հետզհետէ: Նուագախումբը իր կշռոյթովը կ'ընդգծէ Ամփիոնի յաջորդական շարժումները:

Արմուկովը կը կոթմի, կը ճայի: Ազշութիւն եւ զարթոնքի շարժումներ: Յանկարծ կը մտնի անկողինին վրայ, ոտքի կ'ելլէ, քանի մը քայլ կ'առնէ: Կը ներշնչէ առաւօտեան օդը: Կ'իջնէ գէպի աղբիւրը եւ կը խմէ երկար: Կը պարէ, իբրեւ քօթափելու անդամներուն թմբիրը: Այս պարին ուր-

digitised by A.R.A.R.®

ւագծումով հասած վերստին իր քնացած տեղը, կը նշմարէ Քնարը: Քնարը պէտք է ըլլայ Փիլոսոֆիայի հետ շփոթման միջոց: Ամփիոն կը դիտէ զայն զարմացումով: Կը վերցնէ, կը ձեռնէ հետաքրքրութեամբ, կը յառաջանայ դէպի հանդիսականները, եղբիւրներուն մէկէն բռնած կը ձօնէ, ամկէ կը քակէ Պիկտորը, որ կապուած էր սակեայ կապով մը:

Ա.

Մէկէն զարկ մը կու տայ...: Լար մը կը թրթռայ: *Սուրբ ու Հոգի Ջայն*, որուն կը պատասխանէ բուն շրտ մը: Քառաժայռ մը կը շրջի, կ'իյնայ մեծ աղմուկով:

Անձեր դուրս կու գան տարափառ, ուրիշներ կը մտնեն, իրարու կ'ընդհարին, գուպար մը կ'ուրուագծեն, ու կը հեռանան՝ կատաղօրէն կըռւելով:

Պաննան տեսարան: Այշուփին ու սարսափ Ամփիոնը: Կը դիտէ Քնարը՝ սրբազան երկիւղով մը: Ինքնին կու գայ: Նոր փորձ մը կ'ընէ:

Բ.

Երկրորդ ծայն

Ուրիշ լար մը զարնուած՝ հեշտալուր ձայն մը կու տայ: Քանի մը ժայռեր, անաղմուկ կը ցցուին կամ կը թաւալին կամ կը տակին դէպի հեռաք: Սիրահարներ ու սիրուհիներ կ'ելուին, իրարու կը պարզեն, կ'անցնեն իրենց թեւերը ու կը հեռանան յամրօրէն:

Ամփիոն վար կը դնէ Քնարը, կը դիտէ զայն ու կը մտածփոփոխի: Կը նստի քարի մը վրայ չորին եզրը, որուն մէջ կը ցլանայ իր պատկերը:

Քիչ-քիչ միտքը կու գայ իր երազը:

Տարտամօրէն կը լսուի Մուսաներու Օրրերը՝ գոց բերնով մրմնջուած:

Ամփիոն ոտքի կ'ելլէ ու կ'ազնկանէ երկինքը:

ՏԵՍԱՐԱՆ

Անտես Մուսաները

Ամփիոն:

Ամփիոն

Ո՛վ կը կանչէ զիս:

Մուսաները

Դուն իսկ:

(Երգասացութեամբ)

Յիշեալ գունքի:

digitised by A.R.A.R.@

Ամփիռն

Ա.

Ո՛վ է խօսողը... կը յիշեմ... դերագոյն Ձայն մը...
Անդէմ Ձայն մը խօսեցաւ գիշերուան մէջ...
Միթէ չլսեցի՞ ճակատադրական խօսքերը:
— Պիտի գտնե՞մ վերստին ուղիները
Ստուերին սքանչելիքներուն...

Բ.

Ո՛վ Գերագոր Ձայն.
Ըսուեցաւ... Կը խօսուէր...
Ինչպէս պիտի խօսէր աստղազարդ Վիճը,
Ան՝ որ կը թուէ միշտ
Իր լռութեամբ ու աստղերովը
Հարցափորձել վաղանցուկ հոգիներով թռուտ ցեղը:

Գ.

Ըսաւ... Երկինքը-որ-կը խօսի
Ըսաւ.
(Երաժշտութեամբ):

- Ամփիռն...
- Ես ընտրեցի քեզ... Ինչպէս կ'ընտրէ Սէրը.
- Ինչպէս կատար մը կ'ընտրուի լանթնէն ահեղ՝
- Ես ընտրեցի քեզ...
- Քեզ կը յանձնեմ սքանչելագոր զէնքը,
- Քնարը...
- Ձինուէ ֆնարովը- արիւնցուր կոյս Ձայնը.
- Թող իմ ֆնարը երկնէ իմ Տաճարը...

(Լաւ շնչտուած:
Գրեթէ երգուած:
Տեսլահարի ճայն, հատկտեալ, հետցող):

Դ.

Ձէն խորհրդաւոր, ի՞նչ զօրութիւն, քուհիներ:
Ո՛վ Ձէնք վսեմ, որ կհանք կու տաս եւ ոչ թէ մահ.
Դուն՝ որուն աստուածային հարուածները
Կը հասնին, կը թափանցեն աշխարհի Հոգւոյն.
Հազիւ թէ Հոգեցայ քու ոսկեղէն լարերուդ՝
Աստուածէն ուժգնապիւրկ ձգտուած՝
Ու երկինք ու երկիր դողացին.
Ու ես զգացի ազատութիւն սրբութեամբ՝
Ինչպէս յանկարծակի եկած կնոջ մը միտք.

Տեսայ

Մոլեգնութեան ու սիրոյն ծնանիլը մահկանացուներուն մէջ:

Մոլեգնութեան ու սիրոյն համասփոռելը իմ ձեռքերէս:

Ե.

Խոցեցի՞, սարսեցի՞,

Դիւթեցի՞, թերեւս,

Գաղտնի մարմինը աշխարհին...

Անդիտարա՞ր, արդեօք,

Յուզեցի՞ գոյութիւնը երկնից:

Ու զգա՞յ արդեօք էութեանն իսկ,

Ջոր մեզմէ կը ծածկէ Ներկայութիւնը ամէն իրերուն:

Ահա՛ որ ես հզօրագոյն եմ քան դիւ.

Ահա՛ որ ես դիւ կը գտնեմ տարօրէն եւ մեծարելի

Իմ աշացս իսկ.

Ուղեկորու ես իմ հոգւոյս մէջ, ու տիրական իմ շուրջս:

Տղու մը նման ես կը դողդղամ

Առաջն իմ կրցածիս:

Զ.

Ապողոն, Ապողոն, հնազանդիմ պիտի քեզ.

Գծագրելով քու ձեւերդ ֆնարին վրայ

Իմ մատներս աստուածներ են,

Իմ ոիրտս կ'առաջնորդէ մարդերը:

Է.

Գրոհ պիտի տամ Ապառաժներու անկարգութեան դէմ.

Իմ գուռ արարքներս

Պիտի գերեն անօրինակ գործին

Աւերները լեռներուն, հրէշները դիտապաստ

Ինկած, վսեմական կողերէն:

Ը.

Ապողոն, իմ Տէրը, իմ հետն է.

Պիտի հետապնդեմ երկն ու գեղեցկութիւնը իբրեւ երէ մը:

Ապողոն գրաւած է դիւ, կը հնչէ ինքն իմ ձայնին,

Կու գայ ինքն անձամբ հրաշակերտել իր Տաճարը,

Եւ Քաղաքը, որ պարտի երեւիլ մարդոց աչքին

Արդէն իսկ շքեղափայլ՝ յղացուած ամբողջ

Բարձրագիւր բնավայրին մէջ անմահներուն:

Ամփիսն վերստին ձեռք կ'առնէ Քնարը եւ Պիէկտըրը, ցոյց կու տայ զանազան երկնքներ, կը պատրաստուի նուագել լիբր վստախալքեամբ ու խանդով:

Կը զարնէ լարերուն:

Անհուն ու երկարատեւ Ձայն, շքեղ անդաշնակութիւն, այնքան ճշիւ, որքան կը անքնն արուեստին միջոցները:

digitised by A.R.A.R.@

Բովանդակ բնութիւնը կը քրքուայ: Արձագանգները թագմագանեալ կը տարածեն այս գարկը:

Տեսարանը իր գանազան մակարդակներուն կը լեցուի ձայնէն քաղաած անձներով:

Ամփիոն կը սկսի նախբզանքը: Հոս ստեղծուել Ձայնաշարերուն:

Քնարը ձեռքին կը պարէ տեսակ մը բոլորապատշաճ սրբագան պար: Յետոյ կը կենայ բարձրութեան մը վրայ, աշակաղմեան ասպռածներու աստ-բոտին: Կը գոչէ:

Յանուն Ապոգոնի...

ԿԱՌՈՒՑՈՒՄ

Կառուցման ամբողջ արարումը կը պահանջէ որքան հնար է կտաւր-եալ համակերպութիւն մը շարժումներին, պատկերաւորման եւ երաժշտութեան, որ հոս կը գերիշխէ եւ պարտի երամայակարգել անձներու եւ շարժող շինարածանիւթերուն գործողութիւնը:

Ա. Առաջին Փուլ

Քարերուն քայլերնաջրէ:

Ձանգումներ կը բարձրանան, կը տեղափոխուին ըլլա՛յ ծանրակշիռ ստումներով, ըլլա՛յ թաւայիով զառիթափերուն: Կ'ուղղուին աջէն ձախ: Տանարը պարտի բարձրանալ ձախակողմեան ասպռածներուն կիսադէմիւն-գագաթէն քիչ մը վար, իր նակատը, անտեսանելի դարձած, պիտի չմթա-դրուի դէպի բնին աջակողմեան խորք:

Քարերուն քայլերնաջրէ կը գծուի նուագախումբին երգող խորքին վը-րայ շատ շեշտուած ու ալիաղէպ կշռոյթներով, որոնք կը դասաւորուին ու կը համակարգուին քիչ-քիչ:

Անտեսանելի երգչախումբ

Ո՛վ Հրաշալիք, ո՛վ Սքանչելիք.

Ապառաժը կը քալէ. երկիրը կը Հպատակի աչո Աստուածին.

Ի՞նչ ահարկու կեանք կը նուաճէ բնութիւնը.

Ամէն ինչ կը զգրդի, ամէն ինչ կը փնտռէ իր կարգը.

Ամէն ինչ ինչոր իրեն մականան մը կը զգայ:

Բ. Երկրորդ Փուլ

Կառուցուածքը կ'ուրուագծուի: Ճարտարապետական մասեր կ'երեւին լերան կողերուն: Ուրմեր, թակազակներ, քիւնր կը փոխարինեն ապառաժը, որուն անկանոն կիսաստուերը կը ստանայ յստակ գիծեր: Տառարին կիսա-պատկերը կը հաստատուի: Փոքր կտառոյց մը՝ ձեւուած պարեգօտ կրող ճանի մը պարուեններէ, կը կազմուի ու կը կենայ ցցում բարձրաւանդակի մը վրայ:

Այն ատեն կ'երեւին Մուսաները: Ոսկեհանդերձ, կրկնով իբր վարձակ ոսկեղէն սիւնազուլոններ: Կ'երթան հանդիսաւորապէս շարակարգուիլ իբր սիւններ Տառարին:

Եթէ հնար է՝ պիտի իջնեն Քարակողմեան բարձունքներէն:

digitised by A.R.A.R.@

Մասնա-սիւմերու խմբերգը

Դուստրերը ոսկեղէն թեւերուն
 Ներգոր օրէնքներովը երկնքին.
 Մեր վրայ կ'իյնայ ու կը ննջէ
 Աստուած մը մեղրերանդ... հեալին:

(Մեծապայծառ Լայս. Երաժշտութեան մեծ Հնդկամուտ):

Գ. Երրորդ Փուլ

Բեմապատկերին ամբողջութիւնը կերպարամափոխուած է:

Լեռը բովանդակ *Կատուցուած* է, ստորադաս միջին բիւրեղակերպ կա-
 տարները (որոնք կը մնան առաջուան պէս, բայց որ կ'երևին քափանցուած
 գունաւոր լոյսերով), հանդերձուած, որմերով, որմնասիւններով, պատշգամ-
 ներով, ճեմանցքներով:

Կեանքանի ճարտարապետական դրուագներ հոս-հոն տեղ առած են: Մա-
 րահերձէն անդին, կը տեսնուին թէլիսի տանիքներն ու աշտարակները, որ
 կը փայլին արեւուն անգագալիօրէն բարձրացած:

Ժողովուրդը խումբ-խումբ բաշխուած է քատերաբեմի մակարդակնե-
 րուն: Բեմին մէջտեղը պէտք է մնայ ազատ:

Ժողովուրդին խմբերգը

(Օրհներգ առ Արեգակն)

Դուն, Արեգակ, ներկայութիւն որբազան,
 Բոց՝ որ կը տանիս երկինքներուն մինչեւ խորն
 Ճանաչումը հետը կ'հանքին,
 Ո՛վ Արեգակ:

Նայիւ ոչ ոք կրնայ Անին քու զօրութեան:
 Անդիժապիւր շողքը գէժքին Աստուածային
 Աստուածըն ժենէ կը ծածկէ:
 Բայց դուն, տե՛ս, հոս սքանչելիքը մարդկային.
 Հոս կ'երեւի ինչ որ չհղաւ երբեւեցէ
 Շքեղանքովդ յորմենհտէ աշխարհն դարձաւ.

արգասաւոր:

Ահա՛ որ քու մաքրագոյն ճառագայթներդ ընդունելու
 Ամփոռն յաղթական՝ պարիկ վէժերն այն կ'ընծայէ.
 Ան համախումբ կաղմեց յարկերն այս ոսկի,
 Քեզի համար կառոյց որմերն այս բարձրադիր,
 Ո՛վ Արեգակ,

Արի հայէ Տաճարիւ, ճառագայթները քու հանդիպումը
 Զեւին վրայ իր չքնաղ,
 Թող քաղցր ըլլայ ան յաւէտ՝ Աստուածային
 Ճակատէն ինկած
 Շողքերուն:

(Յնձուրեան ծափաղայն):

Կը կանչեն Ամփոռը. ցոյց կու տան իրեն Տաճարը):

digitised by A.R.A.R.®

Խմբերգ

*Սքանչելի դուռն Ամփիոնն, գովքն ամէնուն ընդունէ
Մահկանացու գերտալօր, Հայր Թէփիտի, եղի՛ր դուն
Քուրժը մերին գերազոյն.
Բարձրացի՛ր քո դահլիճին, դէպի Տաճարը բարձրացի՛ր,
Ո՛վ Ամփիոնն:*

(Կը շրջապատեն Ամփիոնը. արժայական զգեստներով կը հանդերձեն զինքը):

ՎԵՐՋԱԲԱՆ

(Այս զգեստաւորումին միջոցին Մուսաները):

Առաջին Մուսան

Գործը գլուխ է եկած:

Երկրորդ Մուսան

Ուրիշ վարպետ մը կ'որոնեմ:

Երրորդ Մուսան

Ի՞նչ փոյթ ինծի ինչ որ է:

Չորրորդ Մուսան

Իսկ ես յոյս էի միայն:

Մուսաները կը ստուերածին:

Այն պահուս, աւր հերոսը պիտի բարձրանայ Տաճարը, առողաւած կնոջ կերպարանք մը, որ աննշմար մտած էր բեմ, կը մօտենայ իրեն եւ ճամբան կը կտրէ քեւերը խաչածել:

Տեսարանը կը մթաւադուի աստիճանաբար: Լոյսը կը սկստանայ՝ ինչ-պէս երաժշտութեան հնչեղութիւնը:

Ամփիոնն կ'ընկուկի: Մտադուած կերպարանքը կը թռնէ զինք եւ քեւերովը կը կը շրջապատէ գորովագին, մեղմօրէն կ'ստնէ իրմէ Քնարը, որուն վրայ լսելի կ'ընէ քանի մը խորունկ ձայներ եւ գար յետոյ կը նետէ աղբիւրին մէջ:

Ամփիոնը կը ծածկէ իր դէմքը գրկին մէջ այդ կերպարանքին, որ Սէրն է կամ Մահը ու կը լքէ ինքզինքը՝ տաբուելու անկէ, մինչ նուագախումբը կը վերածուի շատ քաղցր, մրին ու իբր մտերիմ երգի մը:

ՎԱՐԱԳՈՅՐ

ՓՕԼ ՎԱՆԷՐԻ

(Թարգմ. Ծ. ՊԵՐՊԵՐԵԱՆ)

digitised by A.R.A.R.@

տարակէր չունենալն այլ հասարակ մը, 660 էջ ծառայում, օգտուելով վերսկիւնայ հայտատան հարաւարակութեան անտիպերու բաժնէն:

Տուեալ երկու հատորներուն ձգած տպագրութիւնը տպագրուել է: Կարծէք այլեւս ամբողջական դիմագրեւը կը տեսնե՞ք բանաստեղծի մը, որուն գէժքին մէկ մասը ստուերի մէջ մը յայտն է երկար տարիներ...

Հ.Ծ.Ն.Ս.Ի հրատարակութիւնը կը բացուի Գարեգին Բ. հաթորդուի խօսքով, որուն կը յաջորդեն հրատարակչներու ներածական ու Ք. Սեւակի կենսագրականը, — էջ 225 324՝ քանաստեղծութիւններ, 325էն 342՝ Թարգմանութիւններ, էջ 345էն 556՝ արձակ գործեր, 557էն 573՝ տարբերակներ եւ այլ գրութիւններ, 575էն 614՝ ծանոթագրութիւն (կազմուած Քաշիկ Տեւէհանի կողմէ):

Ուրեքն Սեւակի քերթողութիւնը, համաձայն իր իսկ պատկերացումին կամ ծրարին, կը զարգանայ երեք յատակ ուղղութիւններով, որոնք կ'ամբողջացնեն զիրար: Սիրող գիրքն կը խօսի երկրորդական բանաստեղծին ներքին յայտնուն ու անհատական արտայայտութեան մասին, Վերջինս իւրաքանչեւ (ուր ներառուած է Վաղարշի գիրքն) կը պատմէ հաւաքական փորձառութիւնը հայ ժողովուրդին, իսկ Վաղարշը կը պարզէ լեզուային-համապարզկային անտարգարութեան մը անուրող գրութեանը:

Այսպէս՝ անհատականը, ազգայինը ևւ համամարդկայինը մարդ էակի կացութեան տարբեր, այլ ամբողջացող երեւոյթներ կը պեղեն, Սեւակի քերթողութիւնը տարբեր մակարդակներու վրայ ղեկուով:

Այս կեցողութեան մէջ կայ բանաստեղծական ամբողջ ծրարի մը, որուն կը հպասակի Սեւակի քերթողական արտայայտութիւնը սկիզբէն մինչեւ վերջ: Անշուշտ երեւմէն դժուար կ'ըլլայ ճշդ գէշ, որ առանձին բանաստեղծութիւն մը Սիրող գիրքէն մէջ պէտք է իյնայ, թէ Վաղարշը, որովհետեւ ինչպէս Աւ. Թովմանէ կ'ըսէ, սիրայ եւ մահուան թեման յաճախ կը զուգորդեն Սեւակի քերթողութեան մէջ (հակառակ աւանդ, որ բանաստեղծը, մամուլի մէջ հրատարակած բանաստեղծութիւններուն մէկ մասին վրայ Սիրող գիրքն շնորհանուր խորագրերը դնանք), սակայն ասանք հարցեր են, որոնք անտեսելի են: Կեանքի պարագային եւս այդ ծանր լեզուը Սեւակի պարագային ինչպէս լինէր զ'անոնի շ'անոնի: Սիրեակի Վերջին մը բանաստեղծութեան մէջ, մահը անանկական նկարագիր մը ունի, մէջ, մահը անանկական նկարագիր մը ունի, եւ աստղերու մահուան շարունակութիւնը կը շարունակուի: Ենթադրեալ բանաստեղծութեան մէջ պիտի ըսէ:

Թատկապէս մամուլի մէջ ցրուած քերթուածներու եւ անտիպերու մէկտեղումով՝ Ռուբէն Սեւակ քերթողական բանաստեղծին հարուստ կարեւորութիւնները երեւան կու գան: Սիրող գիրքն կը յատկանշուի իր երանգապանկին դուշառ զննութեամբ:

Կոմիտասեան ոճի ժողովրդային-ազգայնական տաղերու օգտագործումն ինչպէս հեղինակի օգտագործումը, եւ արեւմտահայ բանաստեղծութեան ականջներուն շատ մօտ սերման զուգորդումներուն վրայ զարգացած աւելի բարդ հասարակականները եւ, վերջապէս, տէրեւական ոճի քերթուածները այս երանգապանկին լեզուանդ գոյնիւրը կը կազմեն:

Որինակ, անտիպերուն մէջ երեւան եկած Վաղարշը (Վաղարշի հովիւ, ուստի կու գաս) կամ Սիրեակ, որքան ալ տակաւին մամուլին յանձնուած լըլլանուն պատճառով կարելի չըլլայ աստուան նկատել, անպակաս իւր ուղղութիւնը կարելի է սեպել: Սիրեակն աստղին տունը կը բացուի այդպէս:

Այգուս, այգուս օտարին լացող
Քանկերդն, աւ ծառ, աւ ծիլ, աւ ցող,
Ու տրանսլադ ալ վեր խոյսացող
Վերջին, — կ'ըսեն, — պիտի մեռնի...»:

Միջադարձան քերթողութիւնն եկող լուսնը այնքան զգալի է ոտալին երեք տողերուն մէջ, իսկ վերջին տողը, իր ըստեղծերով ու մթնոլորտով, կարծէք գիտակից կերպով օգտագործուած Դուրեան մըն է...

Նման, սակայն այլ նկարագիր ունի Վերջին երգը, Վերջին անգամն կամ Սիրող միտքն իսրայելու գործերը, որոնք երգ երգացանքի նկարագիր մը կը ծառնեն:

Բանաստեղծութիւններու այլ շարք մը մէջ, ինչպէս՝ Վերջին կիթնը, Վերջին կիթնը իրաւ, Վերջին կիթնը մէջ, Վերջին, եւսին, երբայնութիւն մը կը զգացուի եւս աստիճանաբար եւս յաջորդող երկուսը Վ. Տէրեանի քանդակարարական բանաստեղծութեան հետ:

Սակայն Սեւակ՝ յաճախ հեղինակն թեթեւ լար մըն ալ կը մտքէ (Վաղարշի վրայ), Վաղարշի վրայ, Վաղարշի վրայ: Այսպէս ցայտակարային բանաստեղծութիւններու կը հանդիպենք, ինչպէս Վաղարշի վրայ կամ Վաղարշի երգը, եւսին: Հետաքրքրական է նաեւ անանկական կամ Վերջին բանաստեղծութիւններու լըլլանքին մէջ սիրայ ու մահուան թեման: Ճիշդ է, որ արեւմտահայ բանաստեղծութեան մէջ Պէտքիթի մահը լեռնով, Դուրեանով ու Մեծարեղծով լեռնուած մահուան փորձառութիւնը յաճախ կը իմանալի անհատական փորձառութիւններուն հետ, աստեղծութիւն Սեւակի պարագային եւս այդ ծանր լեզուը չ'անոնի: Սիրեակի Վերջին մը բանաստեղծութեան մէջ, մահը անանկական նկարագիր մը ունի, եւ աստղերու մահուան շարունակութիւնը կը շարունակուի: Ենթադրեալ բանաստեղծութեան մէջ պիտի ըսէ:

Սեր Մանուկ մէջ Անուրդն է արքայուհի
Եկուր, եկուր, եկուր սիրեմէ կաթագին:

Իսկ ՎՄահագրացումն բանաստեղծութեան մէջ պիտի ըսէ:

Մեռնի՛ր, մեռնի՛ր... Ամենամեծ մահուան մէջ:

«Նամբըրը», «Մահագրացումն», «Մ...» եւ նման աւելի քան տասնեակ մը բանաստեղծութիւններ կը պնդեն սէր-մահ այս յարաբերութիւնը:

Ռուբէն Սեւակի բնարին ամենամեծ լարը սակայն ազգայինն է: Հարկ չկայ կրկին անգրադատնայ Վերքին խոյները ընդհանուր խորագրերին տակ լկող այս բանաստեղծութիւններուն:

Յատկանշական է սակայն «Կարմիր գիրքը»՝ «Ձարդի խնքը» քերթութիւն մէջ ազատութեամբ թատերական մենախօսութեան ձեւը: Յատկանշական է նաեւ առումով, որ բանաստեղծութեան խորագրին ներքեւ կ'արձանագրուի գործին բնոյթը, այսինքն՝ Թատերական մենախօսութիւն մը ըլլաւ, ինչ որ քերթական գիտակէց աշխատանք մը կը նշէ: Եւ ի՞նչ նկատի ունենանք «Ձարդի խնքը» բանաստեղծութեան ծաւալը, կը տեսնենք, թէ այս ոճին ազատութեամբ խնկապէս անանձնայատուկ պարագայ կը մնայ արեւմտահայ բանաստեղծութեան աւանդներուն մէջ:

Հետաքրքրական են նաեւ զուգահեռ կատարումներ կոչուողով զարգացող բանաստեղծութիւնները:

Ճիշդ է, որ այս ձեւը գլխաւորաբար գործածելով մարտն, իր զօնն ու լեռնային նրազ բանաստեղծութիւններուն մէջ, սակայն նոյնքան յաջող կերպով կ'որգեղրէ դան Բ. Սեւակ՝ իր «Նամբըրը»-ն ու «Մահագրացումն»-ը քերթութեաններուն մէջ: Նոյն խառն ու թելադրական բառերն են, սրանց կը հասնին հոս:

Ո՛վ կալ յայ տյօպէս խոնարհիս շնմքին:

— Քն՛յր, քարիպն է քաց:

Կսւ՛ա՛յք մը կ'անցնի գոյսսն լալագիմ:

— Մոլմ է, գուռըդ քաց:

Տապա՛քըն է քսիքալս զրամբս կուրծքին:

— Ջարդն է, գուռըդ քաց:

Այսինքն՝ բանաստեղծութիւնը կը զարգանայ որով զուգահեռով մը: Եւ ինչպէս ինչպէս նկարագրուի տողի մը կը յաջորդէ որով զատուած ու կենդանի փոխանցող տող մը:

Այս գլուխին տակ, իրենց շունչով ու փնտրատուներով շահեկանութեան կը ներկայացնեն անտիպելի մէջ երեւոյց լեռնային խոյները եւ «Նամբըրը»:

Տեսանք, թէ Սեւակ ինչպէս երգէ մահը՝ անհատական մահարգակի վրայ, զայն տեսնելով սէր-մահ շրջագծերին մէջ, եւ փորձելով հասկնալ իր գրգռապատճառները:

«Վերքին» խոյները բաժնին մէջ Սեւակ ներկայացուց մահուան փորձագիտութիւնը՝ հաւաքական մահարգակի վրայ, իր զրջակիցներուն հետ զբոսնալով ամբողջ ժողովուրդի մը ազգային մահուան մղձաւանջը: Իսկ աւելի ուշ, ինչպէս պիտի տեսնենք, բանաստեղծը պիտի երգէ ընկերային ըմբոստմաներու անանկացումը եւ մարդկային արժեքներու մահը, այս առիթով թեմաք ընդհանուր ժողով ու ցատու՝ արտայայտելով եւ, միաժամանակ, յայտարարելով ծայրայեղ դիրքորոշում մը՝ Աստուծոյ մահը...

Սեւակ երազակցութիւններու կը յանդիմար, եւ թէ Սեւակի կենդանութեան շտեմանք այդ օրերու անհատական ու հաւաքական իրականութիւններու միջնաւայրին մէջ:

Մահուան մղձաւանջը, մահուան յաճախմբը արեւմտեան շնորհաւոր էր այն օրերուն, որ ինքզինք կը մատնէր ամէնէն անձեղ երկնայիններուն եւ ամէնէն պարզ թուացող արտայայտութիւններուն մէջ:

Առնենք, օրինակ, «Մեռնի՛ր, լուր» բանաստեղծութիւնը: Քերթողը հարց կու տայ, թէ ո՛վ պիտի պատմէ ջուրին միամիտ կենսաբան, որ կ'երթայ սոսկի դաշտերը, կը քառի խիւսերուն, կ'անցնի վայրի վարդերու երազանքին մէջ, հասնի, եւ յանկարծ, անակնկալօրէն կ'աւելցնէ:

Մեռնի՛ր, քեզ, վտա՛կ, մեռնի՛ր լուրս քսմ

Միայն իր պիտակիցին ու անգիտակիցին մէջ ամէն վայրկեան մահը ապրող հայ բանաստեղծն է, որ այսօրեան յուզիչ կերպով կ'ընայ երեւի տալ ջուրին, որ մահ չուրի, չի մեռնիր...

Ռուբէն Սեւակի ընկերային-համամարդկային նկարագրի բանաստեղծութիւնները անհատական են իրենց իրադրութեաններուն առումով:

Ճիշդ է, որ ճարտարաւեպական ընթացիկն էլ ող, այսինքն՝ հոս ուսանած արեւմտահայ բանաստեղծները ընկերային ուղի գիտակցութիւնը կը զբաւակցեն իրենց գործերուն մէջ, սակայն այս մարդին մէջ յատուկ աշխատանք մը կատարած են արտաւարտ մարտն եւ Սեւակ:

Այդ ատուցող զատկարգին նկատմամբ՝ բանաստեղծներն միշտէս պոռնկներ, Սեւակի եղբայրակցութիւնը ընդգծելի է: Սակայն այս գործերը յաճախ ծրարական նկարագրի կը ստանան: Եւ երբ բանաստեղծութիւնը կը պահպնի, Սեւակի կ'ընայ փառսի մէջ եւ բարոյականութիւնը կը հնչէ, ինչպէս՝ «Մահագրացումն»-ը եւ «Պոլսոյ որովայն»-ն: Այն բանաստեղծութիւններուն պարագային, սակայն երբ կը շրջանցէ նման վտանգներ, կը յորինէ «Պոլսոյ»-ն եւ «Կալիքի»-ն: Կալիքի տօնը խորագրեալ քերթութեաններուն պէս գործեր:

«Պոլսոյ» շարքին մէջ սեւ երգիծանքը կրկին զատուած ազգային կը հանդիսանայ եւ «Մահագրացումն»-ը անհատական օրինակը կարելի է նկատել այս գծով:

Եւ երբ այս գրութեան սկզբնականութեան խոսք կ'ըլլայր Թ. Սեւակի գերթադուքեան երեք դիւանաւոր ըստիններուն միջեւ գտնուող ներքին կապին մասին, կ'անկարկուէր այդ գործերու ելուցողութիւնը: Այսպէս, «Սիրոյ գիրք» բաժնին մէջ էր, որպէս լուսանկարները: Կ'առնուէր զՔառասնի Հեա, որովհետեւ Հակոբապետապետ տրամադրութիւնները թափանցիկ են Հեա: Նման Հակոբապետապետ տրամադրութիւններու, աւելի ընդհանրական մեղով, Հանգիստեան եւ որպէս «Պատկերացման» գրութեան մէջ: Բայց, վտանգաւոր, «Մեծերգ» ինն համարը կարելի է զփառաբանութեան վեցնել եւ «Սիրոյ գիրք» բաժնին մէջ անցընել:

Բայց այս բոլոր տարրերը կը միաձուլուին «Երազագրութեան» ընդհանրութեան նման գործերու մէջ: Եւ Հանգիստեան է այս մէկը, որովհետեւ այդ Հանգիստեան ու յոսկոյնից Ժողովրդական երգիչներու ճակատագրին մէջ կը խառնուին Սեւակի անհամարժեք մզաւորները:

Ինչպէս կը տեսնենք, Թ. Սեւակի գերթադուքեանը, իր այլապատկերման եւ Հարուստ երանգապատկերման ատեն է Հեռանկար տարրեր լարեր, զբաւեռներու տարրեր կացութիւններ: Թ. Սեւակ աստիկ էր ընդհանրութեան միջնակայութեան ստեղծագործութիւններէն սկսեալ մինչեւ իր ժամանակակից նկարագրական գիտականութեան ու անհանգիստը, ինչ որ կարեւոր յատկանիւ է զերթադուքեանը:

Եւ ինչպէս Սեւակ ներկայութեան է յիշեալ զգործերէն, իր բանաստեղծութիւնը ներկայութեան է արեւմտահայ թէ արեւելահայ բանաստեղծներէն շատեր: Սերիան, յաճախ այն ապագայութիւնը կ'ուսնենանք, որ Զարեհի «Միտմանը» (էլուստիֆիլի պէս օղիկ)՝ Աստուածամոր այնքանով (նորմալ)ութեան է Սեւակի լիրիկ երգացման բանաստեղծութեան ճշգրտով աղբիկ հիւսիսային այնքանով տողէն, կամ՝ Ռազմիկ Գաւառի մէջ գիտեմք՝ Երբ... ինչ յիշեր ա՛վ... խորագրեալ եւ նոյն բառերով սկզբնական գործերէն: Երբ ներկայութեան է Թ. Սեւակի «Գաղտնի մարդ» խորագրեալ բանաստեղծութեան, առաջին տողերէն.

Զիմ գիտեր ա՛վ, ինձ գիտեր ա՛ր
Կ'երթայ... Էրբ, երբ ասպետ մը լուս:

Կ'ենթադրենք, որ Հանգիստեան զգործ է ըլլայ, թէ Հարցը ներքինութիւնը պարզապէս է, եւ ոչ՝ ազգայնութիւն: Որովհետեւ Կանթի իրողութիւն է, որ Կանթիստեղծութեան մէջ յաճախ թաւ մը, կամ պատկեր մը, մեկնակէտ կը Հանգիստեան այլ ըստեղծագործութիւններու, յաճախ բնութիւն տարրեր...

Անշուշտ, Թ. Սեւակի գրական փառանքութեան մէջ իրենց յատուկ տեղը ունին իր արժանի էջերը, որոնք զիջաւորաբար կը մէկտեղուին «Երթիկի» գիրքին փրցուած էրք խորագրերին տակ: Ինչպէս Երթիկ է, Թեմաթիկ առումով, այս գործերը որոշ լրջապիտէ մէջ կը լարեն եւ Երթիկային որոշ ընդհանրութեան: Երթիկային մէկտեղած է սակայն Երթիկային մը արժանի այլ գրութիւններ, տարբեր նկարագրեր, որոնք երբեմն Հրապարակագրային, սակայն աշխուժ եւ ուժակոտ ներկայութիւն մը կը յայտնեն: Այս բոլորը, սակայն, Երթիկային անհանգիստութեան կ'ընդգրկուի:

Նման գործերու Հրապարակութեանը, անկարծանքով բերած մեծ նպատակն, միշտ ալ մեծ Հարցական մը կը տեսնենք — Կարելի՞ է գրական գիտականութեան կատարել ստեղծագործութիւններու զգործով, որոնք Հեռանկար մը վերջնական վերջնականութեան կամ զատուցման անցնելով Հատորի մէջ լինանցած, որովհետեւ Հատոր մը տարբեր մեծ կտուտայնաստեղծութիւններ կ'ենթադրուի Հեռանկարին: Թուրքի Սեւակի, իր կարեւորագիտելի, Հանգիստեան իր ընդհանրութեան մէջ Հատոր միայն՝ «Երթիկ» գիրքը Հրապարակած է: Բանաստեղծութեան մեծացած բանաստեղծի մը Երթիկայինը որոշ յատուկ նշանակութիւն ունի, սակայն մասնաւոր մէջ գրուած գործերու, ինչպէս եւ անտիպներու Հանգիստեան ու Հրապարակութեան նուիրական զգացումներ արթնցնելով Հանգիստեան նման Հարցականութեան եւս կ'առթեն:

Այս բոլորը կը ժողովանք սակայն, ներկայիս, Թ. Սեւակի գործերուն Համարեալ ամբողջութիւնը մեր դիմաց կը գտնուի, ուր յատկապէս կ'երեւին Սեւակի բանաստեղծական երգերէն ցայտուն դիմերը, Հեռագրերութիւններուն լայն լրջապիտէ, անհանգիստ եւ անգիտելի միտք եւ, յաճախապէս, մեծ նուիրումը բանաստեղծութեան:

ՅԱՐՈՒԹԻՆ, ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԱՆՅԱՐԺՈՒԹԵԱՆ

ԱՆԵԼ ԹՐԶԱՆԱԿԸ



ՌՈՊԻՐ ՀԱՏՏԵՃԵԱՆ,
«ԱՌԱՄՍԱՂ» (ՎԵԱ),
Իոթանպուլ, 1883, 224 էջ,
Հրատարակութիւն՝ Հ. Բ. Ը. Միւլթեմ
«Ալեք Մանուկեան» Մշակութային Հիմնադրամի

«Առաստաղի վրայ ստառնակ մը տես այժմ
Քոյի կ'առնէ: Թոյի կ'առնէ ու քանի մը
տնկալ կը շրջի օդակայանին վերեւ, կարծես չաւ-
զեղով երաժշտ տանել, հետեան: Ինծի այնպէս
կը թուի նոյնիսկ, որ մէկը թաշկիծակ կը շարժէ
ամուր պատուհաններէն: Յետոյ ստառնակը դարձ-
եալ վայրէջք կ'ընէ ու կը թափ գետին: Այն ու-
տեմ կը նշմարեմ որ ստառնակը ստառնակ չէ,
այլ ճանճ մը: Մէկը՝ ամէնօրեայ իմ ճանճերս:
Գոր հա շփաթեցի ստառնակի մը հետ:
«Ճանճերը անճանապահ կ'ըլլան»: Ճանճերը
անճանապահ չեն ըլլաք:

«Ես գաղաղաբարտեմ եմ ապրելու...» (էջ
224):

Այս հաստատեմ վերջարանն է Բ. Հաստէճեանի
«Առաստաղ» խորագրեալ վէպի առաջին գրք-
ին, աւելի ճիշդ՝ վերջարան-խորհրդանշան, որ
հրահանգողի մը սեփական մէջ անշարժութեան
գաղաղաբարտեմ հերոսը ետ կը բերէ իր սկզբը-
նակէտին՝ առաստաղին, որ տասը տարի է վեր
հրաւիրող եւ շարունակ ծառայող կեանքի ժապա-
ւէնը կու գայ յանգելու ներածականի հարցում-
պատասխանին, «Անճանապահութիւն»... «Ձէ, պահ
մը իսկ չիսրիեցայ այդպիսի արարքի մը մասին»:
«Անճանապահութիւնը րնուրիւս մէջ չկայ: Ան-
ստառնակը անճանապահ չեն ըլլաք» (էջ 8):

Ապրելու կամքէն, վճռակամութենէն ճամբայ
հրած կենքի ժապաւէն մը կը սկսի — վերջ կը
գանձ այսպէսով, հասնելով նոյն կէտին՝ անշար-
ժութեան անկ շրջանակին համարժեք եւ իրիւր-
նման կէտերէն մէկն ու մէկուն: Առաջին անգամ
կով շատ սովորական թուացող այս կէտերը կը
բացուին իրարու, կ'արձագանգեն, աւելի կը դըր-
դորեն սկզբնական կացութիւնը, որ վերջուլեւոր
ճամբով կը նպաստէ իրականութեան շնչադրու-

մին, այլ խոսքով՝ անշարժութեան վիճակներէն
սղբերգութեան շարժումները վերադարձնելու եւ
յստեանը իրենց ծիրին մէջ արձակելու խաղին:

Դիպուածներով, անոնց հետեւեղծներով եւ
վերջուլեւորով թանձրացող սղբերգական կացու-
թիւնները կը հանդիսանան հիմնական այն թիւի-
ւը, որոնք իրենց գոյներով եւ նրբերանդներով
կը հիւսեն կոտալը Բ. Հաստէճեանի «Առաստաղ»
վէպին, որ գրողէտին համար կ'ըլլայ ստեղծա-
գործ առիթ մը՝ կեդրոնանալու գրականութեան եւ
իրականութեան յարաբերութիւններուն եւ անոնց-
մէ բխած յատկանշական հարցադրումներուն վը-
րայ: Կարծես թէ գրողուժը կ'ըլլայ պատրուակ
մը Բ. Հաստէճեանի համար, որպէսզի գեղադի-
տական հնարքներով ընդգծէ ա'յն անսովէտը, թէ
գրականութիւնը հայելին ու անդրադարձն է ի-
րականութեան, աւելի ճիշդ՝ իրականութեան հա-
մապարփակ եւ խտացուած անդրադարձը:

Աւելցնենք նաեւ կարեւոր այլ կէտ մը, —
Բ. Հաստէճեանի իրապաշտութիւնը իրականու-
թիւնը ընդօրինակող կրուորական գործողութիւն
մը չէ, այլ հերքումն է իրականութեան՝ անոր
տարրերէն կազմուած իր վէպին իր կատարող
ուսուցիչական եւ աշխատանքով:

Սփիւռքահայ գրաւէր հասարակութեան իր
հրապարակագրական վաստակով ծանօթ անուն
մըն է Բ. Հաստէճեան, որուն ստեղծագործական
արժանիք ծանօթ է միայն շատ սահմանափակ թի-
ւով ընթերցողներուն:

Հ. Բ. Ը. Միւլթեմի «Ալեք Մանուկեան» գրա-
կան մրցանքի արժանի առաջին պարգէնին արժա-
նացած (1882) եւ տարի մը ետք նոյն հիմնադրա-

ստանան, վէպին վերջին տողերով կը հասնին քաղաքակրթական գործունեութեան, որմէ ծնունդ առած է ո՛չ միայն հերոսը, այլեւ՝ Թ. Հատտէճեանի այս գործը շնչաւորած թուրք գիպսական-գէպֆերն ու հասցութիւնները, բայց մանաւանդ՝ գիպսականութեան տեսլականը՝ ապրիլու զատապարտութեան ըլլալու վերջնական պարտութիւնը: Այսպէսով, մարդկային առօրեայ յարաբերութիւնները լուսարձակի տակ տոնող այս վէպը, որուն էջերուն Թ. Հատտէճեան կը փաստէ իր հերոսներուն հոգիները հարգելու կարողութիւնը, ներքին տեղատուութիւններու եւ մակերթացութիւններու իր հեռերը ապրելէ ետք, կը վերադառնայ մէկնակէտ ու վերջակէտ հանդիսացած նոյն կէտին՝ փակեցրածալու համար «Առաստաղ»-ի երկրորդ գիրքին շարժումը, այլ խոսքով՝ հաստատուելու համար սակզ-ծալորեակուն նոր խաղի մը նախաձեռնելու իր արդար իրաւունքը:

Վերջապէս, Թէ՛ «Առաստաղ»-ը եւ Թէ՛ գրականութիւնը՝ իր ընդհանուր գիծերուն ու հետապնդած նպատակներուն մէջ, նախ եւ առաջ ազնիւ քաղաքացի մըն է Թ. Հատտէճեանին համար (պէտք չէ մոռնալ, որ անոր գործերէն մէկը կը կրէ «Քառալիա» անունը), զնշանակալի պատրուակ մը՝ զրոյններուն իր կնքաւանդներն ու մտածումները բնկերային, հոգեբանական եւ հոգեմտաւոր գաւազան հարցերու եւ իրականութիւններու նկատմամբ:

«Առաստաղ» էջերով ցնթողին հրաժեշտի գեղարուեստական գրաւորութեան ընդգծումը հասարկէն առաջ, հարկ է կանգ առնել լեզուական ու գրականական կարգ մը սայթաքումներու իրողութեան վրայ, որովհետեւ անոնք Թոս Թոքիւրու պէս կը խոցեն լրագրական աշխատութեամբ եւ անպահանջ պարզութեամբ յատկանշուող իր լեզուն: Փաստօրէն, մէկ Մայրենիին համեմունքն եւ բոլորեալ ծանօթ գրադէտը միշտ չէ, որ համապատասխան բնականութեան ապացոյցներ ցոյց կու տայ, երբեմն, որոշ էջերու մէջ, ան իր զբիւն կ'արտօնէ շարահիւսական եւ քերականական այսպիսի վրէպներ, — «Այսպէս եր-

կար դիտեցի զայն, միմեւ որ ճաննը...» (փոխանակ գրելու՝ «Այսպէս երկար գիտեցի թանձր, միմեւ որ անկա...»), «...խօսէ բանալու իր այս կամ այն ձեռնարկը կը ձեռն գիտէ (ըսել է՝ ուղիք)՝ «Եր այս կամ այն փորձը կը նշէ գիտ», «Քառալի» մը նախ, կրնոր վերջացուցած են իրենց գործը (այսինքն՝ «Քառալի»-ն ժամ ետք), «...յարանելով ու անկարելի մը անկարելի դէպքի կամ կարգ», (ճիշդ պիտի ըլլար «Երկ»՝ «անկարելի մը նշանակով իմ կողմէ»), «...այն շրջագծեալները, զոր հանդիսաւոր երջանկութեամբ...» («գարս»), «...անկարարաւոր» մը նման պայթելէ առաջ» («տեղատուութիւն»-ը կը կոչուի), եւ այլն:

Եղբայրացիներու համար աւելցնենք անմիջապէս, որ լրագրական ու գրական լեզուներուն յաջող միաձուլումով՝ Թ. Հատտէճեան կը ստեղծէ իր ինքնուրոյն ոճը, որ կենսական վերջնական դրուագներու եւ գեղարուեստական հնարքներու ներդաշնակ վերականգնումով կը ստեղծէ նոր իրականութիւն մը՝ զեղազիտակամ յարաբերութիւններ:


Այս արդիւնքին հասնելու համար, ան գործի կը լծէ նոյնիսկ պահ մը աւելորդ թուացող լրագրական մտնամտանութիւններ, որոնք ներքին մեկնութեամբ եւ վերլուծութեամբ հետ միահիւսելով՝ աւելի շնչալի գիծերով ու հոսանքներով կ'օժանդակեն հերոսին ապրած ողբերգական կացութիւնները:

Այս ըսել չէ անելու, որ «Առաստաղ»-ը անթիւրի գործ մըն է: Անկասկած, Թ. Հատտէճեանի վերջին գործը լատ բան պիտի լահէր, եթէ ան կայնետր ստեղծել վէպը ծանրաբեռնող իր ընդհանրացումները, զեղարուեստական աւելի պայծառ դիմագիծ տար իր կարգ մը հերոսներուն, առաւել համազօրեականութեամբ օժտել որոշ հնարքներ, իր սահուն լեզուն տառալեզոյն ծառայելէր վէպի կշիռութեամբ աշխատանքին մէջ՝ ապահովելով կենսականութեան եւ հասունութեան աճի որակը, որուն փաստը տուած է արդէն, «Առաստաղ»-ը առհասարակ յաջող էջերով (29-37, 60-76, 89-96, 110-119, 135-159, 193-197, 218-224):

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



**ՊԵՏՐՈՍ ԱԼԱՎԱՅՏՈՅԵԱՆ
ԿԸ ՀՆՁԵՑՆԷ ՀԱՅ ԵՐԳԸ
ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՐԴԷՆ
ՓՐԿԵԼՈՒ ԱՀԱՋԱՆԳԸ**



Հիշանանալի հրաժշտա՜ն հասարակութեան ծանօթ անուն մըն է Պետրոս Ալաւայտոյեան, որ լիբանանահայ մամուլի էջերուն ստորագրած իր հրաժշտական ուսումնասիրութիւններով ու քըն-նադատութիւններով, հոթնամասական թուա-կաններու առաջին տարիներուն մեծապէս նպաստեց գաղութին՝ գլխաւորաբար հրաժշտական եւ առհասարակ գեղարուեստական կեանքի բերեցացման աշխատանքներուն:

Այս գործունէութեան զուգահեռ՝ հրաժշտա-գէտ Պ. Ալաւայտոյեան նաեւ գրողած էր երգա-հաւաքի աշխատանքով, գլխաւորաբար կեդրոնա-նայով Այնճարի, Պէյրութի, Զահլէի եւ Հայաստանի այլ շրջաններու վրայ: Սակայն 1975ին ծայր տը-ւած քաղաքացիական պատերազմին հետեւեցով ան հաստատուեցաւ Պէյրութ, ուր ներկայիս կը պաշտօնավարէ պետական ռադիոկայանին մէջ:

Վերջերս, Փարիզի գիւմէն օրաթերթի թղթա-կէքներէն Սիրվադէ Սապունճեան ընդարձակ տե-սագրութիւն մը ունեցած էր Պ. Ալաւայտոյեանի հետ, որմէ քաղաքացիական պատերազմի տեղե-կութիւններ:

1985ին, Եղեռնի 70ամեակին, Կոմիտասի մահ-ւան 50ամեակին եւ Կանաչեանի ծննդեան 100ամե-ակին առիթով, ան բաց արձակուրդ առած է Պեյ-րութի ռատիոկայանէն եւ լրուած՝ Արեւմտեան Հայաստանի բանահիւսական եւ ազգագրական նըշ-խարները հաւաքելու աշխատանքին:

Հայրենի բնակիւր՝ին մէջ Կոմիտասի կատա-րած այս գործին շարունակածը բախած է որոշ գծաւարտութիւններու, որովհետեւ Եղեռնէն ճո-ղադրած ծերունիներու մօտէն ու հողին մէջ, ստիճաններ, ընթացքին լուսիեան զատաւարտուե-լով՝ այդ երգերը սկսած են կամաց-կամաց մոռ-ցւել, անոնց տրուած մահացու հարուածին հե-տեւանքով:

Այս կորուստին մասին խոսելով, Պ. Ալաւայ-տոյեան կ'ըսէ, թէ այն օրէն սկսեալ, երբ հայը զինու զօրութեամբ հեռացուեցաւ իր պապեանական հողէն, երբ զաղբեցաւ աշխատանքը հայ հողին

վրայ եւ լուծը եւ հրազը խուռեցան հայ շինկա-

նէն՝ զան այնիս պատճառ չունեցաւ երգելու. երգ ստեղծելու քննադատը չէացաւ. մեր ժողովրդա-կան երգի ակունքը չարցաւ: Եւ հիմա կը բանա՜մ որ գոմէ եղածը չկորուսի: Մեր պագիրը տարած են, երգած, սիրած եւ տառապած՝ յոռաբարտած արտայայտութեանք մը, անոր վկայութիւնը կ'ու-զեմ արձանագրել հիմա: Հայ ժողովուրդը, հոր-հորդային Հայաստանէն դուրս, երբէ՛ք բռնաբղ դա-րէ ի վեր պէտք չէ անեցած այս երգերը երգե-լու: Քաղաքներու կեանքը եւ բարեքը անորմը են, ուստի՝ հոնկէ ծնած երաժշտութիւնն ալ տա-րնք է:

Ջարդը կը շարունակուի տարբեր ձեւերով եւ զայս օրերուն, մեր հաւաքական յիշողութեան շար-քը տեղի կ'առնեայ, իրրու արդիւնք քաղքին գործադրած ֆիզիկական սպանդին՝ ահագնեցը հնչեցնելով՝ Պ. Ալաւայտոյեան արդարագործին զիտել կու տայ, որ քանի մը տարին արդէն շատ ուշ պիտի ըլլայ: Հետեւաբար, պէտք է շատ արագ շարժինք եւ ծրարուած ձեւով հաւաքենք անհետ կորսուելու վտանգին ենթակայ մեր մշա-կան հորատելու վտանգին հետեւին, — պատասխանելու, կու թային զարաւոր գոհմանը, — անորմը անակներ, անաններ, պատմութեանք, մանրագէ-տներ, հանճարներ, սովորոյթներ, հայրենի պեր, հանճարներ, անորմը:

Այս աշխատանքին մշակութային, ազգագրա-կան եւ ետեւ քաղաքական նպատակներուն անդրադարձաւով՝ Պ. Ալաւայտոյեան կը նշէ հե-տադիւրանի հետեւեալ կէտերը.

«Եւ վկայութիւն մը՝ Հայ Դատին ի ճգնաւոր-նաւաճած հայ ժողովուրդին ինքնաբերական տեղ-նագործութիւնն է, անոր անօրինակ հարաւորութեան պատկերը:

«Եւ վկայութիւն մը՝ հայ նրաժշտութեան ի ճգնաւոր-նաւաճած հայ ժողովուրդին ինքնաբերական տեղ-նագործութիւնն է, անոր անօրինակ հարաւորութեան պատկերը:

«Եւ վկայութիւն մը՝ հայ նրաժշտութեան ի ճգնաւոր-նաւաճած հայ ժողովուրդին ինքնաբերական տեղ-նագործութիւնն է, անոր անօրինակ հարաւորութեան պատկերը:

«Եւ վկայութիւն մը՝ հայ նրաժշտութեան ի ճգնաւոր-նաւաճած հայ ժողովուրդին ինքնաբերական տեղ-նագործութիւնն է, անոր անօրինակ հարաւորութեան պատկերը:

առաջին փուլը պետի ըլլայ երկու երգացանկ, առաջինը արամայական յատկանշական, ամբողջական եւ վաներական երգերով, իսկ երկրորդը՝ երիտասարդ ճայմերով, որով պետի ուզեմ փառսել, բէ հակառակ զաղբայտարիւն, ակումբային իմաստով օժտուած երգիչ-երգչուհիներ ունինք»:

Այսպէս, իր լսած բոլոր երգերը ձանադրիչ մէքենային վրայ արձանագրելէ հաջ, Պ. Ալաւայտյանն իր ազէ նուագողներ մէկ այլ կրկնութիւն, կ'արձանագրէ երգիչին անունը, թուականը, վայրը, տարիքը եւ այլ ժանրամանութիւններ, որովհետեւ իմէ նշանակաւ ամբողջութեամբ զտուել օգրելէ, անոնք ապահով մնան: Այս տարբերիչն, զոր գործն հասնի իր լրումին (այս գործը երբեք չի լրանար), — կ'աւելցնէ ան, — իր ծրարքով բուն ճայմերիկները վստահիլ Մեհչուեցիք զձրեանն իմմարկիմ, իսկ անոնց օրինակները ալ Ամբիլիաի կարգիկներունմիմ եւ երկուսն Մտտեմադարմիմ, ուր իր կարծիւմ, թէ մեծ հետաքրքրութեամբ պիտի ընկուելին քանի մը կտորներն:

Ինչ կը վերաբերի զժուարութիւններուն, Պ. Ալաւայտյանն կը նշէ արտաքին եւ ներքին զգուարութիւններ, Արտաքին հիմնական զգուարութիւնը ա'յն է, որ կը գործէ աստեմիմ, ասանց օգնականի, պոսի հանելով ամբողջ խմբակի մը աշխատանքը: Ասոր վրայ կ'աւելցնայ Նիթական զգուարութիւնը, հակառակ անոր, որ կարգ մը անհանգիստ նիթական եւ բարոյական օգնած են իրեն: Իսկ ներքին զգուարութեան զլիստը կէտը յիշողութեան դատահանութիւնն է, որուն հետեւանով պէտք է մէկէ աւելի այցելութիւններ ալ ծերերուն, յիշեցնել բառեր, նախադասութիւններ, երգեր, ունկնդրել ալ այլ ծերերին: Բուն երգաները, որովհետեւ անոնք ստիպուած են 70 տարի տ երթալ՝ իրենց յիշողութիւնը կարծես զրգուելու համար:

Շարունակելով, Պ. Ալաւայտյանն կ'աւելցրենք, թէ իր հանդիպած անձերուն միայն 2 տ հարիւր տուածը հասկած է, թէ զաւառական անասալ երգ ըսելով ինչ կը փնտռէ: Ինչ կը վերաբերի ցարդ անձանքի ալ զանգերուն, ան կ'ըսէ, թէ ցարդ կորուստէ վրկուած երգերը կայելի է ամփոփել 3-4 ժամանց ձայներիկներու վրայ: Վննմի աղագրական այնպիսի՝ երգեր են, որոնց հետեւտու կամ Հայաստանի երգանաւմները հաւանաբար չեն հանդիպած. ամենակատարեալ եւ իրերի զացած երգեր են ամենք, երգուած 5-6 հոգիի կողմէ: Երբեք կարծես կը տպաւորեն, որ ինքի տկուկը մերկայանար իրենց: Անոնցմէ մէկը, հաշիկ Ներսէսեան, երգեց 9 յլուած երգեր: Ան ի միջի այլոց ըսաւ, որ 70 տարիէ ի վեր ամէն օր երգած է այս երգերը, որպէս ի չմոռայ...»:

Պրանայի տարածքին այս աշխատանքը աւարտելէ հաջ, Պ. Ալաւայտյանն մտադրած է զայն շարունակել Հոս Անճելուի, Մուրիոյ եւ Յունաստանի մէջ, սակայն քաղաքական կառութեանց ծանօթ պատճառներով առ այժմ զանց չբաժնէ իր:

Բանանն ու Իրանը, որոնք ներդրաբար իր կեդրոնները պիտի ըլլային:

Ինչ կը վերաբերի Միւլուրի մէջ իմէ առաջ եւ Հայաստանի տարածքին ներկայիս նման աշխատանքի նուիրուած երաժշտականներուն, Պ. Ալաւայտյանն բարձր կը դնահատէ դարասկիզբին հրատարակուած երգերուն զանաւանայ հասց ժողովրդական երգերուն, Քրանահայ Աւետիս Մեհումեցի հաւաքած Շապին Գարահոսարի եւ Ուրֆայի երգերը: Նիւ Եւրոք չըմանին մէջ Միւլան Քուսանանի հաւաքած մեծաթիւ երգերը, իսկ Հայաստանի մէջ, Վիկունք անուն ասկէ Հայրիկ Մուրադեանի, Էմմա Մաուրեանի եւ ուրիշներու կատարած կարեւոր գործը, որուն շնորհիւ կը փրկուի արեւմտահայութեան երգարանը՝ ամբողջ Հայաստանի տարածքին եւ չըմանաւ չըման աղագրական երգերու հետեւողական հաւաքումով:

ԳԵՈՐԳ ՊՈՒՐԱԿԱՆԻ ՁԱՅՆԱՊԵԱԿԸ



Վերջերս, Սան Ֆրանսիսքոյի Համալսարանի մէջ զանաւանդ զանաւանդ զանաւանդ զանաւանդ Հայաստանի երգերու փունջը, որուն մեկնաբանութեան իր ժանակցութիւնը բնական է Սան Ֆրանսիսքոյի փողային նուագարանը:

Երգչախմբային յարգելի վաստակի մը տէր Գ. Պուրսեանն իր երաժշտական կրթութիւնը ստա-

ցած է Պէյրուսի եւ Պոսթընի զննելիքներն եւ ռաժշտանոցներէն, իսկ անոր հայու հոգին մշակւած ու հասունացած է Անթիլիոսի դպրեմանքին մէջ:

Ջախնապետիկը կը բովանդակէ ժողովրդական եւ ազգայնաշունչ 12 երգեր, որոնք ներկայացուած ու ձայնագրուած են բնականութեամբ եւ ճշգրտութեամբ: Երգացանկը այլապէս է: Անոր մէջ տեղ ունենան են սիրուած ու փնտռուած երգեր, ինչպէս՝ «Բարի արագիւն», «Հայոց կանայք», «Հայրենիքս հետ», «Իմ Հայաստան», «Արփա Սեւան», «Սար-դարապետ» եւ «Լեռնիք հայրենի»: Երգերը դաշնակերպած է ծանօթ երաժիշտ Էրլ Ջինտարչեան, որ Նորթուեսթըրն համալսարանէն շրջանաւարտ ըլլալէ ետք, յորինումի եւ գոշնակութեամբ իր մասնագիտութիւնը ստացած է Օքսֆորտ եւ Պոլոմպիա համալսարաններուն մէջ:



«ՆԱԻԸ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ»

ՅՐԱՆՍԵՐԵՆՈՎ

Editions du Seuil Փրանսական հրատարակչատունէն վերջերս լոյս տեսած է Կոստան Զարեանի շնորհ յերան վրայ՝ վեպը, թարգմանութեամբ Փիլեա Տէր Սուրգիսեանի: Թարգմանիչը հեղինակը երկար տարիներ աշխատած է լրագրական ասպարէզին մէջ, յաջորդապէս կենդանանաւորվ թարգմանչական աշխատանքներու վրայ:

«Բազմիմաստ ընթերցողներուն ծանօթ շնաւորքով վրայ» ստուարամասշտակ հատորը առաջին անգամ լոյս տեսաւ «Հայրենիք» ընկերակցութեանէն՝ 1943ին, իսկ 1963ին երեւանի մէջ լոյս տեսաւ անոր ժառրկալիւծած տարբերակը:

1961-68 տարիներուն, մեր աշխատակիցներէն Արա Պալեոզեանի անխնայ ջանքերուն շնորհիւ՝ անգլիէնով յաջողաբար լոյս տեսան Կ. Զարեանի «Անցարդը եւ իր նամբան» (1961), «Բանկոտ» (1962) եւ «Մարտի խնկարները» (1962), «Մի մարտի եւ մի կղզի» (1963) անուն գործերը:

ՀԵՅՔԸՍՓԻՐԻ ԹԱՏԵՐԱՆԱԳԵՐԸ՝ ՉԻՆԱԿԱՆ ԲԵՄԻՆ ՎՐԱՅ

Ձիւական Մշակութային Յնդակոթիութենէն ի վեր առաջին անգամ ըլլալով, Ձիւաստանի մայրաքաղաքին՝ Փնքիի մէջ վերջերս տեղի ունեցած է թատերական փառատուն մը, նուիրուած՝ Ուիլիամ Շէքսպիրի թատերախաղերուն:

Աւելի քան 15 օր տեսած այս փառատունն իրենց մասնակցութիւնը բերած են 63 արհեստավարժ թատերախաղի, որոնք չինարիէնով ներկայացուցած են «Համլէթ», «Մակբէթ», «Օթելլո»,

«Արթուր Լիր», «Միլեմառնայիմ գիշերուայ երգը» անուն թատերախաղերը եւ այլ գործեր:

Ներկայացումները դիտած են տասնեակ հազարաւոր չիներ, որոնք բարձր գնահատած են անմահանուն թատերադիրին բեմ բարձրացուած գործերը: Փառատունի ընթացքին հանդիսութեան ներկայ գտնուած է Փնքիի մօտ Մենն Բրիտանիոյ դեսպան Ռիչըրտ Իվընզը, որ մամլոյ ներկայացուցիչներուն յայտնած է իր անհուն երախտագիտութիւնն ու գնահատանքը՝ ինչ եւ անգլիական մշակութային կապերու սերտացման նպատակով առնուած այս կարեւոր քայլին առիթով:

ԿՐԱՀԱՄ ԿՐԻՆ

ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹ

ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՀՔԱՆՀԱՆՈՎ

Անգլիացի հանրածանօթ վեպագիր Կրահամ Կրին վերջերս պարզաւարուած է թաղաքական արժանեաց չքանչանով, որ ջարդ տրուած է անհաւթի անգլիացիներուն, ու ի գնահատանք իր գրական եւ մշակութային ընդամենայ բեղուն գործունէութեան:

Մենն Բրիտանիոյ կառավարութեան կողմէ իրեն շնորհուած այս չքանչանք Կրահամ Կրին ըստացած է յատուկ անդիսութեան մը ընթացքին, որ տեղի ունեցած է Պրանսայի Հարաւային քաղաքինէն Անթիլի մէջ, ուր Կրահամ Կրին կ'ազդէր տարիներ ի վեր, գեղատեսիլ բնակարանի մը մէջ:

Նուպէլեան գրական մրցանակի մնացուն թեկնածուներէն մէկը անդիսաւոր Կրահամ Կրին, իր այս ընտրութեան մասին անդադառնալով՝ քսած է, թէ ծրարած ընտրած է իրեն բնակավայրէն, որովհետեւ անիկա մեծ գոհացում կու տայ իր մշակութային եւ հոգեկան պահանջներուն, հետ-

դիտանալով մշակողը, արուեստագետներն ու մասնագետները բարձր զննատող եւ իր այս աւանդով ծանօթ Եւրոպայի ամէնէն սպնական երկիրը:

ՁԵՌԱԳԻՐՆԵՐՈՒ ՊԱՆԵՍԸ ԿԸ ՀԱՐՍՍԱՆԱՅ

Երեւանի Մշտոցի անուան Մատենադարանը կը շարունակէ հարստանալ Նորանոր ձեռագիրներով, որոնց պատի մասը կու գայ արտասահմանեան ատրքեր երկիրներէ, Սփիւռքի մէջ ապրող հայերէ:

Վերջերս, Հալէպ քաղաքէն Մատենադարանը ստացած է 180 տարի առաջ պատրաստուած հայերէն հմայիլ մը, որ մինչ այդ մէն խնամքով իր քով պահած է հալէպական մանկավարժ Տիգրան Փէշիւան, որուն մահէն ետք, աւեր հարստաները զայն ստացած են Հայաստան ու յանձնած Մատենադարանին:

Հմայիլը լուս. վերահի մէջ պահուած է: Ունի երեք մեթր երկարութիւն, հաշակով զարդարւած ու մանրանկարներով ամրոջւցած է:

Ամրոջութեամբ պահուած յիշատակարանէն կը տեղեկացուի, թէ գրուած է ձի մամախկն Տէր Կիրակոսիմ... քնն հովանաւ Սրբոց (40) Մանկանց, որ ի Գերմանիկ (Գերմանիկէ՝ Մարաշ):



կարդ մը երեւանի քաղաք անձնօթ կը մնան նոյնիսկ այս դրողէտին գործերը ուսումնասիրած դրականագէտներուն եւ մասնորականներուն:

Հրատարակչական գործունէութեան զուգահեռ՝ պիտի պատրաստուին ձայնագիրներ եւ պատկերասփիւռ յատուկ յայտագիրներ, իսկ մեծածառն գրողէտին ճանաչու աղան, գիւղիմ զրայցները, Վիւմբեր եւ պատմութիւնները, գրաւագներ եւ հսկաները տնուն արմաղ սահղագործութիւնները պիտի վերածուին պատկերասփիւռ շարքերու:

Անդգնական մակարդակի վրայ՝ պիտի գուժարուի յատուկ համագործակցութիւն մը, որուն իրենց մասնակցութիւնը բերող գրականագէտներն ու մասնագետները պիտի ուսումնասիրեն Մ. Աղպուտի գրականութեան զանազան երեւոյթները:

Համալսարանական, մշակութային եւ գրական զանազան հաստատութիւնները եւ հիմնարկները գործած մասնակցութեամբ տեղի ունենալիք այս հանդիսութիւնները վերջ պիտի դառնան Վարդան Աղպուտի օրով, յարեւաք գրագէտին ծննդավայրին՝ Այն Պֆան գիւղին մէջ, ուր պիտի ցուցադրուին հեղինակին գործերէն ներշնչուած թատերախաղ մը եւ պատաստներ, ապա պիտի դրուի Վարդան Աղպուտի մշակութային կեդրոնին հիմնադրը:

ՄԱՐՈՒՆ ԱՊՊՈՒՏԻ ԾՆՆԴԵԱՆ 100ԱՄԵԱԿԸ

Իրանահեռ եւ արաբական արդի արձակի հիմնագիրներէն Մարուն Աղպուտի ծննդեան 100-ամեակին առթիւ, Վարդան Աղպուտի Հաստատութեան ընդհանուր քարտուղարը՝ զատախաղ Նեոթի Աղպուտ, մամլոյ տուլիսի մը ընթացքին, իրանահեռ մամուլի ներկայացուցիչներուն փոխանցեց 100ամեակի ձեռնարկներուն տարողական յայտագիրը, որ պիտի սկսի ընթացիկ Մայիսին եւ պիտի երկարի ամրոջլ տարուան վերջ:

Իրանացի այս բողմալաւապ գրագէտին գրական ու հրապարակադրական բեղուն գործունէութիւնն ու ժառանգութիւնը լաւագոյնս մեծարելու նախաձեռնագրութեամբ, վերոյիշեալ հաստատութիւնը առաջին հերթին լայն պիտի ընծայէ Մ. Աղպուտի ամրոջլական երկերը, որուն

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԴՐՕՇԱԿ

ՕՐԳԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

1905, 1906, 1907

ՏԱՐԻՆԵՐՈՒ ՎԵՐՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ


- Անձնանուններու, տեղանուններու եւ հաւաքական
անուններու ցանկերով,
- Վերլուծական բովանդակութեամբ

692 մեծադիր էջ, լաւորակ թուղթ, գեղակապմ

Համալգայինի Վահէ Սէրբան տպարան, Պէյրութ 1986:

digitised by

A.R.A.R.



ԼԻՐԱՆԱՆ

Հատալագառ 20 Լ. Ռ.

Տարեկան բաժնեգին 200 Լ. Ռ.

ՍՈՒՐԻԱ

Հատալագառ 20 Ս. Ռ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին • 40 Ամերիկեան տոլար

بَاكِينُ

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
المدير المسؤول
السيد ارثين كارنيك قزنجيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԿԻՆ

ԱՄԱՍԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր
ՊՕԼՈՍ ՄՆԱԳԵԱՆ

Խմբագրության անդամներ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վարչական պատասխանատու
Ս. ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

B.P. 11-8404 - Beyrouth - Liban
Tel. 296898

نيسان ١٩٨٦

digitised by A.R.A.R.@